

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

(Տեսությունների վերլուծություն)

Ուսումնամեթոդական ձեռնարկ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2010

ՀՏԴ 159.9 (07)
ԳՄԴ 88 ց7
Ո 810

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի խորհուրդը*

Գրախոսներ՝ հ.գ.դ., պրոֆ. Զ. Մ. Ավանեսյան
հ.գ.թ., դոց. Վ. Ռ. Պապոյան

Ո-810 «Որոշման ընդունման հոգեբանություն» (Տեսությունների վերլուծություն). Ուսումնասնեթողական ձեռնարկ: Պատասխանատու խմբագիր՝ Դ.Ռ. Հայրապետյան. Եր.: ԵՊՀ հրատ., 2010. 90 էջ:

Ձեռնարկում ընդգրկված են որոշման ընդունման հոգեբանական ուսումնասիրման հինգ դասական հեղինակների աշխատանքների վերլուծությունները: Ձեռնարկը նախատեսված է որոշման ընդունման հոգեբանության ոլորտում աշխատող պրակտիկ հոգեբանների և հետազոտողների, «Որոշման ընդունման հոգեբանություն» մագիստրոսական դասընթացը յուրացնող ուսանողների, ինչպես նաև տվյալ հիմնախնդիրներով հետաքրքրվող անձանց լայն շրջանակի համար:

ՀՏԴ 159.9 (07)
ԳՄԴ 88 ց7

ISBN 978-5-8084-1254-5

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.

© Հեղ. կոլեկտիվ, 2010 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	4
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	6
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՊՈՒՆՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ	8
<i>ՀԵՐԲԵՐՏ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՅՄՈՆ</i>	27
ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՈԱՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՊՈՒՆՈՒՄԸ	29
<i>ԴԱՆԻԵԼ ԿԱՆԵՄԱՆ</i>	39
ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՊՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ	41
<i>ՊԱՌԼ ՍԼՈԿԻԿ</i>	53
ՌԻՍԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ, ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՊՈՒՆՈՒՄԸ	54
<i>ԱՆԱՏՈՒԻ ԿԱՐՊՈԿ</i>	68
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՊՈՒՆՈՒՄԸ ՀՈԳԵԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	70
<i>ՏԱՏՅԱՆԱ ԿՈՐՆԻԼՈԿԱ</i>	80
ՀՈԳԵԿԱՆԻ ԴԻՆԱՄԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՊՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	81

ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից ավելի ու ավելի բարդացող աշխարհում, որը մարդուց պահանջում է նոր մտածողություն, ինտելեկտուալ-անձնային ներուժի տարբեր կողմերի ակտուալացում, որոշման ընդունման պրակտիկայում անորոշության իրավիճակում որոշումներ կայացնելու, ընտրությունների՝ այդ թվում ռացիոնալ կանխատեսման չենթարկվող, հետևանքները վերլուծելու, կոնկրետ իրավիճակում բարդ ցանցային և դինամիկ փոփոխությունները հաշվառելու անհրաժեշտությունը առաջին պլան է մղվում:

Սույն ձեռնարկը նվիրված է որոշման ընդունման հոգեբանությանը՝ ուղղություն, որն առաջ է եկել կոգնիտիվ և սոցիալական հոգեբանության խաչմերուկում և իր գործնական մարմնավորումն է գտել կառավարման հոգեբանությունում:

Կազմողները մատչելի ձևով վերլուծում են այս հիմնախնդրի տեսական և գործնական մոտեցումները, որոշման ընդունման տարբեր մոդելների յուրահատկությունները, զնահատման, ընտրության և որոշման ընդունման սոցիալական կողմը, կառավարչական որոշումներում ռիսկի տիպային իրավիճակները և բաղադրիչները: Վերլուծական մյուսը ներկայացված է գրագետ և մատչելի հայերեն լեզվով:

Ժամանակակից գիտական գրականությունում հիմնականում քննարկվում են որոշման ընդունման հիմնախնդրի առանձին կողմեր՝ ինտուիտիվ կանխատեսումների առանձնահատկությունները, հոգեբանական մոդելները, կանխատեսման գործընթացային և անձնային-դրդապատճառային կողմերի փոխհարաբերությունները և այլն:

Հոգեբանության այս ոլորտի դասականների կենսագրականների և աշխատությունների ժամանակագրական վերլուծությունը ընթերցողին կօգնի հասկանալ որոշման ընդունման և զնահատման գործընթացի ձևավորման մեխանիզմը, որն էլ իր հերթին կնպաստի խուսափել այդ ճանապարհին հանդիպող բազմաթիվ սխալներից և թակարդներից:

Մեծ նշանակություն ունի տարբեր տեսակի կառավարչական որոշումների, նրանց կազմակերպման տարբեր մակարդակների և որոշման ընդունման մասնակիցների կողմից կատարվող դերերի

առանձնացումը: Ղեկավարների կայացրած որոշումները, երբ սկսում են իրականացվել, դառնում են կառավարող ազդեցություններ՝ անկախ նրանց մասնագիտական ուղղվածությունից: Այսպիսով կառավարող ազդեցությունները դառնում են կառավարչական որոշումների իրագործման էությունը: Այս գործընթացը ընդգրկում է տարբեր տարրեր, սակայն նրանում անպայմանորեն ընդգրկված են այնպիսիք, ինչպիսիք են հիմնախնդիրները, նպատակները, այլընտրանքները և որոշումները:

Մենեջմենթի ժամանակակից տեխնոլոգիան կառավարչական որոշումը դիտարկում է որպես երեք փուլից կազմված գործընթաց՝ որոշման նախապատրաստում, որոշման ընդունում, որոշման իրագործում: Այսպիսով, կառավարչական որոշումները միշտ կապված են կազմակերպությունում փոփոխությունների հետ, նրանց նախաձեռնողը սովորաբար հանդես է գալիս ղեկավարը կամ համապատասխան մարմինը, որը ամբողջական պատասխանատվություն է կրում իրագործվող որոշումների համար: Կոմպետենտության սահմանները հստակ ձևակերպված են ֆորմալ կառուցվածքի պահանջներում:

Որոշման ընդունման հոգեբանական բաղադրիչին նվիրված ռուսական և արևմտյան հոգեբանների աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ հիմնախնդիրը չի սահմանափակվում գիտելիքի առանձին ոլորտներով, որի մասին էլ վկայում են տվյալ ձեռնարկում ներկայացված գիտնականների կենսագրությունները:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ որոշման ընդունումը ցանկացած կառավարչական գործունեության կարևորագույն, իսկ մեծամասամբ նաև հիմնական բաղադրիչն է: Կարևոր որոշումների ընդունման պատասխանատվությունը ժանր բարոյական բեռ է, որը մշտապես առկա է կառավարման բոլոր մակարդակներում և հատկապես դրա բարձր օղակներում: Դրա համար էլ ղեկավարը, որպես կանոն, չի կարող ընդունել չմտածված որոշումներ: Սա էլ հենց պայմանավորում է այս ձեռնարկում քննարկվող հիմնախնդրի գիտական արդիականությունը:

***Հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Յ.Ս. Ավանեսյան***

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Որոշման ընդունման առաջին փորձարարական ուսումնասիրությունները սկսվել են դեռևս նախորդ դարասկզբին և մեկ դարի ընթացքում համաշխարհային գիտական հանրությունը հրատարակել է տասնյակ հիմնարար գիտական աշխատություններ և շնորհել վեց նոբելյան մրցանակ այս ոլորտում կատարված առավել հեղափոխական հայտնագործություններ կատարած գիտնականներին:

Չնայած այս ամենին հայ գիտական հանրությունը գիտության տարբեր ոլորտներում անտարբեր է մնում այս արդիական հիմնախնդրի ուսումնասիրման հանդեպ: Թեև առարկան դասավանդվում է և մաթեմատիկական, և տնտեսագիտական և հոգեբանական տարբեր մագիստրոսական մասնագիտացումներում, այնուամենայնիվ մենք ոչ միայն չենք գտնում հայկական հետազոտություններ, այլև հայերեն լեզվով տպագրված աշխատություններ: Սա հատկապես նկատելի է հոգեբանության ոլորտում:

Սրանով պայմանավորվեց որոշման ընդունման խնդրով զբաղվող համաշխարհային մեծության գիտնականների տեսությունների վերլուծական այս ձեռնարկի հրատարակումը: Ձեռնարկի հրատարակման միտքը ծնվեց Երևանի պետական համալսարանի «Կառավարման և կազմակերպչական հոգեբանություն» մագիստրոսական ծրագրի «Որոշման ընդունման հոգեբանություն» առարկայի դասավանդման ընթացքում, իսկ վերլուծական հոդվածները պատրաստեցին 2008-09թթ. ուսումնական տարվա մագիստրոսական թղարկման ուսանողները:

Պատահական չէր նաև ձեռնարկում ընդգրկված հեղինակների ընտրությունը: Հիմնական նպատակ ունենալով հայ ընթերցողին ծանոթացնել որոշման ընդունման բուն հոգեբանական հետազոտություններին՝ ընտրվեցին ինչպես ամերիկյան, այնպես էլ ռուս հեղինակներ՝ ընդ որում ընդգրկված հինգ հեղինակներից չորսը մեր ժամանակակիցներն են և շարունակում են իրենց տեսությունների զարգացումը նաև մեր օրերում: Բոլոր հեղինակներն էլ արժանացել են պետական մրցանակների, իսկ երկուսը իրենց կատարած նշանակալի գիտական ներդրման համար՝ հեղինակավոր Նոբելյան մրցանակին:

Ձեռնարկը սկսվում է որոշման ընդունման տեսության զարգացման մեթոդաբանական հիմնահարցերը քննարկող հոդվածով, որը ընթերցողին հնարավորություն կտա ամփոփ կերպով ծանոթանալ այս ոլորտում կատարված հետազոտությունների հիմնարկային և առավել արդիական հիմնախնդիրներին:

Հուսով եմ՝ ձեռնարկը հետաքրքրություն կառաջացնի ինչպես հոգեբան-հետազոտողների և ուսանողների, այնպես էլ լայն ընթերցողական շրջանակում՝ նոր կարող ուժեր ներգրավելով որոշման ընդունման հոգեբանության ոլորտ:

***Հոգեբանական գիությունների թեկնածու
Դ. Ռ. Հայրապետյան***

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՈՒՆԿԱՐՈՒՄ

Դ.Դ. Հայրապետյան

Որոշման ընդունման տեսությունը գիտական հետազոտությունների ոլորտ է, որն ընդգրկում է մաթեմատիկայի, վիճակագրության, տնտեսագիտության, մենեջմենթի և հոգեբանության հասկացություններ ու մեթոդներ, ուսումնասիրում է մարդկանց կողմից տարբեր խնդիրների լուծումների ընտրության օրինաչափությունները, ինչպես նաև առավել արդյունավետ որոշումների որոնման միջոցները: Որոշման ընդունման գործընթացի հոգեբանական հիմնահարցերի հասկացման համար կարևոր է նրա ուսումնասիրումը բաժանել երկու պայմանական ոլորտի՝ ոչ հոգեբանական և բուն հոգեբանական: Եվ հենց մաթեմատիկայի ու տնտեսագիտության ոլորտում կատարված աշխատանքները մեզ համար հիմքեր են ստեղծում առավել լավ հասկանալու և մեկնաբանելու առանցքային հոգեբանական մեթոդաբանական հիմնահարցեր: Առաջին անգամ որոշման ընդունման առանձնահատկությունները սկսեցին ուսումնասիրվել մաթեմատիկոսների կողմից դեռևս մի քանի դար առաջ, և նույնիսկ առաջացել են որոշման ընդունման հատուկ տեսություններ, այնպիսին ինչպիսին խաղերի տեսությունն է: Առօրյա կյանքում, տնտեսական ու քաղաքական հարաբերություններում նույնպես մեծ էր որոշման ընդունման ուսումնասիրությունների պահանջը, և հայտնաբերված օրինաչափությունները արագորեն ներմուծվում էին գործնական ոլորտ: Իսկ այդպիսիք շատ էին հատկապես տնտեսական համակարգերում՝ բանկային ոլորտ, ֆոնդային բորսա և այլն: Սրանով պայմանավորվեց նաև տնտեսագիտության տեսության և փորձարարական տնտեսագիտության առողջ հետաքրքրությունը դեպի որոշման ընդունման օրինաչափությունների գործնական հետազոտում: Համաշխարհային գիտական հանրությունը ևս սկսեց կարևորել որոշման ընդունման գործընթացների գիտական ուսումնասիրումը և դա է վկայում նաև Տնտեսագիտության ոլորտում 40 տարվա պատմության ունեցող Նոբելյան մրցանակաբաշխության պատմությունը, որի ընթացքում վեցը տարի տասը գիտնականներ արժանացել են այդ հեղինակավոր մրցա-

նակին հենց որոշման ընդունման ոլորտում հետազոտություններ կատարելու համար: Առաջինը 1978թ.-ին Յերբերտ Սայմոնն էր՝ տնտեսական կազմակերպությունների սահմաններում որոշման ընդունման գործընթացի նորարարական հետազոտման համար, որից հետո 1986թ.-ին Ջեյմս Բյուքենոնը, 1988թ.-ին Մորիս Ալլեն, 1994թ.-ին Ջոն Խարսանին, Ջոն Նեշը և Ռայմխարդ Ջելտենը, 2002թ.-ին Դանիել Կանեմանը և Վերնոն Սմիթը և վերջապես 2005թ.-ին Ռոբերտ Ումանը և Թոմաս Շելլինգը [25,26,38,41,45]:

Պարզաբանենք, թե որո՞նք են այն հիմնական հասկացությունները, որոնք արդեն մի քանի դար է, ինչ գտնվում են գիտնականների ուսումնասիրության կենտրոնում:

Որոշման ընդունման տեսությունը, ծնունդ առնելով մաթեմատիկայի և վիճակագրական կանխատեսման ոլորտում և ապա զարգանալով տնտեսագիտական հետազոտություններում, հավաստում է, որ կանխատեսումը և պլանավորումը էությանը նույնն են. նրանց համար կիրառվում են պատկերների ճանաչման նույն ալգորիթմերը: Սակայն ստույգ վիճակագրական կանխատեսումներ կատարելու համար պետք է կարողանալ վերլուծել ապագայի դեպքերից կազմված ընտրանքները, որն, ըստ էության, անհնար է իրականացնել: Այս պատճառով էլ շատ մասնագետներ սկսում են ներկայի կամ էլ անցյալի դեպքերի ընտրանքը ապագայի դեպքերի ընտրանքին համարժեք համարել: Սա էլ նշանակում է, որ որոշման ընդունումը և հավանական կանխատեսումը միայն և միայն անցյալի փորձի վերլուծությունն է: Սրանով իսկ համակարգը, ըստ էության, մնում է անկանխատեսելի, իսկ որոշման ընդունման գործընթացների պլանավորումը հավանականության վրա հենված [22,30,35]:

Պատահական չէ Ջ.Ս. Քեյսի արտահայտությունը. «Մենք չպետք է եզրակացնենք, որ ամեն ինչ կախված է իռացիոնալ հոգեբանությունից: Մենք միայն հիշեցնում ենք, որ մարդկային որոշումները, ինչպես անձնային, այնպես էլ տնտեսական, որոնք ազդում են ապագայի վրա, չեն կարող կախված լինել ճշգրիտ մաթեմատիկական սպասումներից, քանի որ այդպիսի հաշվարկների անցկացման հիմքեր պարզապես գոյություն չունեն»: «Որոշման ընդունման տեսություն» տերմինը 1950թ.-ին առաջարկել է է. Լեմանը, սակայն դեռևս 1947թ.-ին Յ. Սայմոնը իր «Ադմինիստրատիվ վարք» աշխատության

տությունում արդեն փորձել էր տալ որոշման ընդունման գործընթացների համակարգային վերլուծությունը [36,42,44]:

«Անորոշության իրավիճակներում ընտրությունը»՝ որպես գիտական ուսումնասիրման կատեգորիա կազմում է որոշման ընդունման տեսության գործառնական համակարգի կորիզը: Որոշման ընդունման տեսության զարգացման սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ սուբյեկտը որոշումն ընդունում է «սպասելի արժեք»-ի հաշվարկի համաձայն: «Սպասելի արժեք» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է դեռևս XVII դարում Բլեզ Պասկալի կողմից: «Սպասելի արժեք»-ի էությունը նրանում է, որ կանգնած լինելով բազմաթիվ գործողությունների կատարման առջև, երբ նրանցից յուրաքանչյուրը կարող է տալ տարբեր հավանականություններով հնարավոր արդյունքներ, ռացիոնալ գործընթացը նույնականացնում է բոլոր հնարավոր արդյունքները, որոշում նրանց արժեքները (դրական կամ բացասական) և հավանականությունները, ապա բազմապատկում դրանք և որոշում «սպասելի արժեքները»: Ենթադրվում է, որ ռացիոնալ մոդելի գործառնման պարագայում մարդը ընտրվում է առավել մեծ սպասելի արժեք տվող գործողությունը [18,28,34,43]:

«Սուբյեկտիվ հավանականության» տեսության ծնունդը մեծացնում է սպասելի արժեքի տեսությունը մինչ այն իրավիճակը, երբ սուբյեկտին հասանելի են միայն սուբյեկտիվ հավանականությունները: Տեսության զարգացման այս ժամանակաշրջանում դեռևս ենթադրվում էր, որ մարդիկ որոշման ընդունման իրավիճակում իրենց վարքը կառուցում են որպես ռացիոնալ սուբյեկտներ: Սակայն հետագայում Մ. Ալլեի և Դ. Էլլեսբերգի հետազոտությունները սկսեցին կասկածի տակ առնել այս մոտեցումը: Այստեղ է, որ որոշման ընդունման տեսության զարգացումը հիմք ստեղծեց հավանականության տեսությանը այլընտրանքային տեսությունների զարգացման համար: Մինչ այժմ էլ շարունակվում են գիտական վիճաբանությունները մեթոդաբանական այն հարցերի շուրջ, թե արդյոք կյանքի իրավունք ունեն հավանականության տեսության այլընտրանքային տեսությունները [1,26,31,33]:

Այս տեսակետից առավել մեծ տարածում ունեցավ «սահմանափակ ռացիոնալության» տեսությունը, որի նախահիմքերը դրվեցին նախորդ դարի հիսունական թվականներին Դ. Սայմոնի աշխատությունում:

տություններում, որն էլ այն բանի հիմք հանդիսացավ, որ տնտեսագետները և մաթեմատիկոսները սկսեցին դիմել հոգեբանական գիտության ստացած տվյալներին: Հետագայում «սահմանափակ ռացիոնալության» տեսությունը շարունակվեց զարգանալ և իր ամբողջական ձևակերպումն ստացավ Դ.Կանեմանի և Ա.Տվերսու աշխատություններում, որն էլ վերջնականապես որոշման ընդունման տեսության պատմական զարգացման մեջ ամուր տեղ ապահովեց հոգեբանական գիտության համար:

Հ. Սայմոնն իր ստացած արդյունքները շարադրում է «Ադմինիստրատիվ վարք» (1947), Սահմանափակ ռացիոնալության մոդելները (1982) և մի քանի այլ հիմնարար աշխատություններում: Սակայն որոշման ընդունման մեթոդաբանական հիմնահարցերի ամփոփ և նշանակալի աշխատություն կարող ենք համարել Հ. Սայմոնի «Որոշման ընդունման տեսությունները տնտեսագիտությունում և վարքային գիտությունում» հոդվածը, որը հրատարակվում է *American Economic Review* ամսագրում 1959թ.-ին և հեղաշրջում կատարում մինչ այդ հայտնի գիտական տեսություններում: Սայմոնը գտնում է, որ «բավարարվածություն» հասկացությունը ոչ մի դեր չունի դասական տնտեսագիտական տեսության մեջ, այն ժամանակ, երբ հոգեբանության ոլորտում, դրդապատճառայնության տեսության մեջ, այն ամենակարևորներից է: Բազմաթիվ հոգեբանական տեսություններում գործողության դրդումը ծնվում է չբավարարված պահանջներից (drives) և վերանում այն ժամանակ, երբ պահանջը բավարարվում է: Ընդ որում, բավարարման պահանջները միշտ նույնը չեն, այլ պայմանավորվում են տվյալ պահին անձի հավակնություններով և կենսափորձով: Ելնելով այս հիմքից՝ Սայմոնը գտնում է, որ կազմակերպության նպատակը ոչ թե իր եկամուտի մաքսիմիզացիան է, այլ շուկայում որոշակի դիրքի և վաճառքի մակարդակի պահպանումը: Կազմակերպությունն իր զարգացման ռազմավարական և մարտավարական որոշումների ընդունման ժամանակ ավելի շուտ կծգտի բավարարման, քան մաքսիմիզացիայի [20,33,45,46]:

Մեզ համար հատկապես հետաքրքրական է այն, որ Հ. Սայմոնի տեսության որոշակի դրույթներ, քննադատվելով դասական տնտեսագիտական տեսության կողմից, այնուամենայնիվ, իրենց

ամուր տեղը գտան որոշման ընդունման տեսության մեջ և լայնորեն սկսեցին կիրառվել գործնականում:

Որոշման ընդունման տեսության զարգացման գործնական մոտեցման վառ օրինակ կարող ենք համարել մեկ այլ Նոբելյան մրցանակակիր Ջ. Բյուքենոնի աշխատանքները, ով որոշման ընդունման օրինաչափությունները փորձեց վերլուծել ոչ միայն տնտեսագիտական տեսության սահմաններում, այլև քաղաքական գործընթացներում և առաջին անգամ լրջորեն համեմատական վերլուծության ենթարկեց անհատական և խմբային որոշման ընդունման ընդհանրությունները և տարբերությունները [2,39]:

Որոշման ընդունման տեսության զարգացման մեջ հետաքրքիր տեղ են զբաղեցնում ֆրանսիացի տնտեսագետ Մ. Ալլեի հետազոտությունները, ով առաջիններից մեկն էր, որ մարդու կողմից որոշման ընդունման օրինաչափությունները ուսումնասիրելու համար դիմեց հոգեբանական գիտափորձերի: Դրանց արդյունքում մաստացավ հակասական արդյունքներ, որն էլ համաշխարհային գիտության մեջ ամրակայվեց որպես «Ալլեի պարադոքս»: Նրա հետազոտությունները ևս մեկ անգամ ապացուցեցին, որ իրական տնտեսական սուբյեկտը որոշումների ընդունման ժամանակ անընդհատ խախտում է սպասելի օգտակարության հիպոթեզը: Հետազոտվողներին առաջարկվում էր ընտրություն կատարել երկու զույգ ռիսկային իրավիճակներում: Պայմանականորեն դրանք անվանենք իրավիճակներ A, B, C և D: Առաջին դեպքում ընտրությունը կատարվում է A և B իրավիճակների մեջ, երկրորդ դեպքում՝ C և D: A իրավիճակում սուբյեկտը 100% հավանականությամբ շահում է 1 միլիոն ֆրանկ, B իրավիճակում 10% հավանականությամբ 5 միլիոն ֆրանկ, 89% հավանականությամբ 1 միլիոն ֆրանկ և 1%՝ ոչինչ: C իրավիճակում 10% հավանականությամբ շահումը կլինի 5 միլիոն ֆրանկ, 90% հավանականությամբ՝ ոչինչ, իսկ D իրավիճակում 11% հավանականությամբ շահումը 1 միլիոն ֆրանկ է և 89% հավանականությամբ՝ զրոյական: Ալլեի ստացված տվյալներով առաջին ընտրության ժամանակ A տարբերակը ընտրողները երկրորդ ընտրության ժամանակ մախընտրում էին C-ն: Առկա հիպոթեզի սահմաններում սա ընկալվում էր որպես պարադոքս: Ալլեն փորձեց և հաջողությամբ մաթեմատիկական ճշգրտությամբ ապացուցեց անորոշության պայմաններում մարդու կողմից որոշման ըն-

դունման օրինաչափությունները: Ալլեի հետազոտությունների ընդհանուր եզրակացությունը կարող ենք սահմանել այսպես. *ռացիոնալ գործող անհատը նախընտրում է բացարձակ հավաստիությունը* [26]:

Որոշման ընդունման տեսությունն իր յուրահատուկ զարգացումն է ապրել խաղերի տեսության սահմաններում, որը կիրառական մաթեմատիկայի բաժին է, սակայն որի արդյունքները ավելի հաճախ կիրառվում են տնտեսագիտությունում, ավելի քիչ՝ սոցիոլոգիայում, քաղաքագիտությունում, հոգեբանությունում և այլն: Խաղերի տեսության հիմնադրույթները շարադրվել են 1944թ.-ին Ջոն Ֆոն Նեյմանի և Օսկար Մորգենշտերնի «Խաղերի տեսությունը և տնտեսագիտական վարքը» աշխատության մեջ: Որոշման ընդունման տեսանկյունից խաղերի տեսության սահմաններում հեղափոխական եղանակով Ջոն Նեշի աշխատանքները, ով գտավ և սահմանեց ոչ կոոպերացիոն խաղերում հավասարակշռության բերող որոշման ընդունման մոդելը: Վերջինս էլ սահմանվեց որպես «Նեշի հավասարակշռություն» [24,32,41]:

Սակայն որոշման ընդունման տեսության զարգացման համաշխարհային պատմության մեջ առաջին հոգեբանները, ովքեր կատարեցին ծանրակշիռ հետազոտություններ որոշման ընդունման հոգեբանական օրինաչափությունների բացահայտման ուղղությամբ Դանիել Կանեմանն ու Ամոս Տվերսկին էին իրենց գործընկերների հետ: Նրանք կատարված բազմաթիվ հետազոտությունների հիման վրա կառուցում են «Յեռանկարի տեսությունը», որում միավորված էին տնտեսագիտական և կոգնիտիվ գիտությունները՝ բացատրելու որոշման ընդունման գործընթացում մարդու իռացիոնալ վերաբերմունքը ռիսկային գործոններին և սեփական վարքի կառավարմանը: Որոշման ընդունման տեսությունը Դ. Կանեմանի և Ա. Տվերսկու շնորհիվ անցավ զարգացման նոր շրջափուլ, որում գիտականորեն հիմնավորվեցին ընդհանուր մարդկային մոլորությունների կոգնիտիվ հիմքերը և առաջին անգամ համակողմանիորեն վերլուծության ենթարկվեց ու բացատրվեց որոշման ընդունման գործընթացում «իրացիոնալ մարդու» ֆեյնոմենը: Հենվելով փորձարարական տվյալների վրա նրանք բնութագրում են, թե ինչպես են անհատները զնահատում իրենց հնարավոր շահույթներն ու

կորուստները և թե այդ գնահատումը ինչ դեր է ունենում որոշման ընդունման ռազմավարության մշակման ժամանակ [4,27,38]:

Հեռանկարի տեսությունը հնարավորություն տվեց բացատրել մինչ այդ տնտեսագիտության տեսությունում բացատրություն չունեցող բազմաթիվ մեթոդաբանական հիմնահարցեր, և Նորբեյյան հանձնաժողովը, գնահատելով Կանեմանի ներդրումը որոշման ընդունման տեսության զարգացման ոլորտում, մրցանակի հանձնումը գնահատում է որպես. «տնտեսագիտական գիտության մեջ հոգեբանական մեթոդիկայի կիրառման՝ հատկապես անորոշության իրավիճակում դատողությունների ձևավորման և որոշման ընդունման հետազոտության համար»: Գիտության զարգացման հենց այս փուլում, երբ հոգեբանությունը արդեն իսկ դառնում է որոշման ընդունման տեսության զարգացման անբաժանելի մասը և անորոշության իրավիճակներում որոշման ընդունման «սահմանափակ ռացիոնալության» մոդելը սկսում է լայնորեն քննարկվել գիտական հանրություն (հենվելով Զ.Սայմոնի, Մ. Ալլեի և Դ.Կանեմանի տեսությունների վրա), որոշման ընդունման մեթոդաբանական կենտրոնական հիմնահարց է դառնում ինդուկտիվ մտածողության ուսումնասիրությունը: Այստեղ տնտեսագետների և մաթեմատիկոսների մի ամբողջ «աստղաբույլ» դիմում է հոգեբանական գիտության ձեռքբերումներին: Ինչպես նշում է Բ. Արթուրը իր «Inductive Reasoning and Bounded Rationality» աշխատության մեջ, գոյություն ունեն երկու հիմնական պատճառներ, որոնց հետևանքով բացարձակ (կամ դեդուկտիվ) ռացիոնալության համակարգը քայքայվում է: Առաջին բացահայտ պատճառը այն է, որ որոշակի մակարդակի բարդության սահմաններից դուրս մեր տրամաբանական համակարգը դադարում է «պարտականությունների կատարումը»՝ մեր ռացիոնալությունը սահմանափակ է: Մյուս պատճառն այն է, որ ինտերակտիվ, բարդ իրավիճակներում սուբյեկտները չեն կարող հենվել այլոց վարքի օրինակների վրա՝ այսինքն գործել այնպես, ինչպես կգործեն բացարձակ ռացիոնալության պայմաններում: Այս իրավիճակում նրանք ստիպված են կանխագուշակել վարքը: Այս հանգամանքը, ինչպես նշում է Բ. Արթուրը, նրանց տանում է սուբյեկտիվ կարծիքների, ինչպես նաև սուբյեկտիվ կարծիքների մասին սուբյեկտիվ կարծիքների աշխարհ: Եվ այս իրավիճակը նա տնտեսագետների համար համարում է հայտնի փաստ, սակայն հարցադ-

րունը դնում է այնպես, թե ինչ կարելի է օգտագործել բացարձակ ռացիոնալության համակարգի փոխարեն: Եվ Բ. Արթուրն առաջ է քաշում տնտեսագետների և մաթեմատիկոսների կողմից ինդուկտիվ մտածողության ուսումնասիրման և մոդելավորման հիմնահարցը: Սրանով կարելի է ասել, որ որոշման ընդունման տեսության մեջ վերջնականապես միաձուլվում են այս երեք գիտությունները մեկ ընդհանուր խնդրի շուրջ: Եվ այդ խնդիրը մարդու ինդուկտիվ մտածողության, կոգնիտիվ ոլորտի «մարդկային» առանձնահատկությունների ուսումնասիրումն ու մոդելավորումն է: Որոշման ընդունման տեսության զարգացման այս փուլի հիմնահարցն էլ կարող ենք սահմանել, որպես՝ սահմանափակ ռացիոնալության մարդկային կոգնիտիվ մոդելների մշակում [28,29]:

Եթե Հ. Սայմոնի կողմից մշակված մոդելը կարող ենք ընդունել որպես «սահմանափակ ռացիոնալության պայմաններում բավարարման սկզբունքով որոշման ընդունման» (satisficing principle) մոդել, ապա որոշման ընդունման տեսության զարգացման ավելի ուշ ժամանակաշրջանում կարող ենք առանձնացնել և քննարկել սահմանափակ ռացիոնալության երկու հետաքրքրական մոդել ևս. 1967թ.-ին Պ. Ջելբերգի կողմից մշակված իմպլիցիտ (ներքին) նախընտրելիության (implicite-favorite) և 1997թ.ին Ռ. Լիպշիցի և Օ. Շտրաուսի կողմից մշակված R.A.W.F.S մոդելները (R-reduction (մվազեցում), A-assumption-based rasoning (ենթադրությունների վրա հենված դատողություններ), W-weighting pros and cons (կողմի և դեմի կշռում), F-forestalling (կանխարգելում), S-suppression (ճնշում)): Քննարկենք մշակած երկու մոդելները առավել մանրամասն, քանի որ վերջիններս սահմանափակ ռացիոնալության տեսության սահմաններում մշակված և մինչ օրս գործնականում իրենց կիրառական արժեքն ապացուցած որոշման ընդունման լավագույն մոդելներն են:

Համաձայն Պ. Ջելբերգի մոտեցման, որոշումը ընդունվում է ինքնաբուխ ձևով այլընտրանքներից մեկի օգտին: Այս այլընտրանքը դառնում է ներքին նախընտրելի և համեմատվում այլ տարբերակների հետ: Սակայն համեմատության ժամանակ որոշման ընդունման սուբյեկտը ամեն կերպ փորձում է հաստատել իր նախնական դատողությունը և գտնել մյուս այլընտրանքների հանդեպ նրա առավելությունները: Շատ հաճախ որոշման ընդունման սուբյեկտը

որոշման արդյունավետության չափանիշները սահմանում է միայն նեքին ընտրությունից հետո: Հետազոտությունների արդյունքում պարզվում է, որ առավել հեշտ է հիմնավորել նեքին նախընտրելի այլընտրանքը, քան առաջնորդվել ռացիոնալ մոդելի համաձայն: Ռ. Լիպշիցն ու Օ. Շտրաուսը ուսումնասիրել են անորոշության իրավիճակներում որոշման ընդունման առջև կանգնած մարդու վարքային և հոգեբանական ռազմավարություններն ու մարտավարությունները: Բազմաթիվ փորձերի արդյունքում նրանք մշակում են տասներկու հիմնական ռազմավարություններ, որոնք հետագայում միավորում են վերը մշակած հինգ կլաստերներում՝ անորոշության նվազեցում (R), ենթադրությունների վրա հենված դատողություններ (A), կողմի և դեմի կշռում (W), անորոշության կանխարգելում (F), անորոշության ճնշում (S): Այս վեց կլաստերների հիման վրա էլ նրանք կառուցում են որոշման ընդունման համապատասխան ալգորիթմը [9,40,49]:

Մինչ այս պահը մենք քննարկեցինք, թե ինչպես է որոշման ընդունման տեսությունը զարգացել իր կենտրոնական հիմնախնդիրներից մեկի՝ «անորոշության իրավիճակներում ընտրություն» հասկացության շուրջ՝ էլենելով բացարձակ և սահմանափակ ռացիոնալության սկզբունքներից: Սակայն անհնար է պատկերացնել որոշման ընդունման տեսության զարգացումն առանց մյուս կենտրոնական «ռիսկ» երևույթի ուսումնասիրման: Ռացիոնալություն և ռիսկ հասկացությունները որոշման ընդունման ծնունդից մինչ մեր օրերը կարմիր թելի մման անցնում են բոլոր տեսություններով: Որոշման ընդունման տեսության սահմաններում ռիսկի վերլուծությանն են անդրադարձել այնպիսի հեղինակավոր գիտնականներ, ինչպիսիք են Պ.Սլովիկը, Յ. Մարկովիցը, Ա. Ռապպապորտը, Լ. Հուանգը, Կ. Կունբսը, Ջ. Ատկինսոնը, Տ. Կորնիլովան և այլք [15,21,37, 47, 48]:

Որոշման ընդունման տեսության մեջ ձևավորվել է ռիսկի ուսումնասիրման երկու գլոբալ մոտեցում: Սպասելի օգտակարության մոդելներում ռիսկը և անորոշությունը դիտարկվում են իրարից անկախ գործոններ: Առավել ուշ առաջացած մոտեցումների մեծամասնությունը դիտարկում են այս երկու հիմնարար հասկացությունները մեկ միասնական համակարգի մեջ, որն էլ թույլ է տալիս

առավել ճկուն մոտեցում ցուցաբերել ռիսկի ուսումնասիրման խնդիրներում:

Ապասելի օգտակարության մոդելներում կարող ենք առանձնացնել Լ. Չուանգի «սպասելի ռիսկի» և Կ. Կումբսի «ռիսկ-շահույթ» տեսությունները: Այս երկու մոդելներում էլ ռիսկի սուբյեկտիվ ապրումը դիտարկվում է որպես սուբյեկտի ընտրության կոգնիտիվ կարգավորման գործընթաց և բաղադրիչ: Որոշման ընդունման կոգնիտիվ մոդելները ենթադրում են սուբյեկտիվ գնահատման և ընտրության ակտի գործընթացների տարաբաժանում: Այս պարագայում արդեն անխուսափելիորեն ներմուծվում է ռիսկի գործոնի կամ «ռիսկի ընդունման» սուբյեկտիվ գործընթացի հասկացությունը, եթե սուբյեկտը անորոշության միջավայրում համաձայնվում է ընտրության: Սակայն անորոշությունը և ռիսկը ուղղակիորեն կապված հասկացություններ չեն: Ռիսկի գործոնը ենթադրում է սուբյեկտի գործունեություն (ֆիզիկական կամ մտային): Ինտելեկտուալ ռազմավարությունների կարգավորման և ստեղծարար գործունեության կոնտեքստում ռիսկի գործոնը բացառապես ընկալվում է դրական կողմով՝ ինչպես ձեռքբերման ռիսկ, այսինքն նպատակին հասնել «անմիջական» ճանապարհով՝ խուսափելով ինֆորմացիայի հավաքումից կամ ընտրողական որոնումից: Եվ որոշման ընդունման կոնտեքստում ռացիոնալ համարվում է ռիսկի որոշակի մակարդակի ընդունումը և ոչ թե դրանից խուսափելու միտումը, իսկ որոշման ընդունման ժամանակ ինտելեկտուալ ռազմավարությունը միևնույն ժամանակ կարող է լինել և մտածված և ռիսկային [15]:

Առավել ընդգրկուն և հետաքրքրական է Տ. Կորնիլովայի մոտեցումը, որը ձևավորվել է մտածողության դրդապատճառային կարգավորման Օ. Կ. Տիխոմիրովի տեսության սահմաններում: Նա դիտարկում է ռիսկի գործոնը մեկ այլ տեսանկյունից՝ անձնային կամ առավել լայն՝ որպես մարդու ընտրության սուբյեկտային կարգավորում: Որոշման ընդունման ինտելեկտուալ անձնային կարգավորման էական առանձնահատկությունն է անորոշության իրավիճակում որոշումների ընդունմանը անձի պատրաստվածությունը, որն իր իսկ հերթին ենթադրում է «ռիսկի ընդունում»: Անձնային ռիսկը ենթադրում է անորոշության իրավիճակում արդյունավետ գործելու անձնային նախադրյալները: Գրականության մեջ մենք

հանդիպում ենք երկու հասկացությունների՝ *ռիսկի պատրաստակամություն* և *ռիսկի հակում*, որոնց հարաբերությունները հստակ ընդգծված չեն և հարաբերվում են նաև ռիսկային վարք (*Risikoverhalten*) ու վարքային ռիսկի ընդունում (*risk-taking behavior*) հասկացությունների հետ: Ռիսկի հակումը առավել յուրահատուկ է անգլալեզու գրականությանը և ընդգրկում է դիսպոզիցիոնալ անձնային ռիսկի հասկացումը՝ ինչպես նմանատիպ խնդիրներում մարդկանց վարքը տարբերող անհատական հատկություն: Գրականության մեջ այն զուգորդվում է իմպուլսիվության և ինքնատիրապետման մակարդակի իջեցման հետ: Տ. Կորնիլովան նշում է նաև, որ հոգեբանության մեջ չկա հիմնավորում, թե արդյոք կարելի է առանձնացնել ռիսկի կոնկրետ դրդապատճառ. ռիսկային որոշումները հիմնականում դիտարկվում են որպես բազմադրդապատճառային [3,12,13]:

Մեր ժամանակաշրջանում ռիսկի հիմնախնդիրների լայնածավալ ուսումնասիրություններ է անցկացնում Պ. Սլովիկը իր գիտական խմբի հետ: Նա կարևորում է այն, որ գործողության ընկալված ռիսկի և ընկալված շահի հակադարձ հարաբերությունը կապվում է ոչ միայն կոգնիտիվ օղակի, այլ գործողության հետ զուգորդող դրական կամ բացասական հուզականության ուժգնության հետ: Եթե նրանց զգացմունքները տվյալ գործողության նկատմամբ բարենպաստ են, նրանք այն գնահատում են ցածր ռիսկայնությամբ և բարձր շահով, իսկ եթե նրանց զգացմունքներն անբարենպաստ են, նրանք հակված են այն բնորոշել բարձր ռիսկայնությամբ և ցածր շահով [21,47,48]:

Որոշման ընդունման մեթոդաբանական հիմնախնդիրների պատմական ակնարկն ամբողջականանում է խորհրդային հոգեբանության ուսումնասիրություններով: Այստեղ մենք բախվում ենք չափազանց հետաքրքիր մեկ այլ իրողության: Տեսության զարգացումը ընթացել է լիովին այլ ուղղով: Եթե արտասահմանում որոշման ընդունման գործընթացների հոգեբանական ուսումնասիրումը գործնական պահանջ էր, որը ծագեց տնտեսագիտական, մաթեմատիկական տեսություններից և զարգացում ապրեց, ապա որոշման ընդունման տնտեսագիտական ուսումնասիրությունները խորհրդային իրողությունում համարյա բացակայում են: Որոշման ընդունման հետազոտությունները ծագեցին հոգեբանության, ներդրված

լոգիայի և կիրեռնետիկայի խաչմերուկում, սակայն բուն հոգեբանական մոտեցումը շատ արագ ձեռք է բերում ինքնուրույնություն և ավելի շուտ զարգացում ապրում տեսական, աշխարհայացքային հարացույցում: Խորհրդային իրողությունում, որպես այդպիսին, որոշման ընդունման առաջին ամբողջական և ամփոփ աշխատություն կարող ենք համարել 1976թ.-ին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հոգեբանության ինստիտուտի կողմից հրատարակված «Проблемы принятия решения» հոդվածների ժողովածուն, ուր կենտրոնական տեղ է գրավում Օ.Տիխոմիրովի «Принятия решения как психологическая проблема» հոդվածը, որն էլ շրջադարձային է դառնում որոշման ընդունման հիմնախնդիրների զարգացման համար: Օ. Տիխոմիրովը իրավացիորեն նշում է, որ սխալվում են այն հեղինակները, որոնք պնդում են, որ որոշման ընդունման հիմնախնդիրը մոր և երիտասարդ է և առաջացել է կիրեռնետիկայի առաջացմամբ: Այն դասական փիլիսոփայության հիմնախնդիրներից է և երկար դարեր ձևակերպվել է որպես կամքի ազատության խնդիր: Մեր դարաշրջանում առաջացել են միայն որոշման ընդունման մոր մոտեցումներ և ուղորտներ: Օ. Տիխոմիրովը կարևորում է Ա. Լուրիայի ղեկավարությամբ կատարվող հետազոտական մի մոր ուղղություն, ուր որոշման ընդունումը սերտորեն կապվում է խոսքի և մարդու վարքի կարգավորման գործառույթների հետ: Ինքը հեղինակը, երկար տարիներ աշխատել է այս հիմնախնդրի մշակման շուրջ և կարող ենք փաստել, որ հետագայում բոլոր խորհրդային և ռուս հոգեբանների հայեցակարգերում որոշման ընդունումը միանշանակորեն սկսում է դիտարկվել իր կարգավորման գործառույթի տեսանկյունից: Օ. Տիխոմիրովը առաջարկում է նաև «որոշում» տերմինին ավելացնել համապատասխան ածական՝ կամային կամ իմպուլսիվ, ինտելեկտուալ կամ հուզական, կախված նրանից, թե հոգեկան որ գործընթացն է առաջնային դեր կատարում ընտրության փուլում: Սրանից կախված՝ փոխվում է ինչպես հետագա հետազոտման առարկան, այնպես էլ ուսումնասիրման ամբողջ ռազմավարությունը [19,23]:

Հետագայում որոշման ընդունման տեսությունը բուն հոգեբանական տեսանկյունից զարգանում է երկու խոշոր ռուս գիտնականների Ա. Կարպովի և Տ. Կորնիլովայի հայեցակարգերում: Նրանց կողմից մշակված հայեցակարգերը լույս են սփռում որոշ-

ման ընդունման հոգեբանական մի մեծ խումբ հիմնախնդիրների վրա, սակայն, ըստ էության, հենվում են տարբեր մոտեցումների վրա և ունեն բազմաթիվ առանցքային հակասություններ: Հենց այդ հակասությունների մանրամասն քննարկամասն է անդրադարձել Ս. Կորնիլովան 2005թ.-ին Психологический журнал ամսագրում տպագրված իր «Методологические проблемы психологии принятия решений» հոդվածում:

Երկու հեղինակների մոտեցումներն էլ իրենց հիմքում ունեն Ա. Լեոնտի գործունեության տեսությունը, սակայն որոշման ընդունման Ա. Կարպովի հայեցակարգը զարգացել է Բ. Լոմովի, իսկ Ս. Կորնիլովայի հայեցակարգը Օ. Տիխոմիրովի հայացքների ազդեցության ներքո: Ինչպես Ա. Կարպովն է նշում. «Գործունեությունը որպես ակտիվության օբյեկտիվ գոյություն ունեցող ձև ենթադրում է իր կազմակերպման գործընթացների օբյեկտիվ բնույթ՝ ինտեգրալ հոգեկան գործընթացներ»: Ա. Լեոնտը անդրադառնալով այդ գործընթացներին, այնուամենայնիվ դրանք չի միավորում առանձին դասի մեջ, իսկ ինտեգրալ գործընթացների նախադրյալները հանդիպում են հենց Բ. Լոմովի մոտ, ով գտնում էր, որ անտիցիպացիայի, պլանավորման, որոշման ընդունման և ղեկավարման գործընթացները ցանկացած գործունեության «հոգեբանական բաղադրիչներն են»: Ա. Կարպովը, ներմուծելով «առաջին կարգի» և «իմտեգրալ» հոգեկան գործընթացների հասկացությունը, տալիս է նրանց կազմակերպվածության սկզբունքը՝ հիերարխիկ և հետերարխիկ համակարգերում: Ըստ էության գործընթացները կազմակերպվում են՝ կազմելով փակ «կարգավորվող օղակ»: Ի տարբերություն Ա. Կարպովի մոտեցման՝ Ս. Կորնիլովան իր մոտեցումը ձևավորում է Օ. Տիխոմիրովի դպրոցի սկզբունքների հիման վրա: Նրա մոտեցումը կարող ենք ձևակերպել որպես որոշման ընդունման կարգավորման բազմակի ֆունկցիոնալ-մակարդակային մոտեցում: Նրա կողմից ներմուծվող դիմամիկ կարգավորող համակարգերը թույլ են տալիս ընդգծել կարգավորող պրոֆիլների ֆունկցիոնալ կայացումը և անբաժանելիությունը, ինչպես նաև անձի կողմից իրականացվող ինտելեկտուալ որոշումների և անձնային-դրդապատճառային նախադրյալների միջև կապերի մասնակիությունը: Այս մոտեցումն ամբողջովին հենվում է կարգավորող համակարգերի ոչ թե հիերարխիկության, այլ բաց լինելու վրա: Ս.

Կորնիլովայի մոտեցումը թույլ է տալիս նորովի ուսումնասիրել անձնային առանձնահատկությունների և դրդապատճառային համակարգի դերը որոշման ընդունման գործընթացներում: Եվ ինչպես նշում է Տ. Կորնիլովան, երբ նույն սուբյեկտը յուրաքանչյուր անգամ նորովի հայտնվում է անորոշության նվազեցման և որոշման ընդունման անհրաժեշտության առջև, որոշումը միջնորդավորող գործընթացների ֆունկցիոնալ հիերարխիան յուրաքանչյուր անգամ ձևավորվում է նորովի: Իսկ անձնային-դրդապատճառային առանձնահատկությունների և որոշման ընդունման գործընթացների փոխհարաբերությունը յուրաքանչյուր անգամ կարելի է բացահայտել կառուցվածքային մոդելավորման միջոցով [7,8,11,14]:

Այստեղ է, որ մենք պարտավոր ենք քննարկել որոշման ընդունման կարևորագույն մեթոդաբանական հիմնահարցերից ևս մեկը՝ այն է որոշման ընդունման հոգեդիագնոստիկ չափանիշների հիմնախնդիրը:

Ինչպես որոշման ընդունման տեսությունն է զարգացել տարբեր հայեցակարգերի ներքո, այնպես էլ, յուրաքանչյուր հեղինակ կազմել և կիրառել է որոշման ընդունման առանձնահատկությունների ճանաչման իր մեթոդն ու մեթոդիկաները: Արևմտյան հետազոտություններում որոշման ընդունման ուսումնասիրությունները առավելապես կատարվել են լաբորատոր գիտափորձերի և մոդելավորող խնդիրների միջոցով: Ուսումնասիրությունների առաջին խոշոր ուղղությունը «ռացիոնալության» հետազոտումն է, որի մեթոդները մշակվել են ոչ միայն հոգեբանների կողմից: Հետաքրքրական է, որ ամերիկացի իրավիճակում որոշման ընդունման հետազոտման հոգեբանական մոդելավորող խնդիրներ մշակել է Մ.Ալլեն, որոնք արդեն իսկ ներկայացրել և քննարկել ենք այս հոդվածի սահմաններում: Առավել լայնամասշտաբ հետազոտություններ են կատարել Դ. Կանեմանն ու Ա. Տվերսկին՝ նորից իրենց իսկ կողմից մշակված խնդիրների օգնությամբ: Այդպիսի խնդրի վառ օրինակ է «Լինդայի խնդիրը»: Հետազոտվողներին առաջարկվում է Լինդայի բնութագիրը և ապա առաջարկվում գուշակել նրա մասնագիտությունը և հորբին առաջարկված տարբերակներից: Հենց այս մոդելավորող խնդրի օգնությամբ են նրանք բացահայտել, որ նույնիսկ մաթեմատիկոսները, որոնք լավ ծանոթ են հավանականությունների տեսությամբ, ընտրում են առավել ցածր հավանականություն ունեցող

տարբերակը: Նմանատիպ խնդիրներ չափազանց շատ են հանդիպում որոշման ընդունման հիմնախնդիրներով զբաղվող արտասահմանյան այլ հեղինակների մոտ: Նույն կերպ է ուսումնասիրվել նաև «ռիսկի ընկալման» հատկությունը: Իհարկե Պ.Սլովիկի աշխատություններում այս խնդիրները ուղեկցվել են նաև տարբեր տիպի հարցաթերթերով: Սակայն, եթե ամփոփում ենք բոլոր մոտեցումները, ապա նկատելի է, որ արևմտյան հեղինակները սահմանափակվել են լաբորատոր գիտափորձի և հարցման մեթոդների կիրառմանը [4, 16, 29]:

Արևմտյան այս մոտեցումը խիստ քննադատության է ենթարկում Ա. Կարպովը՝ շարադրելով որոշման ընդունման ուսումնասիրության մեթոդաբանական իր մոտեցումը: Քանի որ որոշման ընդունման գործընթացների ուսումնասիրման հիմնական մեթոդը լաբորատոր գիտափորձն է, ապա և իրավիճակները, որոնց օրինակով ուսումնասիրվում է որոշման ընդունման գործընթացը, բավական վերացական են և մոտավոր, երբեմն նաև աղճատված ձևով են մոդելավորում իրական իրավիճակը, որում ընդունվում են որոշումները: Գիտափորձերի ժամանակ կատարվում է որոշման ընդունման իրավիճակների իրական բարդության, բազմաչափության և բազմագործոնության պարզեցում և օգտագործվում են չափազանց քիչ գործոններ պարունակող իրավիճակներ, որոնք սակայն թույլ են տալիս նրանց հանդեպ խիստ փորձարարական հսկողություն իրականացնել: Իր մոտեցման մեջ Ա. Կարպովն առաջարկում է որոշման ընդունման գործընթացների ուսումնասիրման համար ավանդական լաբորատոր գիտափորձից իրական մոդելավորման և իմիտացիոն խնդիրների միջոցով անցում կատարել դեպի գործունեությամբ միջնորդավորված մոդելավորմանը և այն ուսումնասիրել գործունեության հոգեբանական վերլուծության համատեքստում: Սա, ըստ Ա. Կարպովի, թույլ է տալիս գիտափորձի ընթացքում գրանցել որոշման ընդունման օպտիմալ քանակությամբ ցուցանիշներ, որոնց թվին են պատկանում որոշումների իրագործման ժամանակը, ճշգրտությունը, դրանց ածանցյալները, ինչպես նաև պրոցեսուալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են որոշման կանոնների տեսակները և քանակը, չափանիշների խստության տեսակը և չափը, որոշման մեջ ընդգրկված այլընտրանքների բնութագրիչներ

րը և հետազոտվողի կողմից իր ընդունած որոշման ընթացքի և արդյունքի ճշգրտության սուբյեկտիվ գնահատականը [5]:

Ա. Կարպովի առաջարկած հոգեդիագնոստիկ մոտեցումը չափազանց արդյունավետ է, եթե մենք համաձայնվում ենք նրա կողմից առաջարկված հոգեկան կարգավորման հիերարխիկության և կարգավորման «փակ օղակ»-ի սկզբունքների հետ: Այս պարագայում մենք կարող ենք յուրաքանչյուր մասնագիտական գործունեության ոլորտում որոշման ընդունման գործընթացների ուսումնասիրման համար կառուցել համապատասխան հետազոտական ծրագիր: Սակայն, եթե հիմք ենք ընդունում հոգեկան կարգավորող համակարգերի դինամիկության սկզբունքը, ապա Ա. Կարպովի մոտեցումը դառնում է դժվար կիրառելի յուրաքանչյուր նոր իրավիճակի համար: Այս պարագայում մենք պետք է վերադարձ կատարենք ավանդական մոդելավորման սկզբունքներին: Այս մոտեցմանք էլ շարժվում է Տ. Կորնիլովան, սակայն հայտնի գործոնները մոդելավորելով ոչ թե գիտափորձի, այլ թեստային մեթոդի սահմաններում: Նրա կողմից մշակվել և պրակտիկա է ներմուծվել ЛФР-25 որոշման ընդունման անձնային գործոնների ուսումնասիրման թեստը: Այն չափում է «ռացիոնալության» և «ռիսկի ընդունման» գործոնները, անցել է վալիդության և հուսալիության ստուգման բավական բարդ գործընթաց և համապատասխանում է որոշման ընդունման հոգեդիագնոստիկայի բոլոր չափանիշներին [11]:


Սակայն եթե փորձում ենք քննադատական վերլուծության ենթարկել որոշման ընդունման գործընթացների հոգեդիագնոստիկայի վերը նշված մոտեցումները, ապա կարելի է փաստել, որ այս ոլորտում առկա հակասությունները մեր առջև խնդիր են դնում վերանայել որոշման ընդունման հոգեդիագնոստիկ գործոնները, դրանք վերանշակել և ավելացնել՝ անորոշության պայմաններում ընտրության մոդելավորվող իրավիճակները առավել մոտեցնելով բարդ, բազմաչափ և բազմագործոն իրականությանը: Հենց այս խնդիրների լուծումն էլ, ըստ իս, որոշման ընդունման տեսության ժամանակակից զարգացման կարևորագույն քայլերից մեկն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հայրապետյան Դ.Ռ.** Մտածողության և որոշում ընդունելու մեխանիզմների փոխակերպումները (պատմության հեռանկարում) «Պատմություն և կրթություն» գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Տաթև գիտակրթական համալիր, Երևան 2006, էջ 95-101:
2. **Бьюкенен Дж. М.** Сочинения. Конституция экономической политики. Расчёт согласия. Границы свободы / Нобелевские лауреаты по экономике. Т. 1 / Фонд экономической инициативы. - М.: Таурис Альфа, 1997. 560 с.
3. **Дернер Д.** Логика неудачи: стратегическое мышление в сложных ситуациях. М.: Смысл, 1997 243с.
4. **Канеман Д., Тверски А.** Рациональный выбор, ценности и фреймы // Психологический журнал. - 2003. Т. 24. - № 4. - С. 31-42.
5. **Карпов А.В.** Методологические основы психологии принятия решения. Яросл. Гос. Ун-т. Ярославль, 1999., 232с.
6. **Карпов А.В.** Психология принятия решения в профессиональной деятельности, Ярославль, 1991., 146с.
7. **Карпов А.В.** Психология принятия решения. Институт психологии РАН, Яросл. Гос. Ун-т. Ярославль, 2003., 240с.
8. **Карпов А.В., Скитяева И.М.** Понятия метакогнитивных и интегративных процессов как компоненты психологической теории принятия решения // Психологические проблемы принятия решения. Под ред. А.В. Карпова. Ярославль, 2002.
9. **Кирхлер Э., Шротт А.** Принятие решений в организациях. Харьков, 2004. 160 с.
10. **Козелецкий Ю.** Психологическая теория решений. Москва 1979. 503 с.
11. **Корнилова Т. В.** Диагностика “личностных факторов” принятия решений// Вопросы психологии, 1994. № 6, с. 99-109
12. **Корнилова Т.В.** Понятие “риска”, “неопределенности” и принятия решений в психологических и непсихологических моделях выбора// Управление риском// 1997 N3
13. **Корнилова Т. В.** Психология риска и принятия решений, Москва, Аспект Пресс, 2003. 286 с.
14. **Корнилова Т. В.** Принятие интеллектуальных решений и креативность: принцип открытости динамических регулятивных систем // Современная психология мышления: смысл в познании. Москва: Смысл, 2008. стр. 28-30
15. **Кумбс К.Х.** Некоторые подходы к восприятию и оценке степени риска // Нормативные и дескриптивные модели принятия решений. Под. ред. Б.Ф. Ломова и др. М.: Наука, 1981. с. 51-65.

16. **Литвак Б. Г.** Экспертные оценки и принятие решений.- М.: Патент, 1996. — 271 с.
17. **Орлов А. И.** Принятие решений. Теория и методы разработки управленческих решений. Учебное пособие. М.: МарТ, 2005. 496 с
18. **Плаус С.** Психология оценки и принятия решений. Москва, Филин, 1998. 368 с.
19. Проблемы принятия решений. **Отв. ред. Анохин П.К., Рубахин В.Ф.**, Москва, Наука, 1976. 319 с.
20. **Саймон Г.А.** Рациональность как процесс и продукт мышления // THESIS. 1993. Вып. 3. С.16 - 38. [1978]
21. **Словик П., Фишхофф Б., Лихтенштейн С.** Факты против страха: понимание воспринимаемого риска // Принятие решений в неопределенности: Правила переубеждения: Канеман Д., Словик П., Тверски А. Изд. Генезис, 2005, стр. 529-561.
22. **Тейл Г.** Экономические прогнозы и принятие решений. М.: «Прогресс» 1970.
23. **Тихомиров О. К.** Принятие решения как психологическая проблема // Проблемы принятия решения. Москва, Наука, 1976. с. 77-81.
24. **Хемди А. Таха** Теория игр и принятия решений // Введение в исследование операций 7-е изд. М.: «Вильямс», 2007. - С. 549-594.
25. **Шеллинг Т.** Стратегия конфликта. М.: ИРИСЭН, 2007. 366 с.
26. **Allais M.** (1953) Le Comportement de l'Homme Rationnel devant le Risque: Critique des Postulats et Axiomes de l'Ecole Americaine // *Econometrica*, 21, p. 503-546.
27. **Anderson B.F.** The Three Secrets of Wise Decision Making. Single Reef Press. 2002.
28. **Arthur W.B.** Designing Economic Agents that Act like Human Agents: A Behavioral Approach to Bounded Rationality.
29. **Arthur W.B.** Inductive Reasoning and Bounded Rationality // *American Economic Review*. May 1994. Vol. 84. № 2 p. 406-411
30. **Berger J.O.** Statistical Decision Theory and Bayesian Analysis. Second Edition. 1980. Springer Series in Statistics.
31. **Clemen R.** Making Hard Decisions: An Introduction to Decision Analysis, 2nd edition. Belmont CA: Duxbury Press, 1996.
32. **Goode E.** (2001) In Weird Math of Choices, 6 Choices Can Beat 600. The New York Times. Retrieved May 16, 2005.
33. **Goodwin P. & Wright G.** Decision Analysis for Management Judgment, 3rd edition. Chichester: Wiley, 2004
34. **Groot M. De** Optimal Statistical Decisions. Wiley Classics Library. 2004. (Originally published 1970.)

35. **Hansson S.O.** «Decision Theory: A Brief Introduction», <http://www.infra.kth.se/~soh/decisiontheory.pdf> (an excellent non-technical and fairly comprehensive primer)
36. **Howard R.** *Decision Analysis: Introductory Readings on Choices Under Uncertainty.* McGraw Hill. 1997.
37. **Janis I.L., Mann L.** *Decision making: A psychological analysis of conflict, choice and commitment.* N.Y.: Free Press, 1977. 312p
38. **Kahneman D. & Tversky A.** (1979). Prospect theory: An analysis of decisions under risk. *Econometrica*, 47, p. 313-327.
39. **Kooman P.L., Broekbuijsen J.W. & Wierdsma A.F.M** (1998) Complex decisionmaking in organizations. In: P.J.D. Drenfh, H. Thierry & C.J. de Wolff (eds.) *Handbook of Work and Organizational Psychology. Volume 4: Organizational Psychology (357-386).* Hove, East Sussex: Psychology Press.
40. **Lipshitz R. & Strauss O.** (1997) Coping with uncertainty: Anaturalistic decisionmaking analysis. *Organizational Behavior and Human Decision Processes*, 69.
41. **Nash J.F.** (1951) Non-cooperative games. *Annals of Mathematics*
42. **North D.W.** A tutorial introduction to decision theory. *IEEE Trans. Systems Science and Cybernetics*, 4(3), 1968. Reprinted in Shafer & Pearl. (also about normative decision theory)
43. **Shafer G. & Pearl J.** editors. *Readings in uncertain reasoning.* Morgan Kaufmann, San Mateo, CA, 1990.
44. **Simon H.A.** (1947) *Administrative Behavior: A Study of Decision-Making Processes in Administrative Organizations*, - 4th ed. in 1997, The Free Press
45. **Simon H.A.** (1959) *Theories of decision-making in economics and behavioral science.*
46. **Simon H.A.** (1972) *Theories of Bounded Rationality.* In: C.B. McGuire and ROY Radner teds. 1 , *Decision and Organization*, North-Holland Publishing Company, 161-76
47. **Slovic P.** (1987). Perception of risk. *Science*, **236**, 280-285.
48. **Slovic P., & Gregory R.** (1999). Risk analysis, decision analysis, and the social context for risk decision making. In J. Shanteau, B.A. Mellers, & D.A. Schum (Eds.), *Decision science and technology: Reflections on the contributions of Ward Edwards* (pp. 353-365). Norwell, MA: Kluwer Academic.
49. **Soelberg P.O.** (1967) Unprogrammed decision making. *Industrial Management Review*, 20.



Չերբերտ Ալեքսանդր Սայմոնը (1916-2001թթ.) ծնվել է Միլուոկիում (Վիսկոնսին նահանգ): Նա ամերկացի գիտնական էր, որն ուսումնասիրում էր որոշման ընդունման սկզբունքներն ու գործընթացները մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներում: Հիմնարար արդյունքների է հասել բազմաթիվ կոնկրետ և հունամիտար գիտություններում, ինչպիսիք են մաթեմատիկական և տնտեսագիտությունը, հոգեբանությունը: Մեծ ներդրում ունի նաև արհեստական ինտելեկտի հետազոտություններում: Որոշ աղբյուրներում նշվում է, թե Չերբերտ Սայմոնը սոցիոլոգ և մանակավարժ է [9]:

Արթուրի և Էդնիի ընտանիքում նա երկրորդ տղա երեխան էր: Նրա հայրը՝ Արթուր Սայմոնը, գերմանացի փախստական էր, ինժեներ-էլեկտրատեխնիկ, նորարար և պատենտային օրենքի ոլորտում իրավաբան: Նա 1905 թվականին արտագաղթել էր Գերմանիայից: Սայմոնի մայրը մանկավարժ էր, ուսուցանում էր չեխա-

կան և գերմանական ծագում ունեցող ամերիկացիներին, ինչպես նաև եղել է հիանալի դաշնակահարուհի [9]:

Սայմոնը, սովորելով միլուոկյան միջնակարգ դպրոցում, ստացել է, ինչպես նա հիշում էր ավելի ուշ, «փայլուն ընդհանուր կրթություն»: Տանը տիրող մթնոլորտը խթան է հանդիսացել երեխաների ինտելեկտուալ զարգացման համար: Ընթրիքների ժամանակ սեղանը ծառայում էր քննարկումների և վեճերի համար հարմար մի վայր, իսկ թեմաները տարբեր էին, երբեմն՝ գիտական, իսկ հաճախ՝ քաղաքական:

Նրա քեռին՝ Հարոլդ Մերկելը, աշխատում էր տնտեսագիտության և հոգաբանության ոլորտներում: Սայմոնը հիանում էր նրանով, ինչն էլ պարարտ հող ստեղծեց նրա մեջ սոցիալական գիտությունների նկատմամբ հետաքրքրության առաջացման համար [8]:

1933 թվականին ընդունվելով Զիկագոյի համալսարան՝ Սայմոնը որոշում կայացրեց դառնալ մաթեմատիկոս-գիտնական: Հաջողությամբ յուրացնելով քաղաքական տնտեսագիտություն, տրամաբանություն, մաթեմատիկա և բազում այլ առարկաներ, և ուսումնասիրելով ֆիզիկան՝ նա հետաքրքրություն ցուցաբերեց այդ առարկայի փիլիսոփայական խնդիրների նկատմամբ, և այդ հետաքրքրությունը նրա մոտ պահպանվեց ողջ կյանքի ընթացքում: Այդ պրոբլեմների շուրջ իրատարակել է մի շարք հոդվածներ:

1936թ. ավարտելով Զիկագոյի համալսարանը բակալավրի աստիճանով՝ երիտասարդ տնտեսագետը շարունակեց աշխատանքը համալսարանում՝ զբաղվելով մունիցիպալ կառավարման խնդիրներով: Սայմո-

նի կարիերան սկսվեց Չիկագոյի մունիցիպալիտետում հետազոտողի պաշտոնից (1936-38): 1938-1939թթ. նա աշխատել է Չիկագոյում՝ Քաղաքային ադմինիստրատորների միջազգային ասոցիացիայում: Նրա առաջին հոդվածները մունիցիպալ գործունեության քանակական գնահատման խնդրի մասին, որոնք տպագրվել են 30-ական թթ. վերջին, հիմք հանդիսացան 1939թ. Սայմոնի Կալիֆորնիայի համալսարանի հետազոտական խմբի ղեկավար նշանակելու համար, որը զբաղվում էր նույն թեմատիկայով: Հետազոտական ֆունդերի համար առանձնացված ժամկետի սպառումից երեք տարի անց Սայմոնը վերադարձավ Չիկագո, որպեսզի շարունակի ուսումը ասպիրանտուրայում: Ուսման հետ միաժամանակ նա 1942-1949թթ. սկզբին աշխատել է ասիստենտ-պրոֆեսոր, իսկ հետո՝ Իլլինոյսի տեխնոլոգիական ինստիտուտում քաղաքական գիտությունների պրոֆեսոր: 1943թ. դոկտորական աստիճանի ստացումից հետո Սայմոնը մնաց Չիկագոյի համալսարանում: 1949թ. նա Չիկագոյից տեղափոխվեց Պիտսբուրգ, որտեղ Քարմեզի-Մելլոնի համալսարանում օգնում էր Արդյունաբերական ադմինիստրացիայի նոր բարձրագույն դպրոցին: Այնտեղ նա դարձավ պրոֆեսոր կառավարման ոլորտում, իսկ հետո՝ հաշվիչ գիտությունների և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր: Սայմոնի վրա մեծ ազդեցություն է թողել համակարգիչների և արհեստական ինտելեկտի նշակման հետ նրա առնչությունը: Նրա նպատակն էր մարդկային մտածողության պատճենումը՝ հասկանալու համար, թե ինչպես է այն կառուցված: Դրա հետ կապված՝ Սայմոնն սկսեց մանրամասնորեն վերլուծել այն, թե ինչպես են մարդիկ

մտածում, և արդյունքում հանգեց սահմանափակ ռացիոնալության տեսության մեկերպմանը: Նա տարված էր նաև Ու. Միտչեին ոգեշնչած գաղափարով՝ հասարակական գիտությունները դարձնել նույնքան ճշգրիտ, որքան բնականները [9]:

Նա 1937թ.-ին ամուսնացել է Դորոթեա Պայի հետ [8, 9]: Ունի մեկ որդի և որկու դուստր: Սայմոնը հետաքրքրությունների ոլորտին էին պատկանում լեռնագնացությունները, գեղամկարչությունը, դաշնամուրային նվագը, զբոսանքները: Նա սահուն կերպով տիրապել է մի քանի լեզուների [9]:

1978թ. Սայմոնը տնտեսագիտության ոլորտում արժանացել է Նոբելյան մրցանակի «տնտեսական կազմակերպություններում որոշումների ընդունման գործընթացի նորարարական հետազոտության համար» [6]:

Բացի Նոբելյան մրցանակից, Սայմոնը 1969 ստացել է նաև Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի մրցանակը գիտության մեջ մեծ ներդրման համար: Նա եղել է Ամերիկյան տնտեսագիտական ասոցիացիայի, Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի, Էկոնոմետրիկ միության, Ամերիկյան սոցիոլոգիական ասոցիացիայի, ամերիկյան Գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Նրան պատվավոր գիտական աստիճաններ են շնորհվել Չիկագոյի, Ելի, Մակգիլլի, Լուինդի և Էրազմի համալսարանների կողմից:

Մահացել է 2001 թվականի փետրվարի 9-ին:

ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Կազմեցին Լ.Մելքունյանը, Է. Մուրադյանը, Տ. Հացագործյանը

Հերբերտ Սայմոնն առաջինն էր, ով տնտեսագիտության սահմաններում որոշման ընդունման հետազոտություններում կարևորեց հոգեբանական գիտելիքը և դրանով իսկ հիմքեր դրեց որոշման ընդունման հոգեբանական ուսումնասիրությունների համար: Կազմակերպչական վարքի մի քանի տարվա ծավալուն հետազոտությունների արդյունքում 1947թ.-ին Հ. Սայմոնը հրատարակում է «Ադմինիստրատիվ վարք» աշխատությունը, որում նա զարգացնում է Չ. Բարնարդի գաղափարները դրդապատճառվածության և որոշումների ընդունման մասին: Աշխատության նպատակն էր ցույց տալ կազմակերպչական որոշումների ընդունման գործընթացի առանձնահատկությունները: Նրա կենտրոնական գաղափարն այն է, որ որոշումների ընդունումը վարչարարության սիրտն է: Վարչարարության նկարագրության լեզուն և կոնցեպտուալ շրջանակները պետք է հիմնվեն մարդու կատարած ընտրության տրամաբանության և հոգեբանության վրա, այսինքն՝ տնտեսագիտական տեսության և հոգեբանության վրա:

Սայմոնի տեսությունը հիմնվում է մարդկային որոշումների ընդունման դասական, իդեալական և ռացիոնալ մոդելի վերլուծության վրա: Ըստ Սայմոնի՝ խնդիրը ոչ թե մոդելի քննադատությունն է, այլ դրա հասկացումը: Որոշման ընդունման ռացիոնալ մոդելը ստացել է նաև «տնտեսող մարդ» անվանումը: Տնտեսող մարդը ներկայացնում է օբյեկտիվ ռացիոնալությունն իդեալական մոդելով: Իրականում, սակայն, այս մոդելը հնարավորությունները սահմանափակ են: Մարդը սահմանափակված է անգիտակցական կառույցների, սովորությունների, ռեֆլեքսների, արժեքների կողմից, ինչպես նաև գիտելիքներով ու հասանելի տեղեկատվության չափով, ինչը կարող է շեղել կազմակերպչական նպատակներից: Ակտուալ վարքն, այսպիսով, սահմանափակ է՝ համեմատած օբյեկտիվ ռացիոնալության հետ: Ըստ Սայմոնի՝ այդ սահմանափակումների պատճառները երեքն են.

1. ռացիոնալությունը ենթադրում է յուրաքանչյուր ընտրության բոլոր հետևանքների լիարժեք իմացություն, ինչն իրականում միշտ մասնակի է,
2. քանի որ որոշման ընդունման հետևանքները վերաբերում են ապագային, երևակայությունը պետք է փորձված հույզերի անբավարարությունը փոխհատուցի դրանց արժեքներ վերագրելով: Այդ արժեքները, սակայն, չեն կարող կատարյալ կանխատեսման հնարավորություն ընձեռել,
3. ռացիոնալությունը պահանջում է ընտրություն վարքի բոլոր հնարավոր այլընտրանքներից: Սակայն իրական կյանքում որոշումներ ընդունելիս այլընտրանքների միայն մի մասն է հաշվի առնվում:

Ի տարբերություն տնտեսող մարդու, որը ձգտում է օգուտի մաքսիմիզացիայի, ադմինիստրատիվ մարդն առաջնորդվում է բավարարման մոդելով: Բացի այդ, մինչ տնտեսող մարդն առնչվում է իրականության ամբողջական պատկերի հետ, ադմինիստրատիվ մարդը որոշում է կայացնում՝ ելնելով աշխարհի պարզեցված մոդելից:

Անդրադառնալով վարչարարության արդյունավետ կազմակերպմանը՝ Սայմոնն առանձնացնում է կազմակերպչական ազդեցության 5 մեխանիզմներ՝ հեղինակություն, հաղորդակցություն, թրեյնինգ, արդյունավետություն և կազմակերպչական նույնականություն, լոյալություն (2):

1957թ.-ին այդ հայացքները իրենց առավել լիարժեք արտահայտումն են գտնում «Մարդու մոդելները» գրքում: «Մարդու մոդելները» (Models of Man, 1957) և «Կազմակերպություն» (Organization, 1958) գրքերում Սայմոնը շարունակում է զարգացնել «Ադմինիստրատիվ վարք»-ում ամփոփված հիմնադրույթները: Նա պնդում է, որ որոշման ընդունման մասին դասական տեսությանը պակասում է կարևոր մի տարր. այն մարդկանց վարքային և ճանաչողական գործընթացների նկարագրությունը, ովքեր տեղեկատվություն են մշակում /վերլուծում/ և որոշումներ ընդունում: Սայմոնի գործընկեր Ջեյմս Մարչի խոսքերով, Սայմոնը նախ և առաջ շեշտը դնում էր մարդու հիշողության սահմանափակության վրա, ինչպես նաև մարդու կողմից հաշվարկներ կատարելու անկարողության վրա՝ կարծելով, որ այդ հատկությունները բացահայտ խոչըն-

դոտներ են բացարձակ ռացիոնալ վարքի համար: Այդպիսով նա ճանապարհ բացեց այլ գիտնականների հետազոտությունների համար, ինչի արդյունքում առաջացավ կոլեկտիվ հայեցակարգ, որը կարելի է անվանել սահմանափակ կամ կապակցված ռացիոնալության տեսություն (3, 9):

Անդրադարձ կատարելով Թ. Վերլենի գաղափարներին՝ Սայմոնը քննադատության է ենթարկում սպառողների և կազմակերպությունների մաքսիմիզացնող վարքի մասին տեսությունը: Իրական տնտեսության մեջ մարդիկ իրենց այլ կերպ են դրսևորում, և Սայմոնը դա բացատրում է նրանց մտածողության առանձնահատկություններով: Նախ՝ գոյություն ունի ձգտումների որոշակի մակարդակ (aspirational level), որը մարդն իր համար բավարարող է համարում, և որին նա ձգտում է: Եթե նա չի կարող դրան հասնել որոշակի ժամանակի ընթացքում, այդ մակարդակը վերանայվում է և նվազեցվում: Եթե դա տեղի չի ունենում, ապա սկսում է ապաթիա, ագրեսիա և այլն: Սպառողները ձգտում են որոշակի բավարարող վիճակի, իսկ կազմակերպությունները ձգտում են վաճառքի և եկամուտների որոշակի բավարարող մակարդակի: Ըստ Սայմոնի՝ սպառողի կամ կառավարիչի գործողությունների սկզբունքը ոչ թե առավելագույնի հասնելն է, այլ բավարարումը: Երկրորդ՝ Սայմոնը քննադատում էր մարդկանց հաշվողական ընդունակությունների մասին ենթադրությունը: Ցանկացած սպառող կամ կազմակերպության ղեկավար ունի օպտիմալ որոշում, որն իսկապես մաքսիմիզացնում է նրա նպատակային գործառույթը: Բայց խնդիրն այն է, որ այդ որոշումը պետք է գտնել նախքան այն ընդունելը: Մարդը պետք է վերլուծության ենթարկի անհամար քանակության այլընտրանքներ: Ըստ Սայմոնի՝ ոչ մի անձ չի կարող իրականում մաքսիմիզացնել իր նպատակային գործառույթի նշանակությունը, քանի որ չգիտի, թե կոնկրետ ինչպես պետք է գործի: Միաժամանակ, կազմակերպության ղեկավարը չի կարող մաքսիմիզացնել կազմակերպության եկամուտը, քանի որ չի կարող դիտարկել բոլոր հնարավոր այլընտրանքները (2, 8):

Այսպես, սպառողների կողմից օգտակարության և կազմակերպությունների ղեկավարների կողմից եկամուտների մաքսիմիզացիային ձգտելու մասին տեսության քննադատության մեջ ընդգծվում է, որ.

1. Այդ տեսությունը չի պարզաբանում, թե որ եկամուտը պետք է մաքսիմիզացվի՝ երկարաժամկետ՞որը, թե՞ կարճաժամկետը:
2. Իր գործունեության արդյունքում ձեռնարկատերը ստանում է նաև տարատեսակ «հոգեբանական շահույթներ», այլ ոչ թե միայն դրամական վարձատրություն: Եթե նա ցանկանում է մաքսիմիզացնել օգտակարությունը, նա պետք է մշտապես ընտրություն կատարի մի կողմից եկամուտների, կորստի, մյուս կողմից «հոգեբանական շահույթի» միջև: Եթե մենք հաշվի առնենք «հոգեբանական շահույթը», ապա եկամտի մաքսիմիզացիայի չափանիշը կկորցնի իր որոշակիությունը:
3. Ձեռնարկատիրոջը կարող է բացարձակապես չմտաժողել մաքսիմիզացիան, նա կարող է պարզապես ցանկանալ ստանալ այն շահույթը, որը համարում է իր համար բավարար: Յնտորեն օգտագործելով բարոյական բավարարվածության մասին միտքը՝ բավարարող շահույթին ձգտելը ևս կարելի է դիտարկել որպես օգտակարության մաքսիմիզացիա, բայց օպերացիոնալ կերպով դա իրականացնելն այնքան էլ հեշտ չէ: «Բավարար եկամուտը» իր իմաստով առավել կապված է ձգտումների մակարդակների հասկացության, քան մաքսիմիզացիայի հետ:
4. Ժամանակակից պայմաններում հաճախ բաժնետեր-սեփականատերերը և իրական կառավարիչները տարբեր անձիք են, և վերջինները կարող են և հետաքրքրված չլինել եկամտի մաքսիմիզացիայի մեջ:
5. Ոչ լիարժեք մրցակցության պայմաններում մաքսիմիզացիան կասկածելի նպատակ է, քանի որ մի կազմակերպության համար օպտիմալը կախված կլինի մյուս կազմակերպությունների վարքից (10):

Սայմոնը դիտարկում է նաև, որ մյուս սոցիալական գիտություններում ևս կիրառվում է ռացիոնալության հասկացությունը, բայց ոչ այնպիսի նրբացված իմաստով, ինչպես տնտեսագիտության մեջ: Սոցիալական փոխանակման բոլոր տեսությունները (Ձիմնելի տեսությունից սկսած) նույնպես ելնում են մարդկանց ռացիոնալությունից: Սակայն իրական աշխարհում բացարձակ ռացիոնալության փոխարեն առկա է սահմանափակ ռացիոնալություն (bounded rationality). մարդը դիտարկում է ոչ մեծ քանակությամբ

իրարից էականորեն տարբերվող այլընտրանքներ և ընտրում է այն, որը առավել շատ է համապատասխանում իր ձգտումներին: Սա համապատասխանում է բավարարման մասին ենթադրությանը, բայց և հակասում է եկամտի մաքսիմիզացիայի մասին ենթադրությանը: Սայնոնը քննադատության է ենթարկում նաև տնտեսագիտական իմպերիալիզմը ձևականացման գերկիրառության և այլ սոցիալական գիտությունների թերազնահատման համար (6, 9):

Անդրադառնալով տնտեսագիտական տեսության մեջ ռացիոնալություն հասկացությանը՝ նա ընդգծում է երեք հիմնական գաղափարներ.

- Անհրաժեշտ է զարգացնել այն միտքը, որ մարդկային վարքը գրեթե միշտ ներառում է ռացիոնալ բաղադրիչ, բայց միայն այն դեպքում, եթե նկատի ունենք ոչ թե տնտեսագետների կողմից կիրառվող ռացիոնալության յուրահատուկ մեկնաբանությունը, որը կապված է մաքսիմիզացիայի հետ, այլ այդ հասկացության առավել լայն, առօրյա գործածական իմաստը:
- Բուն տնտեսագիտական տեսությունը բնավ էլ իրեն չի սահմանափակում ռացիոնալության մեղ սահմանումով: Տնտեսագիտական գրականության զգալի մասում (օրինակ՝ համեմատական ինստիտուցիոնալ վերլուծությանը նվիրված գրականության մեջ) լայն գործածություն են գտել ռացիոնալության առավել նուրբ չափանիշներ, և առավել խիստ սահմանումների ներդրումը հազիվ թե էականորեն բարելավեր այդ աշխատանքները: Այն դեպքերում, երբ առավել թույլ սահմանումը համապատասխանում է վերլուծության նպատակներին, տնտեսագիտական տեսությունը կարող է շատ բան քաղել մյուս սոցիալական գիտակարգերից:
- Տնտեսագիտական տեսությունը հիմնականում զբաղվել է ռացիոնալ ընտրության արդյունքներով, այլ ոչ թե ընտրության գործընթացով: Սակայն, քանի որ տնտեսագիտական տեսությունն իր հետաքրքրությունների շրջանակների մեջ է ընդգրկում ամորոշության պայմաններում ընտրության դինամիկ կողմերը, աճող նշանակություն է ձեռք բերում ընտրության գործընթացների հետազոտությունը: Ձեռքբե-

րուններն արհեստական ինտելեկտի և կոգնիտիվ հոգեբանության հետազոտությունների ոլորտում կարող են տնտեսագիտական տեսության մեջ էապես խորացնել մեր պատկերացումները դինամիկ ռացիոնալության մասին (1, 7):

Այստեղ է, որ առաջին անգամ որոշման ընդունման գործընթացներում առաջին պլան եկան նրա հոգեբանական ուսումնասիրման հիմնահարցերը: Սայմոնը որոշման ընդունման գործընթացում շեշտը դնում էր ընտրության վերջնական գործողության՝ այլընտրանքների միջև ընտրության վրա: Նա այդ գործընթացում տարբերակում էր երեք փուլ.

1. Ինտելեկտուալ ակտիվության և շրջապատող միջավայրում լուծում պահանջող պայմանների որոնման փուլ,
2. Որոշումների մշակման փուլ, այսինքն՝ գործողությունների հնարավոր ուղիների որոշման փուլ,
3. Որոշման այլընտրանքի վերջնական գնահատման և ընտրության փուլ (3, 11):

Սայմոնն առանձնացնում է որոշման երկու տեսակ՝ ծրագրավորված և չծրագրավորված: Առաջիններին բնորոշ են հայտնի շաբլոնի տարրերը և կրկնվողությունը, ինչը հեշտացնում է այս տեսակի որոշումների մշակման և ընդունման հնարքները, նվազեցնում է ստեղծագործական տարրերի անհրաժեշտությունը: Որոշումների երկրորդ տեսակին հատուկ է յուրահատուկ, ռազմավարական նշանակության խնդիրների ընտրությունը, որոնք հիմնվում են մոր երևույթների գնահատման և նախկինում անհայտ խնդիրների առաջադրման վրա: Այստեղ առաջին հերթին անհրաժեշտ է ստեղծագործական-վերլուծական մոտեցման կիրառումը:

Փորձարարական հետազոտությունները ցույց են տվել մի շարք խնդիրներ: Հետաքրքրականն այն է, որ որոշում կայացնելիս անձինք հիմնվում էին հիմնականում իրենց փորձի վրա. վաճառքների գծով մասնագետները տեսնում էին վաճառքին վերաբերող խնդիրներ, գործադիր մենեջերները կազմակերպության ներքին խնդիրներ: Սայմոնը նշում է, որ որոշում ընդունելու գործընթացում փորձարարական հետազոտությունների պակաս է զգացվում: Դա կապված է նրա հետ, որ դրանք շատ ծախսատար և ժամանակատար են:

Ըստ Սայմոնի՝ աշխատանքային հարաբերություններում հետաքրքրական է այն փաստը, որ իրական պայմաններում մարդիկ նախընտրում են լինել ինչ-որ մեկի աշխատողը, այսինքն՝ ընդունել նրա հեղինակությունը, ցանկությունը (11):

Հաջորդ հարցը, որին անդրադարձ է կատարել Սայմոնը, այն է, թե ինչու՞ են այդքան շատ հիերարխիկ կառույցները: Անորոշության պայմաններում պատճառներից մեկը կապված է գործատուի հետ, քանի որ գործատուն միանշանակ չգիտի՝ ինչ է ցանկանում իր աշխատողից օրինակ՝ քարտուղարուհի ընտրելիս չգիտի, թե ինչ տիպի նամակ կկարգադրի գրել, մյուս կողմից՝ աշխատողի համար որոշակի շրջանների սահմանում միևնույն է ինչ գործ կատարել, օրինակ՝ ինչ նամակ գրել: Աշխատանքային պայմանագիրը հնարավորություն է տալիս հետաձգել այդ որոշումը մինչև գործողության պարզ դառնալը:

Լավ կառավարչի ամենատեղյակ ընդունակություններից մեկն, ըստ Սայմոնի, այն է, որ արագ ընկալելով ողջ իրավիճակը՝ նա կարողանա ընդունել ճիշտ որոշում անգամ այն իրավիճակներում, երբ ճշգրիտ տրամաբանական հաշվարկի հնարավորություն չկա: Այդ ընդունակությունը Սայմոնն անվանում է ինտուիցիա: Այս հասկացության բացատրության համար ամերիկյան գիտնականն օգտագործում է շախմատիստի մտածողության հետ մնանությունը: Բարձր որակավորման շախմատիստները (միջազգային վարպետներն ու գրոսմայստերները) այլընտրանքների հաշվարկման արագությամբ, խորությամբ և լայնությամբ շատ չեն գերազանցում ավելի թույլ խաղացողներին, բայց ցուցադրում են դիրքերի վայրկենական և ամուր մտապահման բացառիկ ընդունակություն: Սայմոնը եզրակացնում է, որ այստեղ հարցը շախմատիստների կարծաժանկետ հիշողության մեջ չէ միայն, այլ բանն այն է, որ նրանք տիրապետում են մեծ քանակով համադրությունների, որոնք ներկայացնում են տիպիկ զինվորների և ֆիզուրային կառույցները շախմատային տախտակի վրա: Բախվելով նոր դիրքի հետ՝ լավ շախմատիստը տեսնում է ոչ թե 20-30 առանձին ֆիզուրներ, այլ մի քանի ծանոթ կոնֆիգուրացիաներ, որոնցից յուրաքանչյուրը ներառում է ֆիզուրների և զինվորների որոշակի քանակ: Այդ մի քանի կոնֆիգուրացիաները չեն գերբեռնում կարճատև հիշողությունը և կարող են ճիշտ վերարտադրվել: Սայմոնի կարծիքով վարպետների արդ-

յունքները կարող են բացատրվել նրանց երկարատև հիշողության մեջ 50 000 տիպիկ ֆիզիոլոգիկ դիրքերի համադրությունների առկայությամբ, ինչը մոտ է մայրենի լեզվի բառապաշարի քանակին, որը պահվում է մեր հիշողության մեջ (4):

Սայմոնը ենթադրում էր, որ ինտուիցիայի բնույթը համապատասխան կերպով կառուցված մախկին փորձի առկայության շնորհիվ իրավիճակն ակնթարթորեն որսալու մեջ է: Այդ ակնթարթային որսալու գործընթացը հակադրվում է տրամաբանական մտածողությանը, որն իր արդյունքին է հանգում մտահանգումների շղթայի հաջորդական իրականացման ճանապարհով: Չնայած Սայմոնը հատուկ ուշադրություն չի դարձնում համադրությունների ձևավորման խնդրի հետազոտությանը, ակնհայտ է, որ դրանք ձևավորվում են համապատասխան ուղորտում խնդիրների լիովին գիտակցված և երկարատև լուծման արդյունքում: Այս իմաստով ինտուիցիան կարող է լինել լիովին հասկանալի՝ որպես որոշակի դասի խնդիրների լուծման հարցում մասնագետների մտածողական գործընթացների ավտոմատացում և կրճատում (3, 4):

Հետագայում Սայմոնը սկսում է զբաղվել արհեստական բանականության և գիտության համակարգչայնացման խնդիրներով: Այդ հարցերի նկատմամբ հետաքրքրությունը նրա մոտ առաջացել է դեռևս 1952 թվականին՝ մի քննարկման ժամանակ, որը տեղի էր ունեցել Ալլեն Նյուելի հետ: Ա. Նյուելն այն ժամանակ աշխատում էր որպես գիտնական-հետազոտող «Ռենդ կորպորացիայում»: Նրանք միասին սկսում են հետազոտություններ անցկացնել համակարգչային մոդելավորման միջոցով խնդիրների լուծման ուղորտում: Հետագայում այդ ուղորտը դառնում է Սայմոնի գիտական գործունեության կենտրոնական մասը (12):


1961թ. Նյուելը տեղափոխվում է Կարնեգի-Մեյլոնի համալսարան և սկսում աշխատել Սայմոնի հետ: Շարունակելով աշխատանքը՝ այս երկու գիտնականները 1972թ. հրատարակում են «Մարդկային խնդիրների լուծումները» գիրքը /Human Problem Solving/, որում Սայմոնը անդրադառնում է կազմակերպությունների մեծության և նրանց տնտեսագիտական աճի միջև փոխադարձ կապի ուսումնասիրմանը և էական ներդրում է կատարում միկրոհամակարգերի ազդեցական խնդրի լուծման հարցերում (3):

Կառավարման, տնտեսագիտության և սոցիոլոգիայի մեջ Սայմոնն իրականացրել է քանակական մեթոդների կիրառության նորարարական մշակումներ: Ուղեղի գործունեության համակարգչային փոխաբերման հիման վրա ստեղծել է մտածողության մի շարք մեքենայական մոդելներ: Ա. Նյուելլի և Ջ. Շուրի հետ համատեղ, օգտագործելով Օ. Ջելցի հոգեբանական հետազոտությունների արդյունքները, մշակել է «Տրամաբան-տեսաբան» և «խնդիրների համակողմանի լուծող» համակարգչային ծրագրերը, որոնք հիմնված են այն ենթադրության վրա, որ մարդու էվրիստիկական գործունեությունն ընթանում է նույն կերպ, ինչպես հաշվողական գործընթացները կամ ծրագրերի իրականացումը: Իր մոդելներում Սայմոնը մատնանշում է մեկ կենտրոնական պրոցեսորի (հաշվիչի) առկայությունը, որը ելք ունի դեպի արտաքին միջավայր, կարծատև և երկարատև հիշողություն: Այդ մոդելները փորձարկվել են երկրաչափական թեորեմների ապացուցման, կրիպտոհանրահաշվական խնդիրների լուծման և շախմատային խաղերի վրա: Նա մարդկանց խմբային վարքի վերլուծության համար կիբերնետիկայի կիրառման և սոցիոլոգիական մոդելավորման հիմնադիրներից մեկն է: Ստացված տվյալների հիման վրա Սայմոնը փոքր խմբերում առաջացող հարաբերությունները նկարագրում էր քանակական տվյալներով (5):

Սայմոնի տեսությունները քննարկվել են այնպիսի հեղինակավոր տնտեսագետների կողմից, ինչպիսիք են Էդուարդ Մեյսոնը, Ֆրից Մաչլապը և Միլտոն Ֆրիդմենը: Բարձր գնահատելով Սայմոնի կողմից առաջ մշակված որոշումների ընդունման նկարագրական տեսության առավելությունները՝ նրանք կասկածի տակ էին դնում նրա արժեքավորությունը տնտեսագիտական վերլուծության համար: Բացի այդ, նրա իրատեսական վերաբերմունքը որոշումների ընդունման գործընթացի նկատմամբ կասկածի տակ էր դնում հանընդհանուր հավասարակշռության տեսության հիմնական դրույթները և եկամտի ու օգտակարության գործառույթների մաքսիմիզացիայի և օպտիմիզացիայի հիպոթեզները, որոնց վրա հիմնված էր այս ժամանակաշրջանի տնտեսագիտությունը: Այնուամենայնիվ, իրարամերժ թվացող այդ մոտեցումները տնտեսագիտության մեջ վերաբերում են խնդիրների տարբեր համակարգերի, և հետևաբար, հանդիսանում են փոխլրացնող մոտեցումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Саймон Г.А.** Рациональность как процесс и продукт мышления // THESIS. 1993. Вып. 3. С.16 - 38. [1978]
2. **Simon Herbert A.** (1947) Administrative Behavior: A Study of Decision-Making Processes in Administrative Organizations, - 4th ed. in 1997, The Free Press
3. **Simon Herbert A.** (1972) Human Problem Solving. (with Allen Newell) Englewood Cliffs, NJ, USA, Prentice Hall
4. **Simon Herbert A.** (1987). Making management decisions: the role of intuition and emotion. In Academy of management executive.
5. **Simon Herbert A.** (1957) Models of Man. John Wiley. Presents mathematical models of human behaviour.
6. **Simon Herbert A.** (1982) Models of Bounded Rationality, Vols. 1 and 2. MIT Press. His papers on economics.
7. **Simon Herbert A.** (1997) Models of Bounded Rationality, Vol. 3. MIT Press. His papers on economics since the publication of Vols. 1 and 2 in 1982
8. **Simon Herbert A.** (1978) Rational decision-making in business organizations. Nobel Memorial Lecture, 8 December.
9. **Simon Herbert A.** (1972) Theories of Bounded Rationality. In: C.B. McGuire and ROY Radner teds. 1 , Decision and Organization, North-Holland Publishing Company, 161-76
10. **Simon Herbert A.** (1959) Theories of decision-making in economics and behavioral science. The American Economic Review, volume XLIX, Number three, June
11. http://en.wikipedia.org/wiki/Herbert_Simon
12. http://nobelprize.org/nobel_prizes/economics/laureates/1978/simon-autobio.html



Դանիել Կանեմանը (1934թ.) ծնվել է Թել-Ավիվում՝ Իսրայել։ Մանկությունն անցկացրել է Ֆրանսիայում և վերադարձել Իսրայել 1946-ին։ 1951թ.-ին ավարտում է դպրոցը և սկսում ուսումնասիրել հոգեբանություն և մաթեմատիկա Յրեական համալսարանում։ Ինչպես ինքն է նշում իր ինքնակենսագրականում. «Ես բավականին թույլ էի մաթեմատիկայից, սակայն հոգեբանությունը ինձ հմայեց։ Դեռևս առաջին կուրսում ինձ հետաքրքրեցին Կուրտ Լևինի տեսության հիմնարկությունները։ 50 տարի անց ես դեռևս շարունակում եմ Պրինստոնի համալսարանում իմ կողմից կարդացվող ներածական դասախոսության սահմաններում ընդգծել մարդու վարքի փոփոխության Լևինյան մոտեցումը։

1954թ.-ին Կանեմանն անցնում է ծառայության, ուր զբաղվում է մարզումների համար սպաների ընտրությամբ։ Հիմնական պարտականությունների մեջ է մտնում նաև նորակազմների դասակարգումը՝ անձի գնահատման տարբեր հարցազրույցների միջոցով, որոնք Կանեմանն ինքն էր մշակում։ Ջորջթաունից հետո Կանեմանը վերադառնում է Յրեական համալսարան, ուր լսում է գի-

տության փիլիսոփայության և տրամաբանության դասընթացներ։ Նրան առաջարկում են դիսերտացիոն աշխատանքի կրթաթոշակ և նա ընտրում է Բերկլին։

Բացատրելով, թե ինչու ընտրեց հոգեբանությունը, Կանեմանը գրում է. «Այդ տեղի ունեցավ 1941թ.-ի վերջին կամ էլ 1942թ.-ի սկզբին։ Հրեաները ստիպված էին կրել Դավիթի աստղը և սկսած 18:00-ից ենթարկվեին պարետային ժամին։ Ես գնացել էի խաղալու իմ քրիստոնեա ընկերոջ տուն և մնացել մինչ ուշ երեկո։ Երբ քայլում էի դատարկ փողոցով՝ նկատեցի մոտեցող գերմանացի զինվորի։ Նա կրում էր սև համազգեստ, որից, ինչպես ինձ ասել էին, ես պետք է առավել շատ վախենայի և զգուշանայի։ Մոտենալով նրան՝ փորձեցի արագ շրջանցել և նկատեցի, որ շատ ուշադիր ինձ է նայում։ Նա կանչեց ինձ և գրկեց։ Ես վախեցա, որ նա կտեսնի իմ հագուստի վրայի աստղը։ Սակայն նա խոսում էր իմ հետ շատ հուզական՝ գերմաներենով։ Դրանով նա ինձ գրավեց, հետո բացեց դրամապանակը, ցույց տվեց տղայի լուսանկարը և դրան տվեց։ Ես տուն վերադարձա՝ համոզված նրանում, որ մայրս ճիշտ է. **մարդիկ անսահման բարդ և հետաքրքիր են**։

Դ. Կանեմանի կյանքը վառ ցուցադրում է ժամանակակից գիտնականների կոսմոպոլիտիզմը։ Սկսելով ուսումը Յրեական համալսարանում (1954՝ բակալավրի աստիճան «հոգեբանություն և մաթեմատիկա» մասնագիտությամբ), Կանեմանն այն ավարտում է Բերկլիում (1961՝ «հոգեբանություն» մասնագիտությամբ դոկտորի աստիճան)։ Հաջորդող 17 տարիների ընթացքում դասավանդում է Երուսաղեմի Յրեական համալսարանում՝ համատեղելով ԱՄՆ-ի և Եվրոպայի մի շարք առաջատար բուհերում դասա-

խոսական աշխատանքի հետ (Քեմբրիջ, Չարվարդ, Բեռլին): Աղ տարիներին հիմնականում դասավանդում է «Վիճակագրական մեթոդները հոգեբանությունում» և «Ընկալման հոգեբանություն» դասընթացները: Զուգահեռ Կանեմանը զբաղվում է գիտական հետազոտական աշխատանքով միանգամից մի քանի իրեն հետաքրքրող ուղղություններով՝ տարբեր համալսարաններում: Կանեմանը նշում է, որ իր առաջին հաջողված փորձը կատարել է 1965թ.-ին, որն ուղղված էր տարբեր մտային աշխատանքների կատարման ընթացքում աչքի բիբի փոփոխությունների գրանցմանը: Դրա արդյունքում մտային ճիգի ուսումնասիրումը դառնում է նրա գիտական ուսումնասիրությունների կիզակետը Չարվարդի համալսարանում անցկացրած հետազոտական տարվա ընթացքում: 1967թ.-ին, երբ վերադառնում է Երուսաղեմ, Կանեմանն արդեն իրեն համարում է լիովին կայացած փորձարարական հոգեբան: 1970թ.-ին առժամանակ թողնում է աշխատանքը Իսրայելում՝ համատեղ գիտական ուսումնասիրություններ կատարելով ամերիկյան և կանադական մի շարք գիտնականների հետ: 1993թ.-ին զբաղեցնում է պրոֆեսորի պաշտոն ԱՄՆ Պրինստոնի համալսարանում, իսկ 2000թ.-ից նորից զուգահեռ դասավանդում Չրեական համալսարանում:

Նորբեյան հեղինակավոր մրցանակը ստանալիս իր ելույթում Կանեմանը հիշատակում Ամոն Տվերսկու անունը, որի հետ համատեղ աշխատանքի արդյունքում են ստացվել այն գիտական արդյունքները, որոնք 2002թ.-ին արժանացան տնտեսագիտության ոլորտում Նորբեյան մրցանակ շնորհող համաձայնագրի ուշադրությանը: Մասնավորապես նա նշում է. «Նորբեյան մրցանակ ստանալու պատիվը հազվադեպ է արտացոլում մեկ մարդու ներդրումը գիտության մեջ: Դա առավել վառ է երևում

ին պարագայում, քանի որ ես մրցանակ եմ ստանում այն աշխատանքի համար, որը բազում տարիներ առաջ կատարել եմ իմ մոտ ընկեր և գործընկեր Ամոն Տվերսկու հետ, որը կյանքից հեռացավ 1996թ.-ին: Այսօր նրա բացակայության միտքը ինձ շատ տխրեցնում է»:

Կանեմանը Տվերսկու հետ սկսում է համագործակցել 1969թ.-ին, երբ հրավիրում է վերջինիս հրավիրում է Չրեական համալսարան կարդալու դասախոսություններ իրադարձությունների հավանականությունների մասին: Նրանց առաջին համատեղ հոդվածը նվիրված էր փոքր թվերի օրենքին: Չեռազա համագործակցությունը բերեց էվրիստիկայի գիտական ուսումնասիրության արմատական առաջընթացի: Իրենց աշխատանքների մեծամասնությունում նրանք ուսումնասիրում էին հավանական մտածողության էվրիստիկական գծերը, առավելապես քննարկելով մատչելիությունը, ներկայացուցչականությունը, ամրապնդումը և ճշգրտումը:

1979թ.-ին լույս է տեսնում հանրահայտ «Չեռանկարների տեսությունը. ռիսիկ պայմաններում որոշումների ընդունման վերլուծությունը» համատեղ հոդվածը: Չոդվածի հեղինակներ Դ. Կանեմանը և Ա. Տվերսկին, հիմնադրելով *վարքային տնտեսագիտությունը* (behavioral economics), ներկայացնում են մեծ թվով փորձերի արդյունքներ, որոնց ընթացքում մարդկանց առաջարկվում էր տարբեր այլընտրանքների միջև կատարել ընտրություններ:

1992թ.-ին Դ. Կանեմանն ու Ա. Տվերսկին ընդլայնում են հեռանկարի սկզբնական տեսությունը, որի արդյունքում լույս աշխարհ է գալիս «գումարային հեռանկարի» տեսությունը: Նախ և առաջ այն հաշվարկված է մեծ թվով հեռանկարների համար, որոնց

բախվում է անհատը: Տեսության գործնական ստուգումը ցույց է տալիս, որ անհատները սխալվում են ռեսուրսների օպտիմալ բաշխման մեջ՝ փոխանակ դիվերսիֆիկացնել ռիսկերը, նրանք «դնում են բոլոր ձվերը մեկ արկղի մեջ»:

Նորեյան մրցանակը ստանալուց հետո իր առաջին ելույթում Կանեմանը նշում է, որ մրցանակը նշանակում է վարքային տնտեսագիտության հաջողությունների ընդունում, քանի որ արդեն իսկ ստեղծվել են վարքի ճշմարտաման հոգեբանական մոդելներ, որոնք թույլ են տալիս բացատրել տնտեսագիտական տեսության դրույթները և բազում տնտեսագիտական երևույթներ: Ըստ Կանեմանի տնտեսագիտության և հոգեբանության փոխհարաբերությունները ավելի ու ավելի բարդ և բազմալոզմանի են դառնում: «Տնտեսագի-

տության «եկեղեցին»,- նշում է Կանեմանը,- արդեն իսկ պարզատրել է մի քանի գիտնականների, ում հերետիկոս կհամարեր ավելի վաղ ժամանակաշրջանում: Ավանդական տնտեսագիտական վերլուծությունն այժմ կատարվում է որոշ բուն հոգեբանական գործոնների հաշվառմամբ: Սակայն տնտեսագիտության վերլուծական մեթոդաբանությունը կայուն և անփոփոխ է, որն էլ սահմանափակում է այս երկու գիտությունների ամբողջական երկխոսությունը: Այժմ նկատելի է, որ տնտեսագիտության ու հոգեբանության անջրպետը նեղանում է, սակայն դեռևս չկան անմիջական հեռանկարներ, որ այս երկու գիտությունները կգտնեն մարդու վարքի մեկնաբանման ընդհանուր տեսություն»:

ԱՆՈՐՈՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՀԵՌԱՆԿՄՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեցին Մ. Հարությունյանը, Լ.Թադևոսյանը, Մ.Սելիքյանը, Լ. Հովհաննիսյանը

Դանիել Կանեմանը հոգեբանական (վարքային) տնտեսագիտական տեսության հիմնադիրներից մեկն է: Նա 2002թ.-ին արժանացել է Նորեյան մրցանակի տնտեսագիտության բնագավառում՝ «տնտեսագիտական գիտության մեջ հոգեբանական մեթոդիկայի կիրառման, մասնավորապես՝ անորոշության պայմաններում դատողությունների ձևավորման և որոշումների ընդունման ուսումնասիրությունների համար»:

Չնայած, որ մասնագիտությամբ Կանեմանը հոգեբան է, տնտեսագետներն ընդունում են նրա ներդրումը տնտեսագիտական գիտության մեջ, ուստի Նորեյան մրցանակի շնորհումը համաձայնության արժանացավ մաս տնտեսագետների կողմից: Կանեմանի հետազոտությունների գլխավոր օբյեկտն անորոշության

պայմաններում մարդու կողմից որոշումների ընդունման մեխանիզմներն են: Նա ապացուցել է, որ մարդկանց կողմից ընդունվող որոշումներն էականորեն տարբերվում են այն բանից, ինչը տրված է homo economicus ստանդարտ տնտեսագիտական մոդելով: «Տնտեսական մարդու» մոդելի քննադատությամբ զբաղվել են նաև մինչ այդ (օրինակ, նոբելյան մրցանակակիրներ Յերբերտ Սայմոնը և Մորիս Ալլեն), բայց հենց Կանեմանը և իր գործընկերներն առաջին անգամ սկսեցին համակարգված ուսումնասիրել որոշման ընդունման հոգեբանության այդ կողմը:

Կանեմանը և նրա գործընկեր Ա. Տվերսկին հավանականությունների վրա հիմնված որոշման ընդունման տեսությունների փոխարեն առաջարկեցին նոր տեսություն՝ հեռանկարի տեսությունը (prospect theory): Այդ տեսության համաձայն մարդն ընդունակ չէ գնահատելու ապագա շահերը բացարձակ ձևով. իրականում նա համեմատում է դրանք որոշակի համընդհանուր ստանդարտի հետ՝ ձգտելով, նախ և առաջ, խուսափել իր վիճակի վատթարացումից: Յեռանկարի տեսության միջոցով կարելի է բացատրել մարդու շատ ոչ ռացիոնալ արարքներ, որոնք բացատրելի չեն «տնտեսական մարդու» տեսանկյունից:

Նոբելյան կոմիտեի կարծիքով, ցուցադրելով, թե ինչքան վատ են մարդիկ կարողանում կանխատեսել ապագան, Գ. Կանեմանը «բավականին հիմնավորված ձևով հարցականի տակ դրեց տնտեսագիտական տեսության ֆունդամենտալ կանխադրույթների գործնական արժեքը»: Իհարկե, դրանում կա ոչ միայն Կանեմանի արժանիքը, և պարզատրման ժամանակ նա անկեղծորեն խոստովանում է, որ Նոբելյան մրցանակի արժանանալը հազվադեպ է արտահայտում գիտության մեջ միայն մեկ մարդու ներդրումը:

Շատ որոշումներ, որոնք մարդն ընդունում է ինչպես քիչ նշանակալի այնպես էլ կարևոր հարցերում, կախված են իրադարձությունների ակնհայտ հավանականությունից: Քանի որ նմանատիպ իրավիճակների հավանականության հաշվարկի համար մարդը չունի աղեկվատ ֆորմալ մոդելներ, դրանց գնահատումն անպայման սուբյեկտիվ և ինտուիտիվ է: Այն, թե ինչպես են մարդիկ գնահատում հավանականությունները, մեծ հետազոտական հետաքրքրություն է առաջացրել:

Կանեմանը գտնում է, որ շատ որոշումներ հիմնված են անորոշ իրավիճակների վերաբերյալ համոզմունքների վրա: Ինչպե՞ս են մարդիկ գնահատում անորոշ իրավիճակի հավանականությունը կամ անորոշ մեծության նշանակությունը: Մարդիկ հիմնվում են սահմանափակ թվով էվրիստիկ սկզբունքների վրա, որոնք հավանականությունների գնահատման և մեծությունների նշանակության կանխատեսման բարդ խնդիրները դատողության առավել պարզ օպերացիաների են հանգեցնում: Ընդհանրապես այդ էվրիստիկաները բավականին օգտակար են, բայց հաճախ դրանք հանգեցնում են լուրջ և կրկնվող սխալների: Հետազոտությունները դուրս են բերել որոշման ընդունման մի քանի էվրիստիկաներ, որոնք կապված են բնութագրական սխալների և նախապաշարմունքների հետ: Քննարկենք էվրիստիկաները, որոնք օգտագործվում են անորոշության պայմաններում գնահատում կատարելիս: Բայց մինչ այդ դիտարկենք բազային նշանակության ազդեցությունը, որոնց հետ կապված են այդ էվրիստիկաները (4, 12):

Շատ իրավիճակներում մարդկանց անհրաժեշտ է գնահատել որոշակի նպատակային իրադարձության հավանականությունը, օրինակ, հիվանդի ախտորոշումը՝ հիմնվելով բազային նշանակության հաճախականության (օրինակ, տարբեր ախտորոշումների հաճախականության) վրա: Կանեմանը գտնում է, որ անկախ փոփոխականները կարող են երկու տիպի լինել՝ ընթացակարգային և ապացուցող: Ընթացակարգային փոփոխականները վերաբերում են պրոյեկտի հատկություններին, խնդիրներին, ցուցադրումներին, իսկ ապացուցվողները վերաբերում են աղբյուրի տիպին և վկայությունների մեկնաբանություններին: Ընթացակարգային փոփոխականի օրինակ է այն, թե արդյո՞ք փորձարկվող յուրաքանչյուր խնդրին վերաբերվում է որպես առանձին դեպք, թե՞ մոտենում է դրա վերլուծությանը՝ ունենալով բազմազան կանխատեսումներ:

Ընթացակարգային փոփոխականը ներխմբային և միջխմբային պլանների միջև տարբերությունն է: Օրինակ, բազային նշանակություններն ունեն ավելի մեծ ազդեցություն, երբ դրանք տարբեր են փորձարկվողներին ներկայացված տարբեր խնդիրներում, քան, երբ տարբեր բազային համամասնություններ ներկայացված են տարբեր փորձարկվողներին:

Պատճառային կոչվում է այն դեպքում, երբ ենթադրում է պատճառային գործոնի առկայություն, որը բացատրում է, թե ինչու է առանձին իրավիճակը բերում, ավելի շուտ, մի ելակետի, քան՝ մյուսի: Պատահական է, եթե այն չի տանում այդպիսի ենթադրության: Այդենի գիտափորձերից մեկում հարցվողները գնահատել են ուսանողի հաջողությամբ հանձնած քննության հավանականությունը: Պատճառային բազային նշանակությունը հետևյալ կերպ է ներկայացված. 2 տարի առաջ Յելի համալսարանում հանձնում էին ավարտական քննություն: Մոտ 75%-ը անհաջող (հաջող) հանձնեցին: Այս բազային նշանակությունը պատճառային է, քանի որ այն ենթադրում է, որ քննությունը բացառապես դժվար էր (եթե մոտ 75%-ը չէր հանձնել) կամ շատ հեշտ (եթե մոտ 75%-ը հանձնել էր այն): Դուրս բերվող պատճառը՝ քննության դժվարությունը, բացատրում է բազային նշանակությունը, և քիչ (շատ) հավանական է, որ յուրաքանչյուր ուսանող կհանձնի քննությունը: Այս բազային նշանակությունը պատահական է, քանի որ ուսանողների համասանությունն ընտրվել էր ըստ հետազոտողի կռահման(7):

Մարդիկ սովորաբար հիմնվում են ռեպրեզենտատիվության (ներկայացուցչականության) էվրիստիկայի վրա, որում հավանականությունը որոշվում է ըստ ռեպրեզենտատիվության կամ նմանության: Օրինակ, երբ Ա-ն բավականաչափ ռեպրեզենտատիվ է Բ-ին, ապա այն բանի հավանականությունը, որ Ա իրադարձությունը բխում է Բ-ից, գնահատվում է բավական բարձր և հակառակը: Հավանականության գնահատման այս մոտեցումը հանգեցնում է սխալների, որովհետև առանձին գործոնները, որոնք պետք է ազդեն հավանականության գնահատման վրա, նմանության կամ ռեպրեզենտատիվության վրա ազդեցություն չեն ունենում:

Ռեպրեզենտատիվության վրա չազդող, բայց հավանականության վրա բավականին մեծ ազդեցություն ունեցող գործոններից մեկը մախորդող հավանականությունն է կամ արդյունքների բազային նշանակությունների (ելքերի) հաճախականությունը (6, 12):

Ռեպրեզենտատիվության էվրիստիկային հետ կապված հաջորդ խնդիրը, որի քննարկմանն անդրադարձել է Կանենանը ընտրանքի չափի նկատմամբ անզգայությունն է:

Ամբողջից ընտրված ընտրանքի մեջ կոնկրետ արդյունքի ստացման հավանականությունը գնահատելու համար մարդիկ սովորաբար կիրառում են ռեպրեզենտատիվության էվրիստիկան: Այսինքն, մարդիկ գնահատում են արդյունքի հավանականությունն ընտրանքի մեջ այն աստիճանով, ինչքանով այդ արդյունքը նման է ամբողջ ընտրանքին: Մարդը կարծում է, որ իրադարձությունների հաջորդականությունը, կազմակերպված որպես պատահական գործընթաց, ներկայացնում է այդ գործընթացի էական բնութագիրը, նույնիսկ, եթե հաջորդականությունը կարճ է: Այն, թե որքանով է նկարագրությունը բարենպաստ հանդիսանում, կախված չէ այդ նկարագրության հավաստիությունից կամ այն աստիճանից, որով այն թույլ է տալիս ճշգրիտ կանխատեսում անցկացնել: Հետևաբար, եթե մարդիկ կանխատեսում են անում, հիմնվելով միայն նկարագրության բարենպաստ լինելու վրա, նրանց կանխատեսումները անզգայուն կլինեն նկարագրության հուսալիության և կանխատեսման ակնկալվող ճշգրտության նկատմամբ:

Չհիմնավորված վստահությունը, որը հանդիսանում է կանխատեսվող արդյունքի և մուտքային տվյալների հաջող համընկման արդյունք, կարող է անվանվել վալիդության պատրանք: Այդ պատրանքը պահպանվում է նաև այն դեպքում, երբ մարդը գիտի գործոններ, որոնք սահմանափակում են իր կանխատեսման ճշգրտությունը (6, 11):

Կանենմանն ուսումնասիրում է այնպիսի իրավիճակներ, որոնցում մարդիկ գնահատում են դասի հաճախականությունը կամ իրավիճակների հավանականությունը հեշտության հիմքի վրա, որով նրանք հիշում են դեպքերի կամ իրադարձությունների օրինակները: Գնահատման այդ էվրիստիկան կոչվում է «հասանելիություն»: Հասանելիությունը շատ օգտակար է իրադարձությունների հաճախականության կամ հավանականության գնահատման համար: Այն, որ ասոցիատիվ կապերն ամրապնդվում են կրկնության ժամանակ, ամենահին կանոնն է: Հասանելիության էվրիստիկան օգտագործում է այս կանոնի հակառակ ձևը, այսինքն զուգորդումների ուժը՝ որպես հաճախականության գնահատականի հիմնավորում: Այս տեսությունում հասանելիությունը հանդիսանում է, ավելի ճիշտ, փոփոխական միջնորդ, քան՝ անկախ փոփոխական: Հասանելիությունը հուսալի բանալի է հաճախականության գնահատման համար,

քանի որ մասնավոր դեպքերն ավելի հեշտ է հիշել կամ պատկերացնել, քան հազվադեպները: Սակայն հասանելիության վրա ազդում են նաև այլ գործոններ, բացի հաճախականությունից և հավանականությունից: Հետևաբար համոզվածությունը հասանելիության նկատմամբ հանգեցնում է բավականին կանխատեսելի նախապաշարմունքների:

Երբ դասի չափը գնահատվում է դրա էլեմենտների հասանելիության հիմքի վրա, ապա դասը, որի էլեմենտները հեշտությամբ վերականգնվում են հիշողության մեջ, ավելի մեծաքանակ կթվա, քան այդ նույն չափի դասը, որի էլեմենտները քիչ հասանելի են և ավելի դժվար են հիշվում: Ի լրացում ճանաչելիությանը՝ կան այլ գործոններ, այնպիսին, ինչպիսին է հստակությունը, որով երևույթը վերականգնվում է հիշողության մեջ:

Հասանելիությունը հանդիսանում է պատրանքային կորելյացիայի էֆեկտի բնական բացատրություն: Այն բանի գնահատումը, թե որքան հաճախ են երկու երևույթներ փոխկապակցված և տեղի ունենում միաժամանակ, կարող է հիմնված լինել դրանց միջև զուգորդական կապի վրա: Երբ զուգորդումն ուժեղ է, կարելի եզրակացնել, որ իրադարձությունները հաճախ են տեղի ունեցել միաժամանակ: Հետևաբար, եթե իրադարձությունների միջև զուգորդումն ուժեղ է, ապա, ըստ մարդկանց գնահատման, դրանք հաճախ տեղի կունենան միաժամանակ:

Շարունակական կենսափորձը սովորեցրել է մեզ, որ ընդհանուր առմամբ, մեծ դասերի մասնիկները հիշվում են ավելի լավ և արագ, քան ավելի քիչ հաճախական դասերի մասնիկները, որ ավելի հավանական իրավիճակներն ավելի հեշտ է պատկերացնել, քան քիչ հավանականները, և որ զուգարդական կապերն իրադարձությունների միջև ամրապնդվում են, երբ իրադարձությունները հաճախ տեղի են ունենում միաժամանակ: Արդյունքում մարդն իր տրամադրության տակ՝ գնահատման համար, ստանում է ընթացակարգ (հասանելիության էվրիստիկան). դասի չափը, իրադարձության հավանականությունը կամ հաճախականությունը, որով իրավիճակները կարող են միաժամանակ տեղի ունենալ, գնահատվում են այն հեշտությամբ, որով կարող են իրականացվել համապատասխան մտային գործընթացները՝ հիշողության, վերարտադրության

կամ զուգորդման: Սակայն, գնահատման այդ ընթացակարգերը հանգեցնում են սխալների (9, 12):

Մոդելավորումը կարող է սահմանափակվել և կառավարվել մի քանի ձևով: Սկզբնական կետը, որից սկսվում է մոդելավորումը, կարող է մնալ նույնը կամ փոխվել, որպեսզի ստանա որոշակի չնախատեսված նշանակություն: Ելքերը կարող են չնշվել կամ կարող է դրվել նպատակային կետ, որը կբխի սկզբնական պայմանից: Մտային մոդելավորումից բխող կարողությունները և հավանականություններն օգտագործվում են գնահատման տարբեր խնդիրներում, ինչպես նաև ունեն ազդեցիկ դեր մի քանի հուզական վիճակներում:

Մտային մոդելավորումն օգտագործվում է հետևյալ գնահատման գործընթացներում.

1. կանխատեսում,
2. իրադարձության հավանականության գնահատում,
3. պայմանական հավանականության գնահատում,
4. հակադիր փաստերի վրա հիմնված գնահատում,
5. պատճառային կապի գնահատում:

Մոդելավորման էվրիստիկան, որն աղճատվում է նվազող փոփոխությունների օգտին, սպառնում է մեծ և կրկնվող սխալների առաջացման հնարավոր վտանգով (4):

Բազմաթիվ իրավիճակներում մարդիկ գնահատում են հավանականությունը՝ ելնելով սկզբնական մեծությունից, որը պատահական է ընտրվում: Տարբեր ելակետերը հանգեցնում են տարբեր գնահատականների, որոնք ուղղված են այդ ելակետերին: Այդ ֆենոմենը կոչվում է «կապման» էվրիստիկա:

«Կապումը» տեղի է ունենում ոչ միայն այն ժամանակ, երբ տրված է ելակետը, այլ նաև այն ժամանակ, երբ գնահատումը հիմնվում է ինչ-որ ոչ լիարժեք հաշվարկի արդյունքի վրա: Կանեմանը գտնում է, որ մարդիկ միտված են շատ բարձր գնահատել կոնյուկտիվ իրավիճակները և թերագնահատել դիզյունկտիվ իրավիճակների հավանականությունը: Այդ դիրքորոշումներն ամբողջությամբ բացատրվում են «կապման» էֆեկտով (12):

Հոգեբանական տեսանկյունից բանական է, որ մարդիկ ձգտում են հասնել իրադարձությունների հետևողական մեկնաբանության և որ դրա համար հիմք է ծառայում իրադարձությունների

կազմակերպումը պատճառահետևանքային հարաբերությունների սխեմայով: Մարդուն հատուկ է իրադարձությունների հաջորդականությունն ընկալել պատճառահետևանքային հարաբերությունների համատեքստում, նույնիսկ այն դեպքում, երբ նա լիովին գիտակցում է, որ հարաբերությունն իրադարձությունների միջև պատահական է և որ վերագրվող պատճառահետևանքային կապը պատրանքային է: Այս էվրիստիկաները բարձր տնտեսականություն և արդյունավետություն ունեն, բայց կանխատեսման մեջ կրկնվող սխալների են հանգեցնում: Այդ էվրիստիկաների և շեղումների բացատրությունը կարող է մեծ նշանակություն ունենալ ամորոշության պայմաններում որոշումների գնահատման և ընդունման մեջ:

Գնահատման էվրիստիկաներում համոզվածությունը հանգեցնում է կոգնիտիվ դիրքորոշումների: Բայց այդ դիրքորոշումները բնորոշ չեն դրդապատճառայնության էֆեկտների համար, օրինակ, ցանկալին իրականի տեղն ընդունելը կամ դատողությունների աղավաղումը խրախուսման կամ պատժման պատճառով: Հմուտ հետազոտողները ևս հակված են նույն նախապաշարմունքներին, երբ ինտուիտիվ են մտածում: Ունենալով վիճակագրության բնագավառում գիտելիքներ և խուսափելով տարրական սխալներից՝ ավելի խճճված և քիչ հասկանալի խնդիրների վերաբերյալ ինտուիտիվ դատողություններում այդ մարդիկ նույնպես կատարում են նմանատիպ սխալներ(8):

Կանխատեսման յուրաքանչյուր գործընթաց իր մեջ ներառում դատողություններ, ինտուիցիա և կռահում: Իրականում փորձագետների կարծիքը հանդիսանում է տեխնոլոգիական, քաղաքական և սոցիալական կանխատեսումների աղբյուր: Նրանք իրենց հայեցողության տակ ունենում են 2 տիպի ինֆորմացիա.

- մասնավոր ինֆորմացիա, որը ներառում է իր մեջ երևույթը բնութագրող տարրերը, որոնցով այն տարբերվում է մյուսներից,
- բաշխման ինֆորմացիա, որը բնութագրում է նախկինում պատահած դեպքերը և դրանց ելքերը:

Կանխատեսման յուրօրինակությունը կայանում է նրանում, որ այն կատարելիս համապատասխան ինֆորմացիա շատ քիչ է լինում կամ առհասարակ չի լինում: Կանեմանի հետազոտությունները վկայում են, որ կանխատեսման ժամանակ մարդիկ հակված են

մասնավոր ինֆորմացիայի օգտագործմանը, նույնիսկ, եթե այն թերի է կամ անհուսալի, և դա համարվում է ինտուիտիվ կանխատեսման սխալը: Պլանավորման կոնտեքստում կան շատ օրինակներ, որոնցում անտեսվել են նախկին փորձը և դրա ելքերը: Այն սխալերը, որոնք առկա են պլանավորման գործընթացում, բխում են բաշխման ինֆորմացիայի անտեսումից, այսինքն՝ գնահատման ներքին մոտեցումից: Գնահատման արտաքին մոտեցումը խնդրի դիտարկումն է որպես շատերից մեկը, և այն կիրառելիս կարելի է խուսափել սխալներից:

Կանեմանի կատարած հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ինտուիտիվ կանխատեսումները սերում են համադրումից: Մարդիկ հաճախ կանխատեսում են՝ համադրելով կռահումը և տպավորությունը: Սակայն կանխատեսման այս ձևն արդյունավետ չէ, որովհետև անտեսում է անորոշությունը: Վիճակագրական կանխատեսման հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ այն ամենաքիչը պետք է հենվի ինտուիցիայի վրա: Միջանկյալ իրավիճակներում կանխատեսումը պետք է լինի ռեզրեսիվ, այսինքն այն պետք է լինի դասի միջին նշանակության և կոնկրետ դեպքում ինչ-որ մեկի տպավորությունը լավագույն ձևով ներկայացնող նշանակության միջև:

Հետևյալ հինգ քայլերը փորձագետներին թույլ են տալիս կատարել ռեզրեսիվ կանխատեսում և ճիշտ օգտագործել մասնավոր ու բաշխման ինֆորմացիան.

1. ռեֆերենտային դասի ընտրություն,
2. ռեֆերենտային դասի համար բաշխման գնահատում,
3. ինտուիտիվ գնահատում,
4. կանխատեսման գնահատում,
5. ինտուիտիվ գնահատման շտկում (5):

Ըստ Կանեմանի նորմատիվ ընկալման սկզբունքները հասկանալու համար մարդն օգտագործում է պատրանքներ, իսկ հիշողությունը հասկանալու համար՝ մոռացումը: Սակայն դատողության սխալները յուրօրինակ են. դրանք շփոթեցնում են, և դրանցից խուսափում են: Դատողության սխալները հաճախ տանում են շփոթության. լուծումը, որն այդպես էլ մարդը չի կարողանում գտնել, ընկալելի չէ կամ իր իսկ կողմից արված սխալը գիտակցելով՝ իր համար այն մնում է նույնքան գրավիչ:

Գոյություն ունեն երեք փոխկապակցված պատճառներ, որոնք ֆոկլուսավորվում են կրկնվող սխալների և դատողության հետազոտման հետևանքների նախապաշարմունքների վրա.

1. դրանք ցույց են տալիս մեր որոշ սահմանափակումները և առաջարկում են մտածողության որակի բարձրացման միջոցներ,
2. սխալներն ու նախապաշարմունքները հաճախ պայմանավորում են հոգեկան այնպիսի գործընթացներ և էվրիստիկական պրոցեդուրաներ, որոնք կառավարում են դատողություններն ու հետևությունները,
3. սխալներն ու մոլորությունները օգնում են կազմել մարդու ինտուիցիայի քարտեզ և ցույց տալ, թե վիճակագրության կամ տրամաբանության ո՞ր սկզբունքներն են ոչ ինտուիտիվ կամ հակաինտուիտիվ (3):

Ինտուիցիա և ինտուիտիվ տերմինն օգտագործվում է երեք տարբեր իմաստներով.

1. դատողությունը կոչվում է ինտուիտիվ, եթե այն հասունացել է ոչ ֆորմալ և չհամակարգված դատողության հետևանքով, չեն օգտագործվել վերլուծական մեթոդներ կամ կանխամտածված հաշվարկներ,
2. բնության ֆորմալ կանոնները կամ փաստերը հանդիսանում են ինտուիտիվ, եթե համատեղելի չեն ոչ մասնագիտական աշխարհի մոդելի հետ,
3. կանոնի կամ ընթացակարգի մասին ասում են, որ դրանք հանդիսանում են մեր ինտուիտիվ խաղացանկի մաս, եթե դրանց հետևում ենք կամ ընդունում մեր հասարակ վարքով (2, 5):


Ամփոփելով անորոշության պայմաններում մարդու կողմից որոշման ընդունման Կանեմանի հետազոտությունները կարելի է նշել, որ կոգնիտիվ դիրքորոշումների էմպիրիկ վերլուծությունը մեծ նշանակություն ունի հավանականությունների գնահատման տեսական և կիրառական դերի համար: Հավանականության սուբյեկտիվ բնույթը շատ գիտնականների հանգեցրել է այն կարծիքի, որ ամբողջականությունը կամ ներքին հաջորդականությունն միակ չափանիշն են, որի հետ համեմատությամբ պետք է գնահատվեն հավանականությունները: Այդ չափանիշը լիովին բավարարող չէ, քա-

նի որ սուբյեկտիվ հավանականությունների ներքին հաջորդականություն ունեցող հավաքածուն կարող է համատեղելի չլինել այլ կարծիքների հետ, որոնց հետևում է մարդը: Դատողությունները պետք է համատեղելի լինեն մարդու մյուս բոլոր հայացքների հետ: Ցավոք, հավանական գնահատականների հավաքածուի և սուբյեկտի ամբողջ համակարգային հայացքների համատեղելիության գնահատման համար պարզ ֆորմալ գործընթաց չի կարող լինել: Ռացիոնալ փորձագետը, սակայն, պայքարում է դրանց համատեղելիության համար, նույնիսկ այն դեպքում, որ ներքին հաջորդականության ավելի հեշտ է հասնել և գնահատել: Մասնավորապես նա փորձում է իր հավանական դատողությունները առարկայի, հավանականության կանոնների վերաբերյալ գիտելիքների, գնահատման սեփական էվրիստիկայի և նախապաշարմունքների հետ համատեղելի դարձնել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Канеман Д., Тверски А.** Варианты неопределенности, // Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решения в неопределенности, стр. 582-595
2. **Канеман Д., Тверски А.** К вопросу о статистической интуиции, // Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решения в неопределенности, стр. 565-582
3. **Канеман Д., Тверски А.** Рациональный выбор, ценности и фреймы // Психологический журнал. – 2003. – Т. 24. - № 4. - С. 31-42.
4. **Канеман Д., Тверски А.** Эвристика моделирования, // Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решения в неопределенности, стр.232-240
5. **Тверски А., Канеман Д.** Интуитивное прогнозирование: предубеждения и корректирующие процедуры, // Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решения в неопределенности, стр. 473-482
6. **Тверски А., Канеман Д.** Оценки репрезентативности на основе репрезентативности // Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решения в неопределенности, стр. 105-121
7. **Тверски А., Канеман Д.** Очевидное воздействие базового значения, // Канеман Д., Словик П., Тверски А. Принятие решения в неопределенности, стр. 179-188

8. **Kahneman, D., & Tversky, A.** (1984). Choices, values and frames. *American Psychologist*, 39, 341-350.
9. **Kahneman, D.** (1991). Judgment and decision making: A personal view. *Psychological Science*, 2, 142-145.
10. **Kahneman, D., & Tversky, A.** (1979). Prospect theory: An analysis of decisions under risk. *Econometrica*, 47, 313-327.
11. **Tversky, A., & Kahneman, D.** (1971). Belief in the law of small numbers. *Psychological Bulletin*, 76, 105-110.
12. **Tversky, A., & Kahneman, D.** (1974). Judgment under uncertainty: Heuristics and biases. *Science*, 185, 1124-1131.



Պաուլ Սլովիկը (1938թ.) ծնվել է ԱՄՆ Իլինոյս նահանգում՝ Չիկագո քաղաքում: Բարձրագույն կրթությունը՝ հոգեբանություն մասնագիտությամբ, ստացել է 1959 թ.-ին Ստենֆորդի համալսարանում (բակալավորի աստիճան, B.A.), այնուհետև ուսումը շարունակել է Միչիգանի համալսարանում և 1962-ին ստացել է մագիստրոսի աստիճան (M.A.): 1964 թ.-ին ընդունվել է Միչեգանի համալսարանի ասպիրանտուրա (Ph.D.):

1986 թ.-ից առ այսօր Օրեգոնի համալսարանի պրոֆեսոր է: Նույն տարվանից նաև զբաղեցնում է համալսարանի Որոշման ընդունման հետազոտությունների կենտրոնի նախագահի պաշտոնը:

Պ. Սլովիկը եղել է Ամերիկյան հոգեբանական ասոցիացիայի տարբեր բաժանմունքների անդամ, Ռիսկի գործոնի վերլուծության կազմակերպության նախագահ, Վճիռների և որոշումների կայացման կազմակերպության ճառագայթման պաշտպանության և չափման գծով Ազգային խորհրդի անդամ:

Պաուլ Սլովիկը, լինելով Որոշման ընդունման հետազոտության հիմնադիրը և համապատասխան անվանումով կենտրոնի նախագահը, ուսումնասիրում

է մարդկային դատողությունը, որոշումներ կայացնելու գործընթացը և ռիսկերի վերլուծությունը: Նա և իր գործընկերները մշակել են աշխարհում ռիսկի ընկալումը նկարագրող և դրա ազդեցությունը անհատների, արդյունաբերության և կառավարության վրա գնահատող մեթոդներ: Սլովիկը այժմ աշխատում է որպես արդյունաբերության և կառավարության ոլորտի խորհրդատու:

Պաուլ Սլովիկը Ռիսկի իր ծավալած գործունեության համար ստացել է մի շարք պարգևներ՝ 1996 թ.-ին Ստոկհոլմի Տնտեսագիտության դպրոցում՝ պատվավոր դոկտորի աստիճան, 2005 թ.-ին Անգլիայի արևմտյան համալսարանում՝ պատվավոր դոկտորի աստիճան, ԱՄՆ Գիտությունների Ազգային Ակադեմիայի, Ազգային խորհրդի և Ազգային Յետազոտությունների խորհրդի անդամի կոչումներ: 1991 թ.-ին ստացել է այդ կազմակերպության «Առանձնահատուկ ավանդ» պարգևը: 1993 թ.-ին Հոգեբանների ամերիկյան միության կողմից նա ստացել է «Առանձնահատուկ Գիտական Ավանդ» պարգևը: Պ. Սլովիկը մի շարք միջազգային հեղինակավոր ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ է, իսկ 1988թ.-ից առ այսօր նաև որոշման ընդունման ոլորտում համաշխարհային ճանաչում ունեցող «Կարքային որոշումների ընդունում» ամսագրի խմբագրական խորհրդի անդամ:

Պաուլ Սլովիկը Ռ. Կանեմանի և Ա. Տվերսկու հետ 2001թ.-ին Քեմբրիջի համալսարանի հրատարակչությունում կազմակերպում է համաշխարհային ճանաչում վայելող «Որոշման ընդունումը ամորոշության պայմաններում. կանոններ և նախապաշարմունքներ» ժողովածուի հրատարակումը:

ՌԻՍԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ, ԳՆԱՋԱՏՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Կազմեցին է. Մաթևոսյանը, Վ. Խլղաթյանը, Ա. Սուքոյանը

Որոշման ընդունման հիմնահարցերի գիտական ուսումնասիրման հարացույցում արդեն մեկ դարից ավել է իրենց հաստատուն տեղն են զբաղեցրել ռիսկի ընկալման և գնահատման ուսումնասիրությունները: Առավել ևս, որ որոշման ընդունման անձնային բաղադրիչները մեկը ի թիվս ռացիոնալության ռիսկի ընկալումն է: Անձի կողմից ռիսկի ընկալման և ռիսկային պայմաններում որոշման ընդունման հարցերին իր գիտական գործուներթյան ծանրակշիռ մասը մվիրել է ամերիկյան հոգեբան Պաուլ Սլովիկը: Ռիսկի գործոնին մարդն առնչվում է իր կյանքի տարբեր ոլորտներում: Ռիսկի ընկալումը կարևոր դեր է խաղում մարդկանց որոշումներ կայացնելու գործընթացում, իսկ վերջինիս ընկալման հիմքում ընկած են անհամաձայնություններ, որոնք առկա են տեխնիկական փորձագետների, փորձագիտական տվյալների և հասարակության անդամների, տարբեր մշակույթների և մարդկանց հակադրությունների միջև:

Ռիսկ բառը փորձագետը կարող է մի պարբերության մեջ մի քանի անգամ կիրառել և յուրաքանչյուր անգամ տարբեր նշանակությամբ: Սովորաբար ռիսկ բառը կիրառում են հետևյալ իմաստներով.

- ռիսկը որպես վտանգ,
- ռիսկը որպես հնարավորություն,
- ռիսկը որպես հետևանք,
- ռիսկը որպես պոտենցիալ դժբախտություն կամ վտանգ (2, 8):

Ռիսկը դիտվարկում է որպես մի հասկացություն, որը մարդիկ ստեղծել են, որպեսզի օգնեն հասկանալ կյանքի վտանգներն ու անորոշությունները և պայքարել դրանց դեմ: Չմայած, որ այդ վտանգներն իրական են, այնուամենայնիվ գոյություն չունի «իրական ռիսկ» կամ «օբյեկտիվ ռիսկ»: Միջուկային ինժեներների կողմից միջուկային վթարների ռիսկի գնահատումը կամ թունաբանների կողմից քիմիկատների ռիսկի քանակական գնահատումը հիմնված են տեսական մոդելների վրա, որոնց կառուցվածքը սուբյեկտիվ է և առաջնորդվում է ենթադրություններով:

Շրջակա միջավայրի վնասակար պայմանները զգալու և դրանցից խուսափելու զգացողությունը անհրաժեշտ է կենդանիներին գոյատևելու համար, իսկ մարդիկ օժտված են ապակողավորելու և կյանքի փորձից սովորելու կարողությամբ: Բացի այդ, նրանք կարող են փոխել շրջակա միջավայրը և արձագանքել դրան: Հենց այս կարողության հիմքում էլ ընկած են ռիսկի ընկալման ուսումնասիրման հիմնահարցերը: Ժամանակակից անըմբռնելի և դժվար կառավարելի առանձնահատկություններով օժտված իրավիճակները հանգեցրել են նոր գիտական ուղղության՝ «ռիսկի գնահատման» առաջացմանը: Այս գիտակարգի հիմնական նպատակն է հասկանալ և կանխագգալ վտանգների հանդեպ հասարակության արձագանքը (1, 7):

Ռիսկի ընկալումն ուսումնասիրելու մարտավարություններից մեկը վտանգների դասակարգումն է: Ամենատարածվածը հոգեմետրիկ հարացույցի կիրառումն է, որն օգտագործում է հոգեֆիզիկական սանդղակներ և բազում տարբերակներ ունցող վերլուծական գործելակերպեր ռիսկի հանդեպ վերաբերմունքի և դրա ընկալումների քանակական արտացոլման համար: Այս պարագայում անձը գնահատում է տարբեր վտանգների առկա և ցանկալի ռիսկայնությունը և ներկայացնում յուրաքանչյուրի կարգավորման ցանկալի մակարդակը: Հետո այս գնահատականները կցվում են այլ որակներին տրված գնահատականներին, ինչպիսիք են.

1. ռիսկի ընկալումից և դրա հանդեպ վերաբերմունքից առաջ եկող վտանգի դիրքը,
2. օգուտը /Ստարի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մարդիկ հակված են դիմանալ բարձր ռիսկայնություն ունեցող, բայց միևնույն ժամանակ մեծ օգուտ տվող վտանգներին/,
3. վտանգների պատճառով հասարակության մահացության տարեկան միջին չափը,
4. աղետի տարում վտանգի պատճառով հասարակության մահացության չափը,
5. տվյալ վտանգից յուրաքանչյուր մահվան դեպքի լրջությունը այլ պատճառներից մահվան դեպքերի համեմատ և այլն (2, 4, 6):

Հոգեմետրիկ հարացույցի շրջանակներում Պ. Սլովիկի կողմից անցկացված բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են


տվել, որ ընկալված ռիսկը հաշվարկելի է և կանխատեսելի: Հոգեմետորիկ տեխնիկան հարմար է խմբերի միջև ռիսկի ընկալումների ու դրա նկատմամբ վերաբերմունքի նմանություններն ու տարբերությունները գնահատելու համար: Դրանք նաև ցույց են տվել, որ «ռիսկ» հասկացությունը տարբեր կերպ է ընկալվում յուրաքանչյուր անձի կողմից: Երբ փորձագետները գնահատում են ռիսկը, նրանց պատասխանները մեծապես կապված են տարեկան աղետների տեխնիկական գնահատականների հետ: Մարդիկ կարող են գնահատել տարեկան աղետները, սակայն ռիսկը և ոչ փորձագետների կողմից նրանց տրվող գնահատականները կապված են այլ ռիսկերի բնութագրերի հետ, և արդյունքում տարբերվում են տարեկան աղետների փորձագետների գնահատականից: Հնարավոր է մարդկանց համար այս կամ այն գործոնն ավելի կարևոր կամ առաջնային լինի, քան այդ գործոնին փորձագետների տված գնահատականը: Օրինակ՝ փորձագետների կարծիքով մարդկանց մեծամասնությունը մահանում է սրտային անբավարարությունից, իսկ հարցման հետևանքով պարզվեց, որ հասարակության կարծիքով առավել մեծ է դժբախտ պատահարները մահացությունը:

Հոգեմետորիկ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ յուրաքանչյուր վտանգ ունի որակների առամծնահատուկ մոդել, որը կապված է ռիսկի ընկալման հետ: Աղյուսակ 1-ը ցույց է տալիս ռիսկին բնորոշ 9 հատկությունների միջին ուրվագիծը, որը ուսումնասիրության ժամանակ գնահատվել է միջուկային զենքի և բժշկական x-ճառագանթների օրինակով: Միջուկային զենքը գնահատվել էր որպես ավելի բարձր ռիսկայնություն ունեցող, քան x-ճառագանթները և ռիսկի ավելի մեծ կրճատման կարիք ունեցող: Ինչպես ցույց է տալիս գծագիրը, միջուկային զենքը շատ ավելի բացասական ուրվագիծ ուներ տարբեր ռիսկերի բնորոշումների շրջանում:

Վտանգի ուրվագիծը կառուցող ռիսկի որակական հատկանիշներից շատերը մեծապես կապված են միմյանց հետ: Օրինակ, որպես «կամավոր» գնահատված վտանգները սովորաբար գնահատվում են նաև որպես «կառավարելի» և «հայտնի», վտանգները, որոնք հակված են վախեցնել ապագա սերունդներին դիտվում են որպես պոտենցիալ աղետալի, և այլն: Գործոնների վերլուծության միջոցով այս փոխհարաբերությունների հետազոտումը ցույց տվեց, որ հատկանիշների ավելի լայն բնագավառը կարող է խտացվել ա-

վելի բարձրակարգ հատկանիշների կամ գործոնների խմբի (5 էջ. 281-283):

Աղյուսակ 1. Միջուկային զենքի և x-ճառագայթների համար 9 ռիսկային հատկանիշների միջոցով ընկալված ռիսկի որակական բնորոշումը



Ռիսկի ընկալման ամենավաղ հետազոտությունները ցույց են տվել, որ չնայած օբյեկտիվ գնահատման պարագայում ռիսկը և շահը ուղիղ համեմատական են, մարդկանց ընկալման մեջ դրանք կապված են հակադարձ համեմատական կապվածությամբ:

Սլովիկի և Ալիականի ուսումնասիրություններից բացահայտվել է, որ որևէ գործողության ընկալված ռիսկի և ընկալված շահի հակադարձ հարաբերությունը կապվում է գործողության հետ զուգորդվող դրական կամ բացասական հուզականության ուժգնության հետ, այսինքն գործողությունը չափվում է երկբևեռ սանդղակներով, ինչպիսիք են լավ/վատ, գեղեցիկ/սարսափելի, և այլն: Այստեղից հետևում է, որ մարդիկ իրենց գնահատականը տալիս են հիմնվելով ոչ միայն իրենց մտածողության, այլ նաև զգացմունքների վրա: Եթե նրանց զգացմունքները տվյալ գործողության նկատմամբ բարենպաստ են, նրանք այն գնահատում են ցածր ռիսկայնությամբ և բարձր շահով, իսկ եթե նրանց զգացմունքներն անբարենպաստ են, նրանք հակված են այն բնորոշել բարձր ռիսկայնությամբ և ցածր շահով (6, 10):

Ռիսկի և շահի հետ կապված հետազոտություններում Սլովիկը և նրա գործընկերները հետազոտել են Բրիտանական թունաբա-

նական կազմակերպության անդամներին և հայտնաբերել, որ այս փորձագետների մոտ ևս ռիսկի և շահի գնահատման մեջ առկա են նույն հակադարձ հարաբերությունները: Ուսումնասիրության ժամանակ այս նույն փորձագետներին խնդրեցին տալ 30 քիմիական նյութերի «արագ և ինտուիտիվ գնահատումը» հուզականության սանդղակով (վատ-լավ): Հետո նրանց խնդրեցին գնահատել ռիսկի աստիճանը քիմիկատի ամենափոքր ազդեցության դեպքում՝ որպես ազդեցություն սահմանելով այն ազդեցության մակարդակի 1/100-ականից ցածր ազդեցությունը, որը կսկսի մտահոգել կանոնակարգող գործակալությանը: Բանականորեն, քանի որ ազդեցությունն այդքան փոքր է, կարելի է ակնկալել, որ այս ռիսկի գնահատականները ցածր կլինեն և չեն տարբերվի: Դրա փոխարեն հուզականության և փոքր ազդեցության ռիսկի միջև առկա էր ուժեղ փոխհարաբերություն: Երբ հուզականությունը բացասական էր գնահատվում, ռիսկի ազդեցությունը բարձր էր գնահատվում, և հակառակը: Մեկ այլ հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդիկ միջուկային ուժի օգուտը շատ փոքր են համարում, իսկ ռիսկայնությունը՝ բարձր, մինչդեռ միջուկային ուժի ընդդիմախոսներն ընդունում են, որ դրա հետևանքով միջև օրս շատ ավելի քիչ մարդ է տուժել: Ռիսկի ընկալման հետազոտությունը ցույց է տալիս, որ մարդկանց հուզումները հիմնականում կապված է լրատվամիջոցների կողմից այդ դեպքերի անբարենպաստ լուսաբանման հետ: Քանի որ միջուկային ռիսկերը ընկալվում են որպես անծանոթ և պոտենցիալ կերպով աղետալի, նույնիսկ ամենափոքր վթարները մեծ լուսաբանում են ստանում և մեծ հուզական ալիք առաջացնում (3, 6):

Մարդկային աղետների համար ռիսկի չափման ընտրության, դասակարգման հասարակ առաջադրանքը զարմանալիորեն բարդ ու խորն է: Այդուսակ 2-ը ցույց է տալիս քիմիական արդյունաբերական գործարանի հետ կապված աղետների ռիսկի գնահատման բազմաթիվ միջոցներից մի քանիսը: Կախված նրանից, թե որոշման ընդունման համար, որ չափանիշը հիմք կընդունվի, էականորեն կփոփոխվի ընդունվող որոշման ուղղվածությունն ու բովանդակությունը:

Աղյուսակ 2. Աղետների ռիսկի արտահայտման որոշ միջոցներ

- Մահվան դեպքեր հասարակության յուրաքանչյուր միլիոն մարդուց
- Դեպքի վայրից x մղոն հեռավորության վրա մահվան դեպքեր յուրաքանչյուր միլիոն մարդուց
- Մահվան դեպքեր կոնցենտրացիայի յուրաքանչյուր միավորի դեպքում
- Մահվան դեպքեր յուրաքանչյուր սարքի դեպքում
- Մահվան դեպքեր օդ արտամղված տոքսիների յուրաքանչյուր տոննայի դեպքում
- Մահվան դեպքեր մարդկանց կողմից կլանած օդ արտամղված տոքսիների յուրաքանչյուր տոննայի դեպքում
- Մահվան դեպքեր արտադրված քիմիկատների յուրաքանչյուր տոննայի դեպքում
- Մահվան դեպքեր յուրաքանչյուր միլիոն դոլլարի արտադրված ապրանքի դեպքում
- Վտանգի ենթարկվելու պատճառով երեխաների կորուստները

«Մահվան դեպքերի քանակը» որպես ռիսկի ամփոփման ցուցիչ տարբերություն չի դնում իրենց կամքով գործողության մեջ ներգրավված և դրանից շահ ունեցող մարդկանց և այն մարդկանց միջև, որոնք իրենց կամքից անկախ են հայտնվել այդ իրավիճակում և դրանից ոչ մի շահ չունեն: Կարելի է բազմաթիվ փաստարկներ բերել տարբեր տեսակի անհավասար գնահատումներն արդարացնելու համար, սակայն ընտրելու համար, թե մահվան որ դեպքերն են ամենաքիչ ցանկալին, մտորումների տեղ է տալիս: Մահվան դեպքերը հավասար գնահատելը նույնպես արժեքավոր դատողություններ է պահանջում:

Հասարակության համար «ռիսկայնությունն» ավելի մեծ նշանակություն ունի, քան «մահվան դեպքերի ակնկալվող քանակը»: Սարսափի զգացումը նույնպես համարվում է հասարակության կողմից ռիսկի ընկալման և ընդունման սահմանող օղակ:

Սլովիկը գտնում է, որ ժամանակակից աշխարհում ռիսկը դիտարկում են երեք հիմնական ձևերով.

1. ռիսկը որպես զգացումներ, որը վերաբերում է վտանգների դեպքում մեր արագ, բնազդային և ինտուիտիվ հակազդմանը,

2. ռիսկը որպես վերլուծություն, որը առաջ է բերում բանակա-
նություն, խելամտություն և գիտական շրջահայացություն՝
վտանգը հաղթահարելու համար,
3. ռիսկը որպես քաղաքականություն, որի ժամանակ բախվում են
մեր բնագոյները և ժամանակակից գիտական վերլուծությունը:

Հուզականությունը մեծ դեր է խաղում մտածողության, իմա-
ցության և տեղեկատվության մշակման երկակի մշակման տեսութ-
յուններում: Ըստ էպշտայնի ուսումնասիրությունների մարդիկ իրա-
կանությունն ընկալում են երկու հիմնական իրարից խիստ տար-
բերվող ձևերով. մեկն անվանվում է որպես ինտուիտիվ, ինքնաբե-
րական, բնական, ոչ վերբալ (խոսքով չարտահայտված), նկարագ-
րական և փորձարարական, իսկ մյուսը՝ վերլուծական, շրջահայաց,
վերբալ և բանական (7):

Այդուսակ 3-ում առավել դիտողունակ համեմատված են
մտածողության այս երկու եղանակները:

Աղյուսակ 3 - Իրականության ընկալման ձևերն ըստ էպշտայնի

	Փորձարարական համակարգ	Վերլուծական համակարգ
1.	Ամբողջական	Վերլուծական
2.	Հուզական. հաճույք-ցավ կողմնորոշմամբ	Բանական. խելամտության կողմն- որոշմամբ (ինչը բանական է)
3.	Ջուզորդական կապեր	Բանական կապեր
4.	Անցած փորձով առաջնորդվող վարք	Իրադարձությունների գիտակից զննահատմամբ առաջնորդվող վարք
5.	Իրականությունն ապակողա- վորում է կոնկրետ պատկեր- ների, փոխաբերությունների և նկարագրությունների միջո- ցով	Իրականությունն ապակողավորում է վերացական խորհրդանիշների, բառերի և թվերի միջոցով
6.	Ավելի արագ մշակում՝ հակ- ված դեպի անմիջական գոր- ծողություն	Ավելի դանդաղ մշակում՝ հակված դեպի ուշացած գործողություն
7.	Սեփական փորձով հաստատ- ված. «Ձգալ մշանակում է հա- վատալ»	Պահանջում է բանականության և ա- պացույցների կողմից հաստատում

Բանական և փորձարարական համակարգերը ոչ միայն գործում են զուգահեռաբար, այլ առաջինը, կարծես, կախված է երկրորդից (9, էջ. 313-314):

Փորձարարական համակարգի ազդեցությունը ցույց տալու համար Դենես-Ռաջը և Էպշտայնը ցույց տվեցին տարայից կարմիր դոնդողե հատիկ հանելու օրինակով: 1\$ շահելու հնարավորություն ունենալու դեպքում, մարդիկ ավելի շուտ ընտրում են ավելի մեծ բացարձակ թիվ ունեցող տարան, որում սակայն կարմիր հատիկներն ավելի քիչ մաս են կազմում (7-ը 100-ից), քան ավելի քիչ կարմիր հատիկ պարունակող, սակայն ավելի մեծ շահելու հավանականություն ունեցող տարան (1-ը՝ 10-ից): Այս մարդիկ հայտնում են, որ չնայած նրանք գիտեն, որ հավանականությունը նրանց դեմ է, սակայն զգում են, որ ավելի մեծ հնարավորություն ունեն, երբ կարմիր հատիկները շատ են: Մենք այս փորձարկվողներին կարող ենք բնորոշել որպես «համարիչը պատկերող» (այսինքն՝ կարմիր հատիկների քանակը) մտավոր մարտավարությանը հետևողներ և հայտարարն անտեսողներ (հատիկների թիվը տարայում) (1):

Սլովիկը և նրա գործընկերները դիմեցին մեկ այլ փորձի: Փորձառու դատական հոգեբաններին և հոգեբույժներին խնդրեցին գնահատել մտավոր խանգարում ունեցող հիվանդի կողմից հիվանդանոցից դուրս գալուց վեց ամիս հետո բռնարարք գործելու հավանականությունը: Կարևոր բացահայտում էր այն, որ բժիշկները, որոնց տրամադրվել էր հիվանդի կողմից բռնարարքի ռիսկի վերաբերյալ այլ փորձագետի գնահատականը՝ հիմնված հարաբերական հավանականության վրա (օր.՝ «պրն. Ջոնսի նման յուրաքանչյուր 100 հիվանդներից 10-ը գնահատվել են որպես բռնարարք գործելուն հակված»), պրն. Ջոնսին պիտակեցին որպես ավելի վտանգավոր, քան այն բժիշկները, որոնց ցույց տրվեց վիճակագրորեն «համարժեք» ռիսկ՝ արտակայտված որպես հավանականություն (օր.՝ «10%-ը հավանականություն կա, որ պրն. Ջոնսի նման հիվանդները բռնարարք կգործեն»):

Ջարմանալի չէ, որ երբ բժիշկներին ասացին, որ «պրն. Ջոնսի նման յուրաքանչյուր 100 հիվանդներից 20-ը գնահատվել են որպես բռնարարք գործելուն հակված», 41%-ը հրաժարվեց դուրս գրել հիվանդին: Սակայն երբ բժիշկների մեկ այլ խմբի ռիսկը ներկայացվեց հետևյալ կերպ. «20% հավանականություն կա, որ պրն.

Ջոնսի նման հիվանդները բռնարարք կգործեն», միայն 21%-ը հրա-
ժարվեց դուրս գրել հիվանդին: (9, էջ 316-318)

Ավելի ուշ Սլովիկը, Ֆինուկեյնը, Պիտերսը և Մեք Գրեգորը քննարկում են փորձի կամ զուգորդման վրա հիմնվող մշակման շահավետ կողմերը ռիսկի համատեքստում, որը մեզ հնարավորությու-
ն է տվել գոյատևել մարդկային էվոլյուցիայի ընթացքում և մնում է վախի մարձազանքելու ամենաբնական և հասարակ միջոցը: Փորձարարական մտածողությունն ինտուիտիվ է, ավտոմատ և արագ: Այն հիմնվում է պատկերների ու զուգորդումների վրա, որոնք փորձով կապվում են զգացմունքներին ու հուզականությամբ: Այս համակարգը շրջակա միջավայրի անորոշությունն ու սարսափեց-
նող հատկանիշները փոխարկում է հուզական արձագանքների (օրինակ՝ վախ, սարսափ, անհանգստություն) և այսպիսով ներկայացնում է ռիսկը որպես զգացմունքներ, որը մեզ հուշում է արդյո՞ք անվտանգ է քայլել մութ փողոցով կամ խմել տարօրինակ հոտ ու-
նեցող ջուրը:

Սլովիկը հետաքրքիր հետազոտություններ է կատարել մարդու կողմից ծխախոտ ծխելու որոշման հետ կապված: Ծխելու մասին որոշումների կասկածելի բանականությունը այն դժվարության օրինակ է, որի առջև կանգնում է փորձարարական մտածողությու-
նը այնպիսի արդյունքների հետ գործ ունենալիս, որոնք ժամանակի ընթացքում շատ դանդաղ են փոփոխվում, իսկ ժամանակի մեջ՝ անմշան են:

Երկար ժամանակ սկսնակ ծխողները պատկերվում էին որպես «երիտասարդ տնտեսագետներ», որոնք ծխելու ռիսկերը բանականորեն համեմատում էին շահերի հետ՝ այդ գործողությունը սկսելուց առաջ: Սակայն ներկայումս պատկերն այլ է: Նոր հետազոտությունները ցույց են տալիս, որ երիտասարդ ծխողները փոր-
ձարարական ձևով են գործում այն առումով, որ քիչ են մտածում կամ չեն մտածում ռիսկերի կամ ծխախոտի քանակի մասին: Դրա փոխարեն, նրանք առաջնորդվում են պահի հուզական ազդակներով՝ ծխելը վայելելով որպես մի նոր և հուզիչ բան, ընկերների հետ զվարճանալու մի ձև: Նույնիսկ պարբերաբար ծխող դառնալով՝ ծխողների մեծ մասը ակնկալում է, որ շուտով կդադարի՝ անկախ այն բանից, թե որքան երկար է ծխել, քանի ծխախոտ է օրական ծխում, կամ քանի անգամ է անհաջող կերպով փորձել թողնել ծխե-

լը: Միայն շատ չնչին մասն է իսկապես թողնում ծխելը: «Խնդիրը նիկոտինից կախվածության մեջ է»։ մի ճշմարիտ պայման, որը երիտասարդ ծխողները ճանաչում են որպես ծխելու հետևանք, սակայն չեն հասկանում, քանի դեռ իրենք թակարդում չեն հայտնվում:

Ըստ Սլոփի կիոթարարական համակարգի ծախողունը երիտասարդներին ծխելու վտանգից հետ պահելու գործում ոչ մի տեղ այնքան ակնհայտ չէ ի հայտ գալիս, որքան ծխողների շրջանակում անցկացված հարցման դեպքում. «Եթե դու ամեն ինչ նորից սկսելու հնարավորություն ունենաս, արդյոք կծխես» հարցին տարեց ծխողների 85%-ից ավելին և երիտասարդ ծխողների 80%-ը (14-22 տարեկան) պատասխանում են՝ «ոչ»: Դեռ ավելին, որքան շատ մարդ է ընդունում, որ ինքը կախվածություն ունի, որքան հաճախ են նրանք փորձում թողնել ծխելը, որքան շատ ծխախոտ են նրանք օրական ծխում, այնքան մեծ է հավանականությունը, որ նրանք «ոչ» կպատասխանեն (9):

Այս բացահայտումները կասկածի տակ են դնում որոշման օգտակարության և փորձի օգտակարության միջև տեսաբանների կողմից նշվող տարանջատման միտքը: Նախատեսվող կամ ակնկալվող օգտակարությունը որոշման պահին հաճախ շատ է տարբերվում իրականում տեղի ունեցող փորձի որակից ու ուժգնությունից:

Ռիսկի առկայության հասարակական չափազանցումը խթանվում է անբարենպաստ իրադրության պատահմամբ, որը կարող է լինել մեծ կամ փոքր պատահար՝ աղտոտման բացահայտում, վարակի առկայության ընթացում, սաբոտաժային միջադեպ և այլն, որը դասակարգվում է կամ «անհայտ ռիսկ» կամ «նախկինում անտեսված ռիսկ» կատեգորիայի մեջ և շատ մարդկանց համար պոտենցիալ հետևանքներ ունի: Ռիսկի չափազանցման գործընթացի միջոցով նման իրադարձության անբարենպաստ ազդեցությունները երբեմն զոհերին և սեփականությանը պատճառված ուղղակի վնասից ավելին են լինում և կարող են հանգեցնել մասսայական անուղղակի ազդեցությունների, ինչպես օրինակ ընկերության դեմ դատավեճը կամ վաճառքի կորուստները, արդյունաբերության ավելացված կարգավորումը և այլն:

Սովորաբար ռիսկային պայմաններում որոշումը կայացվում է մի շարք մոդելների համաձայն, որոնց քննարկմանն էլ անդրադառնում է Պ. Սլովիկը իր աշխատություններում.

ա) բարդ կեղծում.

բարդ որոշումներ կայացնելու գործընթացը նկարագրելու ամենաազդեցիկ փորձերից մեկը կատարել է Կլարկսոնը, ով փորձել է կեղծել երաշխիքային ներդրման գծով բանկային ծառայողի արժեթղթերի պորտֆելի ընտրության գործընթացները: Կլարկսոնը հավաքեց ներդրումային ծառայողի վերբալ արտահայտությունների վրա հիմնված բազմաթիվ արձանագրություններ, ում խնդրել էին «բարձրաձայն մտածել» մինչև նա ամփոփում էր անցյալ և ներկա որոշումները: Այս արձանագրությունները որպես ուղեցույց կիրառելով՝ ներդրումային գործընթացը ներկայացվեց հաջորդաբար ճյուղավորվող համակարգչային ծրագրի տեսքով: Երբ մոդելի ճշգրտությունը փորձարկվեց, դրա ընտրությունները համեմատվեցին ծառայողի կողմից իրականում ընտրված արժեթղթային պորտֆելների հետ: Իրական և կեղծված պորտֆելների միջև համապատասխանությունը բավականին մեծ էր:

բ) գծային մոդել.

այս մոդելը մշակվել է Յոնթանի, Յամմոնդի և Գուլբերգի կողմից: Հիմնական մոտեցումը պահանջում է, որ որոշում կայացնողները ներկայացնեն բազմաթիվ դեպքերի /որոնցից յուրաքանչյուրը բնորոշվում է մի շարք հատկանիշներով/ քանակական գնահատականները: Հոգեբանները պարզել են, որ գծային մոդելները հատկապես հաջող են այնպիսի տարաբնույթ չափանիշների գնահատականները կանխորոշելու համար, ինչպիսիք են հոգեբուժական ախտորոշումը, խոցերի չարորակությունը, աշխատանքի կատարումը և մոլախաղերի ռիսկայնությունը և գրավչությունը: Քաղաքագետները համարում են, որ գծային մոդելները օգտակար են դատական որոշումների կայացման գործընթացները նկարագրելու համար: Ֆինանսական և կառավարական որոշումները կեղծելու գործում հետաքրքրված հետազոտողները անկախ կերպով բացահայտել են գծային մոդելների արժեքը:

գ) կոնֆիգուրալ մոդելներ.

կոնֆիգուրալությունը նշանակում է, որ որևէ առարկայի վերաբերյալ տեղեկատվության մեկանաբանությունը տարբերվում է՝

կախված այլ մատչելի տեղեկատվությունից: Գծային մոդելը կարող է հաշվի առնել կոնֆիգուրալ ազդեցությունները, սակայն երբ մոդելն բարդանում է, կոնֆիգուրալ և ոչ կոնֆիգուրալ պայմանների պատշաճ գնահատումը դժվարանում է:

Այդ պատճառով որոշ հետազոտողներ դիմում են դրանց հետ առնչվող այլ մոդելի՝ տարածայնությունների վերլուծության (ANOVA) մոդելի՝ բարդ գնահատման գործընթացները նկարագրելու համար, որը ներկայացրեցին Յոնսոնը, Սլովիկը և Ռոբերը:

ANOVA մոդելը սովորաբար երկու կարևոր սահմանափակում է դնում այն գործոնների համար, որոնք նկարագրում են գնահատվող դեպքերը.

1. գործոնների մակարդակները պետք է կատեգորիկ (օր.՝ լավը ընդդեմ միջինի և ընդդեմ վատի), այլ ոչ թե շարունակական տարբերակներ լինեն,

2. գործոնները չպետք է առնչվեն միմյանց հետ: Այլ կերպ ասած, եթե գին/վաստակ հարաբերակցությունը և բաժնեմասային եկամուտը երկու գործոններն են, դրանք պետք է չառնչվեն մի շարք արժեթղթերի համար:

ANOVA մոդելը արդյունավետ կերպով դասակարգում է գծային և կոնֆիգուրալ գնահատականների գործընթացները չհամընկնող և իմաստալից մասերի: ANOVA տեխնիկան փոխազդեցությունների ազդեցությունները մեկուսացնելով հիմնական ազդեցություններից, տալիս է հնարավոր կոնֆիգուրալ գնահատականների ենպիրիկ նկարագրությունը և օգտագործվում է դատողության մեջ տեղեկության կոնֆիգուրալ և ոչ կոնֆիգուրալ կիրառման քանակական նկարագրության համար: Այս տեխնիկան օգտագործվել է մի շարք գործընթացներ ուսումնասիրելու համար, օրինակ՝ այն կիրառում են որևէ գործարանի համապատասխան արժեթղթերի վաճառման հավանականությունները հաշվարկելու համար, որտեղ առանձնացվում է յուրաքանչյուր գործոն և դրանց միջոցով ապացուցվում է այս կամ այն արժեթղթի նշանակությունը: Ախտորոշումների միջև առկա տարբերությունները մեծամասամբ կարելի էր կանխորոշել նշանների գծային միացումից (3, 4):

Արժեթղթերի շուկան Պ. Սլովիկի կողմից որպես ձեռնարկության ուսումնասիրության բնագավառ է ընտրվել մի շարք պատճառներով: Առաջին՝ արժեթղթի ապագա շուկայական գնի կանխորո-

շունը շատ կարևոր է: Օրական բազմաթիվ միլիոններ ընդգրկող հարյուր հազարավոր որոշումներ են կայացվում շուկայում: Երկրորդ՝ այս խնդիրը հետաքրքիր է, քանի որ չափազանց դժվար և բարդ է: Գոյություն ունեն հարյուրավոր գործոններ, որոնք կարող են առնչվել, դրանցից որոշները բնույթով տնտեսական են, մյուսները՝ ֆինանսական, ուրիշները՝ հոգեբանական: Ֆինանսական վերլուծաբանների ինքնաճանաչողական զեկույցները ցույց են տալիս, որ նրանք հավատում են, որ առնչություն ունեցող գործոնները պետք է մեկնաբանվեն բարդ, կոմֆիզուրալ եղանակով: Օրինակ, շատ վերլուծաբաններ պնդում են, որ հնարավոր չէ մեկնաբանել արժեթղթերի շուկայի վերջին ժամանակների գների փոփոխությունները՝ առանց հաշվի առնելու այդ փոփոխություններն ուղեկցող վաճառքների ծավալները (4 էջ. 283-301):

Հետազոտություններից հետո պարզ է դառնում, որ սուբյեկտիվ վերաբերմունքի ժամանակ անկախ այն հանգամանքից, թե որ գործոնների միջոցով են փորձել առանձնացնել այդ հիմնարկության արժեթղթերը, հետազոտողները դրանցից մեկին տալիս են սուբյեկտիվ վերաբերմունք և անպայման դրանցից մեկը առավել կարևորվում է:

Ամփոփելով ռիսկի ընկալման և գնահատման ուսումնասիրությունները Պաուլ Սլովիկի աշխատություններում՝ կարելի է նշել, որ Սլովիկը ռիսկի ընկալման գործընթացում կարևորում է մի շարք գործոնների առկայություն՝ զգացմունքայնությունը, հուզականությունը, հասարակության չափազանցումը, սուբյեկտիվ վերաբերմունքը և այլն: Հասարակության համար «ռիսկայնությունը» ավելի մեծ նշանակություն ունի, քան «մահվան դեպքերի ակնկալվող քանակը»: Սլովիկի հայտնաբերած գիտական նորություններից մեկը, բացի հիմնական մոդելների կիրառումից, ANOVA մոդելի կիրառումն էր որոշումների ընդունման ժամանակ, որի ժամանակ ոչ թե մեկ գործոն էր կիրառվում և դրան տրվում էր առավելություն, այլ մի քանի գործոնների միջոցով պատշաճ կերպով գնահատվում է կոմֆիզուրալ ազդեցությունը: Եվ, բացի այդ, տեխնիկան կարող է լավ ուսումնական միջոց լինել, որը ուսանողներին կօգնի տեսնել, թե ինչպես են իրենց կողմից ռիսկի գնահատման գործընթացները տարբերվում փորձագետների գնահատման կամ օպտիմալ մոդելների գործընթացներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Словик П., Фишхофф Б., Лихтенштейн С.** Факты против страха: понимание воспринимаемого риска // Принятие решений в неопределенности: Правила переубеждения: Канеман Д., Словик П., Тверски А. Изд. "Генезис", 2005, стр. 529-561.
2. **Kahan D.M., & Slovic P.** (2006). Cultural evaluations of risk: "Values" or "blunders"? *Harvard Law Review Forum*, **119**, 166-172.
3. **Slovic P.** (1969). Analyzing the expert judge: A descriptive study of a stockbroker's decision processes. *Journal of Applied Psychology*, **53**, 255-263.
4. **Slovic P., Fleissner, D., & Bauman W.S.** (1972). Analyzing the use of information in investment decision making: A methodological proposal. *Journal of Business*, **45**, 283-301.
5. **Slovic P.** (1987). Perception of risk. *Science*, **236**, 280-285.
6. **Slovic P.** (2001). Psychological study of human judgment: Implications for investment decision making. *The Journal of Psychology and Financial Markets*, **2**, 160-172.
7. **Slovic P.** (1997, May). Public perception of risk [Guest commentary]. *Journal of Environmental Health*, **59**(9), 22-23, 54.
8. **Slovic P., & Gregory R.** (1999). Risk analysis, decision analysis, and the social context for risk decision making. In J. Shanteau, B.A. Mellers, & D.A. Schum (Eds.), *Decision science and technology: Reflections on the contributions of Ward Edwards* (pp. 353-365). Norwell, MA: Kluwer Academic.
9. **Slovic P., Finucane M., Peters E., & MacGregor D.G.** (2004). Risk as analysis and risk as feelings: Some thoughts about affect, reason, risk, and rationality. *Risk Analysis*, **24**(2), 1-12.
10. **Slovic P., & Peters E.** (2006). Risk perception and affect. *Current Directions in Psychological Science*, **15**(6), 322-325.



Անատոլի Կարպովը (1956թ.)

ծնվել է ՌԴ Յարոսլավլ քաղաքում: 1978թ.-ին գերազանցությամբ ավարտել է Յարոսլավլի Պետական Համալսարանի հոգեբանության ֆակուլտետը, իսկ 1980թ.-ին վաղաժամ ասպիրանտուրան և այդ համալսարանում էլ անցել է ասպիրանտից մինչև պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, հոգեբանության ֆակուլտետի դեկան, ճանապարհը: 1981թ.-ին հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական, իսկ 1992թ.-ին դոկտորական ատենախոսություն «Աշխատանքի հոգեբանություն» մասնագիտությամբ, ունի պրոֆեսորի գիտական կոչում (1993թ.):

Ա. Վ. Կարպովը բարձրակարգ մասնագետ է, Ռուսաստանի Դաշնության խոշորագույն հոգեբանանմերից մեկը, ով գիտական հանրությունում հայտնի է հոգեբանության կարևորագույն ոլորտներից նվիրված այնպիսի աշխատանքներով. ինչպիսիք են գործունեության հոգեբանական տեսությունը, կոգնիտիվ (ճանաչողական) հոգեբանությունը, որոշման կայացման հոգեբանական տեսությունը. ինչպես նաև մասնագիտական գործունեության կարգավորման ռեֆլեքսային մեխանիզմների ուսումնասիրություններով: Ա. Կարպովը հիմնել և

կոնցեպտուալացրել է հոգեբանական հետազոտությունների նոր ուղղություն՝ գործունեության մետակոգնիտիվ հոգեբանությունը, որը թույլ տվեց սինթեզել ժամանակակից հոգեբանության երկու կարևորագույն ուղղություններ՝ կոգնիտիվ հոգեբանությունն ու գործունեության հոգեբանական տեսությունը: Իր կողմից մշակվող ուղղության հիմքում նա ձևավորել և զարգացրել է մի շարք յուրահատուկ հոգեբանական հայեցակարգեր, որոնք գտել են գիտական հանրության լայն ճանաչումը: Ա. Վ. Կարպովը առավել քան 400 գիտական աշխատանքների (այդ թվում 12 մենագրության) հեղինակ է: Կարպովի գիտական աշխատանքները հրատարկվել են մի շարք երկրներում՝ Ֆինլանդիայում, Կանադայում, Յու.Նաստանում, ԱՊՀ երկրներում: Ա. Վ. Կարպովի 10 հիմնարար մենագրությունները՝ «Կառավարչական որոշումներ կայացնելու հոգեբանություն»(1997), «Որոշման կայացման հոգեբանության մետակոգնիվ հիմքերը»(1999), «Կառավարման ռեֆլեքսային մեխանիզմների հոգեբանություն»(1999), «Սուբյեկտիվ ընտրության ընդհանուր հոգեբանություն»(2000), «Ադապտացման հոգեբանություն»(2003), «Գործունեության կարգավորման ռեֆլեքսային մեխանիզմների հոգեբանություն»(2004), «Հոգեկանի մակարդակային կառուցվածքի մետահամակարգակային կազմակերպումը»(2004), «Անհատի մետակոգնիտիվ գործընթացների հոգեբանություն»(2005), «Մասնագիտական գործունեության կառուցվածքային գործառուցային կառուցվածք» (2006), «Մանկավարժական ռեֆլեքսիայի զարգացման տեսությունն ու պրակտիկան» (2006), «Կառավարչական գործունեության հոգեբանությունը» (2006), հրապարակվել են երկրի առաջատար հոգե-

բանական հրատարակչության՝ Ռուսաստանի Գիտություններ Ազգային Ակադեմիայի հոգեբանության ինստիտուտի հրատարակչության կողմից: Սրանց հետ մեկտեղ նրա կողմից լույս է տեսել նաև նույն հրատարակչության կոլեկտիվ մեծագրությունների մի շարք գլուխներ:

Վերջին հինգ տարիների ընթացքում Կարպովի կողմից հրատարակվել են ավելի քան 150 գիտական աշխատանքներ, այդ թվում՝ 6 մենագրություն, 7 դասագիրք և ուսումնական ձեռնարկ: Կարպովն ակտիվ մասնակցություն է ունենում գիտական հանրությունում հեղինակավոր և համընդհանուր ճանաչում գտած ռուսական և միջազգային գիտաժողովների, կոնգրեսների և համագումարների կազմակերպման և անցկացման գործում:

Ա.Վ. Կարպովը հաջող կերպով համադրում է գիտական և մանկավարժական գործունեությունը: Նոր բարձր որակավորում ունեցող մանկավարժ է, վարում է բոլոր տեսակի ուսումնական պարապմունքներ բուհում, ինչպես նաև ցուցաբերում է խորհրդակցական օգնություն դրանց կազմակերպման և անցկացման մեջ՝ մարզի և ՌԴ մյուս բուհերի դասախոսներին: Սեփական մանկավարժական փորձի, ինչպես նաև ՅՊՀ-ում հոգեբանների պատրաստման փորձի ստեղծագործական ընդհանրացման հիման վրա նրա կողմից մշակվել է ուսումնական պատրաստման որակապես նոր ծրագիր, որը ենթադրում է բարձրագույն հոգեբանական կրթության եռաստիճան կառուցվածք:

Ա. Վ Կարպովի ղեկավարության ներքո պատրաստվել են հոգեբանական գիտությունների 18 թեկնածուներ և 2 դոկտորներ: Այժմ նա ղեկավարում է 9 ասպիրանտների աշխատանքներ: Նա՝ «Կազմակերպչական հոգեբանություն և

մենեջմենթ», նոր մասնագիտության մշակման և ներմուծման ղեկավարն է, որը թույլ է տալիս իրականացնել ամենատուր պահանջարկ վայելող մասնագիտություններից մեկի՝ անձնակազմի կառավարման մենեջերի պատրաստմանը:

Ա.Վ. Կարպովի գիտական և մանկավարժական գործունեությունը բարձր գնահատական է ստացել ոչ միայն գիտական հանրության շրջանակներում, այլև պետական կազմակերպությունների մակարդակների վրա: Նա Ռուսաստանի Դաշնության բարձրագույն դպրոցի վաստակավոր աշխատակից է, Հումանիտար գիտությունների ռուսական ակադեմիայի գործող անդամ, Միջազգային Ակադեմիայի գիտությունների բարձրագույն դպրոցի, Հոգեբանական գիտությունների Միջազգային Ակադեմիայի, Բալթյան մանկավարժական ակադեմիայի ակադեմիկոս: Ա.Վ. Կարպովը՝ «Ոսկե պսիխես» ազգային հոգեբանական մրցույթի դափնեկիր է՝ «հոգեբանության գիտության մեջ տարվա ամձը» անվանակարգում (2005թ.): Նա պարգևատրվել է Յարոսլավի մարզի նահանգապետի կողմից «Գիտության մեջ ունեցած վաստակների համար» պատվավոր շքանշանով: Երկու անգամ հանդիսացել է ՌԴ Նախագահի մրցանակի մրցանակակիր (1998-2000, 2001-2003թթ.):

Ա.Վ. Կարպովը «Ռուսական հոգեբանական ամսագրի» խմբագրական խորհրդի, ինչպես նաև «Հոգեբանություն», «Ռուսական հոգեբանական հանրության Յարոսլավի բաժանմունքի տեղեկագիր» և «Մարդկային գործուն» ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ է:

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՀՈԳԵԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԼ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Կազմեցին Ա. Գիշյանը, Գ. Նազարյանը, Գ. Գուրգենյանը

Անատոլի Կարպովը ռուսական հոգեբանական դպրոցի խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է՝ հայտնի գիտական շրջանակներում իր աշխատություններով հոգեբանության այնպիսի առաջնային ոլորտներում, ինչպիսիք են գործունեության հոգեբանական տեսությունը, կոգնիտիվ հոգեբանությունը, մասնագտական գործունեության կարգավորման ռեֆլեքսիվ մեխանիզմների հետազոտությունը, ինչպես նաև՝ որոշման ընդունման հոգեբանական տեսությունը:

Կարպովը հիմնավորել և կոնցեպտուալիզացրել է հոգեբանական հետազոտությունների նոր ուղղություն՝ գործունեության մետակոգնիտիվ հոգեբանություն, որը թույլ է տալիս սինթեզել ժամանակակից հոգեբանության երկու կարևորագույն ուղղություն՝ կոգնիտիվ հոգեբանությունն ու գործունեության հոգեբանական տեսությունը: Իր կողմից մշակված այս ուղղության համատեքստում Ա.Կարպովը ձևակերպում ու զարգացնում է մի շարք յուրահատուկ հոգեբանական հայեցակարգեր, որոնք գիտական հանրությունում ընդունվում են և լայն տարածում ստանում: Առաջին հերթին, դա որոշման ընդունման ընդհանուր տեսությունն է, որն առաջին անգամ թույլ տվեց ընդհանրացնել ու բացատրել որոշման ընդունման բոլոր հիմնական մակարդակների (անհատական, խմբային, կառավարչական ու կազմակերպչական և այլն) գործընթացների հիմնային օրինաչափությունները, ինտեգրալ հոգեկան գործընթացների կոնցեպցիան, որում բացահայտվել, ուսումնասիրվել և ավարտուն ձևակերպում է ստացել հոգեկան գործընթացների նոր դասը՝ ինտեգրալ գործընթացները:

Այս հայեցակարգի ինտենսիվ զարգացումը Կարպովի աշխատություններում բնութագրվում է մեթոդաբանական հիմքերի ու տեսական մոտեցումների միասնությամբ, կազմակերպչական ու ինստիտուցիոնալ բանաձևման հստակությամբ, ինչն օբյեկտիվորեն վկայում է Կարպովի կողմից հիմնված ու ղեկավարվող լիիրավ ձևավորված յուրահատուկ գիտական դպրոցի մասին: Կարպովի գի-

տական աշխատությունները լայնորեն մեջբերվում են գիտական գրականության մեջ, իսկ նրա կողմից առաջարկված որոշման ընդունման ընդհանուր տեսությունը ամենամեջբերվողներից մեկն է հոգեբանության տվյալ բնագավառում:

Կարպովը նաև մշակել է սկզբունքորեն նոր մեթոդաբանական հիմք հոգեկան երևույթների ուսումնասիրման համար: Խոսքը մետահամակարգային մոտեցման մասին է, որը էապես կատարելագործում է հոգեկան ճանաչման հիմնային՝ համակարգայնության սկզբունքը: Ինչպես նշում է հեղինակը, սուբյեկտիվ ընտրության տարաբնույթ դասերի ու տիպերի ուսումնասիրությանը վերաբերող որոշման ընդունման հոգեբանական տեսության իր բոլոր աշխատությունների ցիկլում, բացի ընդհանրական թեմայից ընդհանուր է նաև մեթոդաբանան ուսումնասիրման առարկայի հետազոտության ընդհանուր մեթոդը, որը Կարպովն անվանում է որոշման ընդունման գործընթացների հետազոտության կոմպլեքսային մարտավարություն: Վերջինիս առանցքային առանձնահատկությունը նրանում համակարգային մեթոդաբանության հիմնական գաղափարների իրագործումն է՝ մասնավորեցված ու ուղղված որոշման ընդունման հոգեբանական տեսության խնդիրներին (2, 5, 8):

Որոշման ընդունման գործընթացին Ա.Կարպովն անդրադարձել է, քանի որ, ըստ նրա, գործունեության հոգեբանական տեսությունն, իր կազմում չներառելով որոշման ընդունման պրոբլեմը, ոչ այնքան բավարար և ոչ կոնստրուկտիվ է, որքան և որոշման ընդունման կոնցեպցիան՝ չհիմնվելով գործունեության հոգեբանական կառուցվածքի պատկերացման վրա: Որոշման ընդունման գործընթացի հետազոտությունը կարևորվում է նաև մեկ այլ հիմնարար հոգեբանական խնդրի մշակման համար՝ հոգեկան գործընթացների համակարգի կառուցվածքաֆունկցիոնալ կազմակերպման խնդրի և հոգեկան գործընթացների վերլուծության ամբողջական հասկացման համար: Չնայած խնդրի հիմնարար բնույթին, վերջինիս մշակվածությունը, դրան վերաբերող ուսումնասիրությունները բավարար չեն, և առանձնապես ակնառու է որոշման ընդունման գործընթացի մեթոդաբանական հետազոտությունների պակասը (3, 6):

Ըստ Կարպովի, որոշման ընդունման գործընթացի ուսումնասիրության մեջ ամենասուր տեսական հարցերից է հոգեկան գոր-

ծրնթացների ամբողջական, համակարգային գործառնության մեխանիզմների, օրինաչափությունների, նրանց յուրահատկության և փոխազդեցության կառուցվածքի հիմնահարցը: Հեղինակի համոզմամբ՝ որոշման ընդունման գործընթացներում առանձին հոգեկան գործընթացների համակարգային կազմակերպումը, դրանց ամբողջականությունն արտահայտվում է ավելի հստակ, իսկ հենց որոշման ընդունման գործընթացը իրենից ներկայացնում է ճանաչողական, հուզական և կամային գործընթացների ամբողջություն (1, 2):

Ըստ Կարպովի, որոշման ընդունման հիմնախնդրի զարգացման համար անհրաժեշտ է մշակել այնպիսի մոտեցում, որը ենթադրում է հետևյալ հարցերի լուծումը.

- որոշման ընդունման գործընթացների դերը և տեղը ընդհանուր հոգեկան գործընթացների համակարգում, նրա գործընթացային հոգեբանական կարգավիճակի որոշումը,
- որոշման ընդունման յուրահատկությունը՝ որպես գործունեության հոգեբանական համակարգի օբյեկտիվորեն անհրաժեշտ կառուցվածքային բաղադրիչ,
- գործընթացի դասային պատկանելիության հարցը՝ այսինքն՝ հոգեկան երևույթի այնպիսի դասի առանձնացում, որում այն ներառվում է որպես բաղադրիչ (6):

Եվ չնայած նրան, որ որոշման ընդունման գործընթացն իրենից ներկայացնում է ճանաչողական, հուզական և կամային գործընթացների ամբողջություն, ինչպես արդեն նշվել էր, այն չի կարող վերաբերել հոգեբանության մեջ ավանդաբար առանձնացված հոգեկան գործընթացների դասերից որևէ մեկին՝ կոգնիտիվ, կամային, հուզական, մոտիվացիոն, և ոչ դրանց միագումարին: Միևնույն ժամանակ՝ այդ գործընթացը բոլոր վերոնշյալ դասերի արդյունքն է, դրանց ինտեգրացիան գործունեության կարգավորող ֆունկցիաների կազմակերպման իրականացման ժամանակ(5, 6):

Ինտեգրացիայի դետերմինանատներն ընկած են ոչ թե ավանդական գործընթացների համակարգի ներսում, այլ դրանից դուրս՝ գործունեության կառույցում: Եվ սրանով պայմանավորված՝ որոշման ընդունումը կարող է դիտարկվել որպես գործունեության հոգեկան կարգավորման ինտեգրալ գործընթաց:

Հեղինակն առանձնացնում է ինտեգրալ գործընթացների հետևյալ յուրահատկությունները, որոնք միացնում են բոլոր բա-

դադրիչ գործընթացները որպես որակական առանձնահատուկ դաս ու միևնույն ժամանակ հեռացնում դրանք ավանդական գործընթացներից.

1. Օբյեկտիվ չափանիշների ընդհանրություն, որն ընկած է գործընթացների առանձնացման հիմքում: Այսպես, յուրաքանչյուր գործունեություն՝ արտահայտվածության տարբեր աստիճաններով, պահանջում է պլանավորման, նպատակաձևավորման, վերահսկման, որոշման ընդունման, անտիցիպացիայի և այլ գործառույթներ: Այն ներդրումը, որը դնում է յուրաքանչյուր հիմնային գործառույթ գործունեության մեջ, դրա «արդյունավետ արդյունքը» միևնույն ժամանակ որպես համակարգ ձևավորող գործոն է հանդիսանում՝ ինտեգրալ գործընթացներից յուրաքանչյուրի համար:
2. Բոլոր ինտեգրալ գործընթացները կարգավորող-մոնոֆունկցիոնալ են: Օրինակ, հիշողությունը կամ մտածողությունը անհրաժեշտ են գործնականում բոլոր կարգավորող գործառույթների համար (նպատակի ձևավորում, ինքնավերահսկողություն, որոշման ընդունում և այլն): Սրա հետ կապված կարգավորող-մոնոֆունկցիոնալությունը (խնդիրների ինվարիանտությունը), ինչի իրագործմանն ուղղված է այս կամ այն ինտեգրալ գործընթացը, կայանանավորի այս գործընթացներից յուրաքանչյուրի օպերացիոն կազմի ինվարիանտությունը: Սակայն պետք է նշել, որ այս գործընթացները, գտնվելով փոխազդեցության մեջ, լինելով միևնույն կառուցվածքի բաղադրիչ, չեն կորցնում իրենց յուրահատկությունը:
3. Նրանք գործընթացային համադրություններ են, որոնք ինտեգրացնում են իրենց մեջ շատ այլ հոգեկան գործընթացներ: Ունեն կոմպլեքսային, համադրական կազմ և պետք է հասկացվեն որպես ինտեգրալային իրենց կազմի հետերոգենության տեսանկյունից: Այս առումով՝ ինտեգրալ գործընթացները հոգեկանի ավելի բարդ երևույթներ են՝ ավանդականի հետ համեմատության մեջ:
4. Ինտեգրալ գործընթացի հաջորդ յուրահատկությունն այն է, որ դրանք բոլորն ունեն ընդհանուր յուրահատուկ ուղղվածություն: Օրինակ, ճանաչողական գործընթացները իրականացնում են և՛ կոգնիտիվ, և՛ կարգավորող գործառույթ, հու-

զական գործընթացները՝ հիմնականում գնահատումային գործառույթ: Ասել է թե այս գործընթացները հոգեկանի ենթանակարդակի կազմում են, կազմում են վերջինիս յուրահատուկ գործընթացային բովանդակությունը (2, 3, 6):

Ինտեգրալ գործընթացներից յուրաքանչյուրի արդյունավետ իրականացումը օբյեկտիվորեն ենթադրում է նրա մեջ այլ ինտեգրալ գործընթացների ներառում, դրանց հետ փոխգործակցություն: Օրինակ, որոշման ընդունումը հնարավոր չէ առանց նպատակի ձևավորման, անտիցիպացիայի և ինքնավերահսկման:

Որոշման ընդունման, մասնավորապես՝ խմբային որոշումների ընդունման գործընթացի ինտեգրատիվությունը Կարպովը դիտարկում և առավել հստակ ներկայացնում է հիերարխիկ խմբերում: Իսկ հիերարխիկ տիպի միասնական գործունեության կարգավորման ինտեգրալ գործընթացների կատեգորիայի վերլուծությունը թեև դուրս է գալիս պարիտետային խմբային որոշումների ուսումնասիրման շրջանակներից, սակայն, այնուհանդերձ, թույլ է տալիս բացահայտել այն միակ, «էկոլոգիական» մետակոնտեքստը, որում նրանք իրապես գոյություն ունեն ոչ թե որպես աբստրակցիա, այլ արդեն որպես իրականություն: Նրանում ընդգրկվելով՝ վերջիններս օրգանիկ կերպով համագործակցում են սուբյեկտիվ ընտրության ևս մի դասի՝ կառավարչական, կազմակերպչական որոշումների հետ և հանդես են գալիս որպես դրանց բաղադրիչ(4, 7):

Կարպովը նշում է հիերարխիկ խմբերի ուսումնասիրության ոլորտ տեղափոխելու համար որոշման ընդունման գեներտիկական վերլուծության առնվազն երեք էական պատճառ:

Դրանք են.

1. Պարիտետային խմբերում որոշման ընդունման գործընթացների գեներտիկական ձևավորման ընդհանուր իմաստն ու հիմնական բովանդակությունը կայանում է որպես այդպիսին՝ պարիտետայնությունից հեռացումով: Ստեղծվում են անհրաժեշտ և բավարար նախադրյալներն ու պայմանները դրա լրացման, իսկ այնուհետև՝ կազմակերպման առավել կատարելագործված՝ հիերարխիկ սկզբունքին անցմանը: Խմբային որոշումների ընդունումը պարիտետային խմբերի պայմաններում դրանց ընդհանուր գեներտիկ առաջին փուլն է: Վերջի-

նիս ավարտից հետո, սակայն, որոշման ընդունման գործընթացի զարգացումը չի ավարտվում՝ ծավալվում է քիչ այլ ծնով՝ որպես հիերարխիկ կազմակերպված որոշումների գեներալիս:

2. Կիրառական դիտանկյունից պատճառներ: Բոլոր իրական խմբերի էական ու մեծ մասը ներկայացվում է հենց նորմալ, հիերարխիկ կազմակերպված տեսքով: Նրանք առավել մեծ դերն են խաղում թե՛ իրական սոցիալական վարքի պայմաններում և թե՛ մասնագիտական գործունեության պարագայում մասնավորապես: Երկորդ դեպքում, դրանք ընդունում են կազմակերպչական որոշումների տեսք, ուսումնասիրվում են որպես կառավարման ու կազմակերպչական գործունեության մեջ որոշման ընդունման գործընթացներ:
3. Տեսական բնույթ ունեցող պատճառներ: Պարիտետային սկզբունքը հիերարխիկ խմբերում, կորցնելով իր առաջատարի կարգավիճակը, այնուամենայնիվ, նրանց զարգացմանը զուգընթաց շարունակում է գոյատևել ու կատարելագործվել: Սակայն դա տեղի է ունենում ոչ թե «ուղիղ», այլ՝ «ձևափոխված» ձևով: Այն զարգանում է որպես հիերարխիկ որոշումների «սկզբունքներից մեկը» կազմակերպչական որոշումների «կոլեգիալ բաղադրիչի» տեսքով (4, 8):

Այսպիսով, ըստ Կարպովի, խմբային որոշումների գեներալիս երկորդ փուլը նրանց ծնունդն է կազմակերպման հիերարխիկ սկզբունքի պայմաններում: Այս համատեքստում, հեղինակը տալիս է «հիերարխիկ որոշումներ» ու «կառավարչական որոշումներ» հասկացությունների հստակ փոխգործության սկզբունքներն ու այդտեղ առանձնացնում հետևյալ դրույթները.

Որոշման ընդունման գործընթացները հիերարխիկ խմբերի պայմաններում *մշտապես* և ընդ որում՝ բացարձակ օբյեկտիվորեն, ենթադրում են կառավարչական որոշումների առկայություն: Հիերարխիան և կառավարումը իմաստային փոխհամադրող հասկացություններ են: Այդ իսկ պատճառով, ըստ Կարպովի, հիերարխիկ կազմակերպման կայացումն արդեն միաժամանակ նաև կառավարչական որոշումների գործընթացների կայացում է: Որոշման ընդունման գործընթացները հիերարխիկ խմբերի պայմաններում չեն բերվում, չեն հավասարվում և նույնականանում կառավարչական ո-

որոշումներին: Ընդ որում, այստեղ պետք է տարանջատել «կառավարչական որոշումները» «կառավարչի որոշումներից»: Առաջինի պարագայում կառավարչական որոշումները իրականացվում են ոչ միայն անհատական ձևով ու ոչ միայն որպես խմբի, այլ կազմակերպության լիդերի անհատական ակտիվության արդյունք: Դրանք հաճախ ներկայացված են լինում կոլեգիալ տեսքով, իրականացվում են խմբի մի շարք անդամների կողմից՝ ղեկավարին հիերարխիկ գլխավոր կարգավիճակը թողնելով: Իսկ «կառավարչի որոշում» հասկացությունը առավել նեղ սահմանում է կառավարչական որոշման ընտրության միայն այն գործընթացները, որոնք իրականացվում են անհատական ձևով (2, 4, 7):

Հիերարարխիկ խմբերի պայմաններում հենց կառավարչական որոշումների գործընթացներում է իրականանում այն գլխավոր ու առաջատար սկզբունքը, որի համաձայն նրանք կառուցված են ուղղահայաց (սուբորդինացիոն): Յետևաբար, հենց կառավարչական որոշումներն էլ գերիշխում են ամբողջ խմբային գործառության մեջ: Ու այդ իսկ պատճառով, ինչպես պնդում է հեղինակը, որոշումների զարգացումը հիերարարխիկ խմբերում օբյեկտիվորեն զարգանում է հենց կառավարչական որոշումների գեներալիսի ուղորտում:

Ա.Կարպովը նշում է, որ կառավարչական որոշումների էության համաձայն, նրանք միաժամանակ իրենց մեջ ներառում են և՛ անհատական, և՛ կոլեգիալ ընտրության հիմնական գծերը: Ավելին, նրանցում թե՛ անհատական ընտրության և թե՛ կոլեգիալ ընտրության արտահայտվածության աստիճանը հասնում է իր առավելագույնին՝ չդադարելով լինել անհատական որոշում և միևնույն ժամանակ հանդես գալով առավել լայն բովանդակությամբ: Միաժամանակ լինելով բարդ, հիերարարխիկ կազմակերպվածություն ունեցող միացյալ որոշումների տիպ՝ նրանք չեն կարող նկարագրվել որպես այդպիսիք, քանի որ հենց հիերարարխիայի մեխանիզմի միջոցով են ներառում անհատական ընտրության առանձնահատկությունները:

Ըստ այդմ, Կարպովը տալիս է կառավարչական որոշումների ընդունման մի հիերարարխիա, որը բաղկացած է հինգ հիմնական մակրոհամակարգերից, որոնք էլ, իրենց հերթին, հետագայում դիֆֆերենցվում են այդ գործընթացների ու դրանց իրականացման ձևերի, տիպերի, տեսակների: Այդ մակարդակներն են ավտոկրա-

տիկ, ավտոնոմ, լոկալ-կոլեգիալ, ինտեգրատիվ-կոլեգիալ և մետա-կոլեգիալ(4, էջ 446):

Այս մակարդակները որոշման ընդունման անհատական և ինտերանհատական բաղադրիչների որակապես տարբեր համադրություններ են, որոշման ընդունման գործընթացի անհատական ու խմբային բաղադրիչների ինտեգրացիայի տարբեր տիպեր:

Ավտոկրատիկ որոշումները բնութագրվում են միացյալ, կոլեգիալ որոշման ընդունման մեխանիզմների իրականացմամբ, սակայն միաժամանակ դրանցում անհատական ընտրության մեխանիզմների գործառնական դերի մաքսիմիզացիայով: Ֆորմալ և բովանդակային որոշումները իրականացվում են որպես ղեկավարի անհատական ընտրություն, իսկ խումբը ոչ միայն չի մասնակցում այդ գործընթացին, այլև կորցնում է ընտրության սուբյեկտի նկատմամբ ռեֆերենտային իր կարգավիճակը: Ավտոնոմ որոշումները, նույնպես իրականանալով առավելագույնս անհատականորեն, խորապես տարբեր են ավտոկրատ որոշումներից, քանի որ նրանում առաջատար դեր են կատարում միասնական գործունեության դետերմինանտները: Սակայն այդ դետերմինանտները ներկայանում են անձնավորված տեսքով, ուստի և միջնորդավորված, ինպիցիտ տեսքով: Որոշումների այս մակարդակն ընդունվում է ղեկավարի կողմից առաջ խմբի անդամների հետ իրականացվող կոնտակտի ու իրենց նոմենկլատուրայով սրանք շատ տարատեսակ են: Ըստ Կարպովի, ստացվում է, որ ավտոնոմ որոշումների ընդունման պարագայում, ի տարբերություն ավտոկրատիկ որոշումների, անհատականի ընտրությունը ոչ թե փոխարինում է կամ ճնշում ինտերանհատականը, այլ պարզապես դոմինանտում՝ երկրորդի առկայության ու հաշվի առման պարտադիր պայմանով:

Լոկալ կոլեգիալ որոշումներում միջանձնային դետերմինանտները ձևափոխվում են էկսպլիցիտային, իսկ նրանց մշակման գործընթացն էլ ընդունում է ինտերանհատական բնույթ: Որոշման ընդունման գործընթացում պարտադիր ներառվում է որոշակի ենթախումբ, որը և ընդհանուր խմբի բաղկացուցիչ է: Ըստ էության, կարելի է ասել, որ այս մակարդակում որոշումները թեև համադրում են և՛ անհատական, և՛ ինտերանհատական ընտրության գծերը, սակայն չեն հանդիսանում ոչ մեկը և ոչ էլ մյուսը «մաքուր ձևով», այլ

ընդհանուր դիապագոն են կազմում, որը գտնվում է այս երկու որոշումների կոնտինիումում:

Ինտեգրատիվ կոլեգիալ որոշումները, ըստ Կարպովի, բնութագրվում են իրենց ռազմավարական ու բովանդակային կազմի ընդգծված յուրահատկությամբ: Ու առանձնացվում է նման որոշումների ընդունման երկու տարատեսակ. մեկում խումբը ռեալ ընդգրկվում է որոշման ընդունման գործընթացում, իսկ մյուսի դեպքում միայն խմբի որոշ անդամներ են ընդգրկվում այդ գործընթացում:

Եվ վերջապես վերջին՝ մետակոլեգիալ մակարդակն առանձնանում է որակապես: Սրա էությունն այն է, որ յուրաքանչյուր կազմակերպության ղեկավար՝ գտնվելով հիերարխիկության համակարգում, ինչ որ ավելի մեծ կառույցի շարքային անդամ է, ուստի և պարտավոր է հաշվի առնել այդ մեծ ենթակառույցի շահերը, ինչը հնարավոր է միայն վերջինիս հետ համագործակցելով ու կոնտակտներ հաստատելով: Որոշման ընդունման այս մակարդակը բնութագրվում է իր արտահայտված մարզինալությամբ, ինչի պատճառն այն է, որ տվյալ դեպքում գործ ենք ունենում *ռեֆերնտային խմբերի կրկնապատկման* երևույթի հետ (4, 6):

Այսպիսով, ըստ Կարպովի, որոշման ընդունման գործընթացի առանձնահատկությունն է խմբային ու անհատական որոշման ինտեգրված համադրումը: Իրենց խորքային մեխանիզմներով, գործունեության կազմակերպման հիերարխիկ սկզբունքի համաձայն՝ կառավարչական որոշումները կրում են անձնային, անհատական բնույթ: Կառավարչական գործունեության հիերարխիկ կազմակերպումն էլ նախևառաջ հիմնվում է կառավարման համաենթակա մակարդակների վրա, որոնք էլ իրենցից ներկայացնում են սկայար շղթաներ: Կառավարման իդեալական մեխանիզմը ենթադրում է, որ յուրաքանչյուր մակարդակ ունի սեփական խնդիրները, սեփական պատասխանատվությունն ու սեփական պարտականությունները, այն է թե՛ սեփական, անհատական որոշումները: Անգամ այս կամ այն աշխատանքների պարտականությունները փոխանցելով այլոց, մենեջերն այսպես թե այնպես ղեկավարվում է «բացարձակ պատասխանատվության սկզբունքով» (7):

Կարպովն առանձնացրել էր նաև կոզնիտնիվ ու ինտեգրալ գործընթացների կազմակերպման գլխավոր սկզբունքները: Եթե առաջինի պարագայում դա հիերարխիկ սկզբունքն է, իսկ այդ գոր-

ծընթացների համակարգում առաջատար մակարդակը զբաղեցնում է մտածողությունը, ապա երկրորդի պարագայում մենք գործունենք ավելի պարզ կոնստրուկտի հետ: Ինտեգրալ գործընթացները, այսպես ասած, պարիտետային են իրենց նշանակությամբ և հնարավորության դեպքում դառնում են կարգավորող ենթահամակարգի գործառնման գլխավոր մակարդակ և հիերարխիկորեն իրենց են ենթարկում մյուս բոլոր գործընթացները: Ինտեգրալ գործընթացների կազմակերպումը ենթարկվում է արդեն ոչ թե հիերարխիկ, այլ՝ հետերարխիկ սկզբունքին (6):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Карпов А.В.** Исследование психологической структуры процессов принятия решения // Проблемы практического мышления. Ярославль, 1985.
2. **Карпов А.В.** Методологические основы психологии принятия решения. Яросл. Гос. Ун-т. Ярославль, 1999., 232с.
3. **Карпов А.В.** Психологический анализ процессов принятия решения // Психологический анализ деятельности. Ярославль, 1982.
4. **Карпов А.В.** Психология групповых решений. Институт психологии РАН, Москва 2000.
5. **Карпов А.В.** Психология принятия решения. Институт психологии РАН, Яросл. Гос. Ун-т. Ярославль, 2003., 240с.
6. **Карпов А.В.** Психология принятия решения в профессиональной деятельности, Ярославль, 1991., 146с.
7. **Карпов А.В., Маркова Е.В.** Психология стилей управленческих решений /учебное пособие/ Институт «Открытое общество», Ярославль, 2003г, 108 с
8. **Карпов А.В., Скитяева И.М.** Понятия метакогнитивных и интегративных процессов как компоненты психологической теории принятия решения // Психологические проблемы принятия решения. Под ред. А.В. Карпова. Ярославль, 2002.



Տառյաննա Կորնիլովան (1954թ.)

ծնվել է ՌԴ Արմավիր քաղաքում: 1976թ. զերազանացությանը ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի (ՄՊՀ) հոգեբանության բաժինը, իսկ 1976-1980թթ. ուսանել է ՄՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտուրայում: Գիտական աշխատանքի առաջին տարիները անցել են Օ. Կ. Տիխոմիրովի ղեկավարության ներքո: 1980թ. նա հաջողությամբ պաշտպանել է թեկանածուական ատենախոսությունը, որը նվիրված է եղել համակարգչային տվյալների օգտագործման և այլ մարդու հետ հաղորդակցման պայմաններում մտային խնդիրների լուծման յուրահատկություններին: Այնտեղ նա Լ.Ս. Վիգոտսկու պատմա-մշակութային տեսության դիրքերից հիմնավորել է մտածողության վերածակվորման ուղղվածությունը նոր պատմական իրավիճակում (համակարգչային միջոցների օգտագործումը): 1980-1990թթ. աշխատել է ընդհանուր հոգեբանության ամբիոնում: Այդ տարիներին համակարգչայնացման հոգեբանական հետևանքների

և մտածողության հետազոտությունների արդյունքները հրատարակվել են Օ.Կ. Տիխոմիրովի հետ համատեղ մենագրությունում:

Կորնիլովան մշակել է նոր տեսական դասընթաց՝ «Փորձնական մեթոդը հոգեբանական հետազոտություններում», որը դրվել է փորձնական հոգեբանության ռուսական առաջին դասագրքերի հիմքում (Введение в психологический эксперимент. М., 1997, 2001; Экспериментальная психология. М., 2002): Այս դասընթացը նա հիմնա էլ կարդում է ապագա հոգեբաններին: 1990-2004թթ. Կորնիլովան աշխատել է դասավանդման մեթոդիկայի, մանկավարժության և հոգեբանության ամբիոնում, 1994թ.-ից դոցենտի, իսկ 2000թ.-ից պրոֆեսորի կոչումով: Նրա հիմնական գիտական հետաքրքրությունները այս շրջանում իրենց արտացոլում են գտել «Հոգեբանական մեթոդները բարձրագույն դպրոցի պրակտիկայում» (Մ., 2003թ.) և «Որոշման ընդունման հոգեբանություն և ռիսկի հոգեբանական մոդելները» հատուկ կուրսերում: Որոշում կայացնելիս մարդու ինտելեկտուալ ռազմավարությունների և որոշման անձնային և դրդապատճառային կարգավորման հետազոտությունների հիման վրա Կորնիլովան մշակել է համահոգեբանական նոր գիտական ուղղություն՝ անորոշության պայմաններում մարդու որոշման կայացման հոգեբանությունը: 1999թ. հաջողությամբ պաշտպանած «Ինտելեկտուալ որոշումների հոգեբանական կարգավորումը» դոկտորական ատենախոսությունում նա հիմնավորել է մի ամբողջական հոգեբանական հայեցակարգ՝ ինտելեկտուալ որոշումների կայացման գործառնությանին-աստիճանական կարգավորման մասին: Նա առաջարկել է բացության սկզբունքը նման համակարգի հաս-

կացման համար և փակ խնդրի լուծման պայմաններում որպես ընտրության հոգեբանական իրականության սահմանազատող դարձելիության չափանիշը:

Գիտակցված և չգիտակցված, անձնային-դրդապատճառային և մտային կարգավորումը ներկայացվում են փոխներգործող գործընթացների աստիճանական կարգավորման հայեցակարգում, որն ընկած է որոշման ընդունման հիմքում, ինչով անձը »կերտում է իրեն«: Գեղինակային մշակումների հիման վրա նրանում կոնկրետացված են որոշման ընդունման՝ որպես ընտրության բազմաթիվ հոգեբանական մեխանիզմներ, որոնց միջոցով մարդը հաղթահարում է անորոշությունը:

2005թ.-ից մինչ օրս հոգեբանական գիտությունների դոկտոր Տ.Վ. Կորնիլովան ՄՊՀ Ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր է:

Նրա հետազոտությունների գործնական կիրառության ոլորտները այնքան բազմազան են, որքան այն իրավիճակները, որոնցում սուբյեկտը որոշում-

ներ է ընդունում: Չեռներեցության և բարձրագույն դպրոցի հոգեբանություն, իրավաբանների կողմից որոշումների ընդունում և մենեջերների կողմից ռիսկի ընկալում, դեռահասների ասոցիալ վարքի ռիսկային նախադրյալները և շաքարային դիաբեթով հիվանդ մարդկանց «կյանքի որակի» անձնային կարգավորումը. Սրանք են նրա հետազոտությունների գործնական կիրառման ոլորտների մի մասը միայն, որոնք տեղ են գտել նրա հրատարակություններում:

Նա ՄՊՀ Գոգեբանության ֆակուլտետի և ՌԳԱ Գոգեբանության ինստիտուտի դոկտորական ատենախոսությունների պաշտպանության խորհրդի անդամ է:

ՀՈԳԵԿԱՆԻ ԴԻՆԱՄԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՍՑ

Կազմեց Դ.Ռ. Հայրապետյանը

Որոշման ընդունման հոգեբանական ուսումնասիրման իր մոտեցման շարադրումը Տ.Վ. Կորնիլովան անհրաժեշտ է համարում սկսել «Որոշման ընդունման հոգեբանության» հիմնահարցերի մեթոդաբանական վերլուծության մի քանի հիմնարար սկզբունքներից ելնելով: Նախ և առաջ այս ոլորտը դարձել է տարբեր գիտական ոլորտներում ձևավորված գիտելիքների իմտեգրման դաշտ և հոգեբանական մոտեցումները դանդաղորեն են առանձնացել ոչ հոգեբանականներից՝ հնարավորություն ընձեռելով կառուցել որոշման

ընդունման հոգեբանական մոդելներ: Ինչպես նաև որոշման ընդունման հոգեբանական կարգավորումը միջնորդավորող գործընթացները կապված են հոգեբանական իրականության տարբեր մակարդակների հետ: Բոլոր մոտեցումները միավորող միակ հիմքը «այլընտրանքներից ընտրությունն է», որի միջոցով սուբյեկտը հաղթահարում է իրավիճակի անորոշությունը: Ըստ Տ. Կորնիլովայի իրավիճակն ավելի է բարդանում նրանով, որ անորոշությունն իր էությամբ հոգեբանական եզրույթ չէ [4, 11]:

Չիմնախնդրի մեթոդաբանական վերլուծությունը պահանջում է որոշման ընդունման հասկացությունների ամբողջական համակարգի կառուցում և համադրում ժամանակակից հոգեբանության հիմնական սկզբունքների հետ: Իսկ որպես այդպիսիք Տ. Կորնիլովան առանձնացնում է ակտիվության, գործունեության վրա հենված մոտեցման, համակարգայնության, զարգացման սկզբունքները:

Ինչպես նշում է Տ.Կորնիլովան որոշման ընդունման հետազոտությունները մինչ վերջերս կառուցվում էին գործունեության տեսության հետ կապված մեկնաբանողական սխեմաներից դուրս: Սակայն հատկապես անձնային և ինտելեկտուալ միջնորդավորված որոշման ընդունման ուսումնասիրման ժամանակ անհրաժեշտություն առաջացավ կոնկրետացնել անձի՝ որպես գործունեության և ճանաչման սուբյեկտի, ակտիվության դերը: Այս համատեքստում որոշման ընդունման գործընթացների հասկացման համար կենտրոնական դարձավ *դրդապատճառի* կոնստրուկտը:

Որոշման ընդունման անձնային-դրդապատճառային կարգավորման իր հետազոտություններում Տ.Կորնիլովան ձևակերպում է հոգեբանական նոր հասկացություն՝ *դինամիկ կարգավորող համակարգերը*՝ որպես յուրահատուկ նորագոյացում, որը մասնակի ազդեցություն է գործում սուբյեկտի նախալուծումների տարբեր փուլերի և վերջնական ընտրության վրա [7]:

«Ինչպես միտքը ծնվում է մեր գիտակցության դրդապատճառային ոլորտից, այնպես էլ սուբյեկտի ընտրությունը, որը հենվում է սեփական անձնային-ինտելեկտուալ ներուժի ակտուալացման վրա, հոգեբանորեն իրականացվում է իմաստային գոյացությունների իրագործման և դրանց մետաղեկավարման ժամանակ», - նշում է Տ. Կորնիլովան [4, էջ 12-13]:

Այս դրույթն արդեն իսկ ենթադրում է որոշման ընդունման գործընթացների ուսումնասիրման մեթոդի փոփոխություն՝ անձնային-կարգավորող պրոֆիլների սովորական կառուցումից դեպի ընտրության նախապատրաստման դիմամիկ մասնակի անձնային-դրդապատճառային նորագոյացումների՝ որպես սուբյեկտիվ անորոշության հաղթահարման վերջնական փուլի ուսումնասիրման: Սրանով իսկ Տ.Կորնիլովան ստեղծում է Ա.Կարպովի հիմնարար դրույթների քննադատական այլընտրանք՝ կասկածի տակ դնելով կարգավորող ինվարիանտի սկզբունքը և հնարավորություն ընձեռելով որոշման ընդունման գործընթացների ուսումնասիրման այլընտրանքային մոտեցման՝ որոշման ընդունման ոչ թե «կոշտ», այլ դիմամիկ համակարգերի, այն հոգկան միջնորդավորող գործընթացների ոչ թե փակ, այլ բաց հիերարխիայի հետազոտությունների:

Որոշման ընդունման մեթոդաբանական հարցերի քննարկման շարքում հաջորդ սկզբունքը, որը Տ.Կորնիլովան քննարկում է ակտիվության սկզբունքն է:

Անորոշության պայմանները ինտելեկտուալ ռազմավարությունների միջոցով հաղթահարելու սուբյեկտի ակտիվությունը փորձարարական տեսանկյունից առավել բազմակողմանիորեն է ուսումնասիրված: Սակայն անջատելով սուբյեկտի ակտիվության ինքնակարգավորման ինտելեկտուալ և անձնային բաղադրիչները մենք հրաժարվում ենք հոգեբանական վերլուծության այնպիսի միավորների առանձնացումից, որոնցում ներկայացված կլինեն ուսումնասիրվող իրողության բոլոր համակարգային առանձնահատկությունները: Եվ սա էլ չափազանց քիչ է ուսումնասիրված հոգեբանական տեսանկյունից:

Ա. Կարպովի հայեցակարգում ինտեգրացնող մեխանիզմը մետակոգնիտիվ կարգավորման համակարգն է: Ի տարբերություն սրա Լ.Վիգոտսկու և Ա.Լեոնտևի դպրոցում ինտեգրացիայի բարձրագույն մակարդակը գործունեության միջնորդավորումն է: Սա ինքնակարգավորման լիովին այլ հասկացում է, որն էլ ստիպում է նորովի ձևակերպել հետազոտական խնդիրը:

Որոշման ընդունման իրավիճակները ոչ միայն ակտուալիզացնում են ընտրության բաղադրիչների անձնային նշանակությունը, այլև փոփոխում են այն, քանի որ կապված են որոշման սուբյեկ-

տի անձնային զարգացման հետ: Սա նշանակում է, որ ընտրության գործընթացում մասնակցում են իմաստային նորագոյացումները, այլ ոչ թե ընտրության ավանդաբար առանձնացվող ռացիոնալ հիմքերը և ոչ էլ ռազմավարությունների ռեֆլեքսիվ կարգավորումը:

Տ. Կորնիլովայի կողմից զարգացվող տեսությունում սուբյեկտի անձնային ակտիվությունը որոշման ընդունման ակտուալզենեզի կենտրոնական օղակն է: Այն արտացոլվում է դարձելիության վարկածում. որոշման ընդունման հոգեբանական կայացման պայման է հնարավոր ընտրությունների «համեմատումը» անձնային «ԵՍ»-ի հետ, ուր գնահատվում են ոչ միայն այլընտրանքները, այլև դրանց սուբյեկտիվ ընդունելիությունը, կամ այն անձնային «գինը» որը սուբյեկտը պատրաստ է (կամ պատրաստ չէ) վճարել, վերջնական ընտրությունը ընդունելով որպես իր անձնային ընտրություն: Եթե անձնային «ԵՍ»-ի առանցքի շուրջ այլընտրանքի շարժման դարձելիությունը կորում է, ապա որոշումը արդեն կայացել է կամ էլ որոշման ընդունման ակտ տեղի չի ունեցել: Ընտրության արդյունքում անձնային «ԵՍ»-ի փոփոխությունն է պայմանավորում զարգացման սկզբունքը և հասկանալի է դառնում արտահայտությունը՝ մարդն ինքն իրեն կերտում է իր որոշումներով [4, 8, 10]:

Իր տեսության սահմաններում Տ. Կորնիլովան նշում է, որ որպես որոշման ընդունման ակտերի հոգեբանական կարգավորման բնութագրիչ չի կարելի նշել «ադապտիվությունը», որով ավելի շուտ օժտված են պարտադիր որոշումները: Իսկ ազատ որոշումները, որոնք ենթադրում են ինտելեկտուալ և անձնային ակտիվություն, կարող են նույնիսկ հակասել ադապտիվության սկզբունքին: Նախ և առաջ որոշման ընդունման իրավիճակին բնորոշ «ռիսկի ընդունումը» տարամիտում է ադապտիվությանը և երկրորդ, այն կապված է ազատ ընտրությունների վերիրավիճակայնության սկզբունքի հետ:

Տ. Կորնիլովան, զարգացնելով որոշումների ընդունման հոգեբանության իր հայեցակարգը, գիտական քննարկման դաշտ է ներմուծում որոշումների յուրահատուկ մի դաս՝ ինտելեկտուալ որոշումները՝ ի թիվս կամային, հուզական և այլ տեսակների:

Առկա այլընտրանքներից այն ընտրությունները, որն իրագործում է մտածող (այսինքն իրավիճակի իմաստավորման արդյունքում ընտրության հիմքը փոխող) մարդը կարող են մեկնաբանվել

որպես *ինտելեկտուալ*: Ըստ գործունեության բնույթի դասակարգվող ցանկացած որոշում կարող է վերլուծվել, թե որքանով է այն միջնորդավորվել ինտելեկտուալ կողմնորոշիչներով և գիտակցված ու անձնային կարգավորման գործընթացներով: Ինտելեկտուալ միջնորդավորված որոշումները խոսում են որոշման ընդունման գործունեության, նրա գործընթացների և փուլերի մասին՝ դրանով իսկ ենթադրելով նրանց անձնային-դրդապատճառային կարգավորումը: Այսպիսով՝ ըստ Ս. Կորնիլովայի, որոշման ընդունման հիմնական նպատակը, անկախ նրանից, թե այլ նպատակային գոյացությունների ինչպիսի հիերարխիայում է նա դասվում սուբյեկտի կողմից, միշտ բնութագրվում է նրանով, որ գիտակցված է և անձնային ընդունված:

Այսպիսով Ս. Կորնիլովան սահմանում է, որ որոշման ընդունման հոգեբանական տեսության կառուցումը պետք է հենվի ինտելեկտուալ միջնորդավորված որոշումների ընդունման փորձարարական հետազոտությունների տվյալների ընդհանրացման վրա: Այստեղ էական է «դինամիկ կարգավորող համակարգերի» գեներացիա և գործառության հիմնահարցերի ուսումնասիրումը, ոչ միայն գործառության ժամանակային ասպեկտի, այլև այլ հոգեբանական գոյացությունների հետ փոխհարաբերությունների առումով [6, 7]:

Ս. Կորնիլովան գտնում է, որ չպետք է խորացնել **«ռացիոնալություն»** և **«ինտելեկտուալություն»** հասկացությունների միջև առկա եզրույթային և հաճախ թվացյալ անդունդը, այլ փորձել հայտնաբերել նույն երևույթի բացատրմանն ուղղված այս երկու երևույթների ընդհանրությունները: Այդ ընդհանրության հայտնաբերման ուղիներից մեկն էլ որոշման ընդունման ժամանակ **ռիսկի** հասկացության վերլուծությունն է: *Սուբյեկտիվ անորոշությունն*, ըստ Կորնիլովայի, ռիսկի և անձից ինտելեկտուալ որոշումներ պահանջող իրավիճակների առաջացման խաչմերուկն է:

Ինտելեկտուալ որոշումների մշակման ռացիոնալ պահն էլ հենց լուծումների իրողությանը ներկայացվող ենթադրվող պահանջների նվազեցումն է և մտային պատկերացման տեսանկյունից այլընտրանքների շարժունության ավելացումը: Այստեղ, ելնելով դարձելիության սկզբունքից որոշման ընդունման այլընտրանքների գնահատումը ձեռք է բերում մեկ այլ մոդուս՝ ոչ միայն «հնարավորանհնար», այլև «իմանալի-անիմանալի» [7, 9]:

Մինչ որոշման ընդունման դրդապատճառային բնույթի մեկնաբանման իր հայեցակարգի շարադրումը, Տ. Կորնիլովան հետևողականորեն վերլուծում է մինչ այդ հայտնի բոլոր հնարավոր մոտեցումները: Հոմենոստազի և դրդապատճառների կոգնիտիվ ծագման գաղափարները լավագույնս ամփոփող դասական մոտեցում է Հ. Սայմոնի *բավարարվածության* տեսությունը, որը այս ձեռնարկում արդեն իսկ մանրամասնորեն քննարկվել է: Հարկ է նշել, որ հենց Հ. Սայմոնն է առաջարկել դիտարկել ինտելեկտը որպես սահմանափակ ռեսուրս և մարդիկ ընդունում են այն որոշումները որոնք ոչ թե ամենալավագույնն են, այլ նրանք, որոնք բավարարում են բավարարման նվազագույն պահանջներին: Սակայն, ինչպես նշում է Տ. Կորնիլովան, դրդապատճառայնության գործոնը ոչ մի տեսությունում այնքան կարևոր տեղ չի գրավում, ինչպես գործունեության տեսությունում:

Գործունեության տեսության դրույթներից ելնելով՝ որոշման ընդունման անձնային-դրդապատճառային կարգավորման բազմաձևակարգակության և հետերարխիկության գաղափարների զարգացումը սուբյեկտիվ անորոշության այլ գործոնների թվում անհրաժեշտություն է առաջացնում ուսումնասիրել անձի կոգնիտիվ ոճերը՝ որպես ներքին պայմանների փոփոխականներ [2, 7]:

Փորձարարական հետազոտությունների հիմնական արդյունքների համակարգային վերլուծությունը վկայում է, որ.

1. որոշման ընդունման **գործընթացային կառավարման** վրա մեծ ազդեցություն են ունենում այնպիսի դրդապատճառներ, ինչպիսիք են *մեղավորության զգացումը* (որպես անհաջողությունների հիմնական պատճառ սեփական գործողությունները տեսնելը), *նպատակին հասնելու հաստատականությունը և ինքնաձանաչման մակարդակը*: Ընտրության **առարկայական ուղղվածությունը** պայմանավորվում է այլ դրդապատճառներով՝ *ինքնուրույնություն, ազրեսիա*, և յուրահատուկ դրդապատճառ՝ *ռիսկի պատրաստվածություն*:
2. *մեղավորության արտահայտված զգացմամբ* հետազոտվողները առավել շատ ջանքեր են գործադրում որոշման ընդունման առաջին քայլի քննարկման վրա, իսկ *նպատակին հասնելու հաստատական* հետազոտվողները վերջնական ընտրությունը հիմնավորելու վրա:

3. որոշման ընդունման դրդապատճառային կարգավորման դի-
նամիկ համակարգերի կայացման վրա մասնակիորեն մնան
ազդեցություն են ունենում *ռիսկի պատրաստվածության, ազ-
րեսիայի և գերակայման* դրդապատճառները [7 էջ 199-200]:

Ինչպես նաև խորքային դրդապատճառային գործոններից *հա-
ջողության, ձեռքբերման դրդապատճառը* հանդես է գալիս որպես
որոշման ընդունման ներքին ինքնակարգավորման կարևորագույն
գործոն:

Որոշման ընդունման հոգեբանության ոլորտում չուսումնա-
սիրված և գիտականորեն չյուրացված է մնում ռեֆլեքսիվ և ին-
տուիտիվ գործընթացների հարաբերակցության հիմնահարցը: Գի-
տակցվող չափանիշները այսբերգի միայն տեսանելի մասն են:
Սուբյեկտի կողմից որոշման ընդունման ռազմավարության մու-
նիսկ առավելագույն ռեֆլեքսիայի պարագայում, պարզ չէ, թե էլ
ինչպիսի չափանիշներ են ազդում չլինելով գիտակցված, սակայն
ներկայացված լինելով իմաստային դաշտում [3]:

Մեծ է նաև Տ.Կորնիլովայի դերը որոշման ընդունման հուսալի
և վալիդ հոգեդիագնոստիկական մեթոդների մշակման գործում:
Այս ոլորտում նրա մենամեծ ձեռքբերումը և ներդրումը կարող ենք
համարել «Որոշման ընդունման անձնային գործոններ» (ՂՓՔ-25)
թեստի ստեղծումը: Տեսականորեն հիմնավորելով «ռացիոնալութ-
յունը» և «ռիսկի պատրաստվածությունը»՝ որպես որոշման ընդուն-
ման անձնային գործոններ, նա այս երկու գործոնների չափման
համար ստեղծում է 25 հարցից բաղկացած, գործածության և արդ-
յունքների հաշվարկման գործընթացում բավականին պրակտիկ
թեստային հարցարան:

Թեստի ստեղծման սկզբնական փուլում փորձարկվել են մե-
թոդիկայի երկու՝ ՂՓՔ-32 և ՂՓՔ-38 տարբերակներ՝ նրանցում պա-
րունակվող հարցադրումների քանակով պայմանավորված: Մեթո-
դիկաներն անցել են բովանդակային և կոնստրուկտային վալիդա-
ցում, ինչպես նաև ստուգվել է հուսալիություն համաձայնեցվա-
ծությունը և կայունությունը: Մեթոդիկայի երկու տարատեսակների
փորձարկման արդյունքների և Կետտելի հարցարանի տվյալների
միջև իրականացվել է կորելացիոն վերլուծություն: «*Ռիսկի պատ-
րաստվածություն*» սանդղակը բարձր կորելացվել է «ես»-ի ուժ՝ C
սանդղակ, ($r=0,36$, $\alpha=0,05$) և «*Գերակայման հակվածություն*»՝ E

սանդղակ, ($p=0,71$, $\alpha=0,001$) գործոնների հետ, իսկ «*ռացիոնալություն*» սանդղակը *ինտելեկտի* մակարդակի՝ B սանդղակ ($p=0,67$, $\alpha=0,05$) և *կասկածի*՝ L սանդղակ, ($p=0,52$, $\alpha=0,05$) գործոնների հետ:

Տվյալները ցույց են տվել, որ երկու տարբերակներն էլ «ռիսկայնության» և «ռացիոնալության»՝ որպես որոշման ընդունման գործընթացների կարգավորման անձային հատկությունների դիագնոստիկայի վալիդ և հուսալի գործիքներ են: Նախապատրաստվել է նաև ЛФР-25-ը, որն առավել համապատասխանում է էքսպերս դիագնոստիկայի պահանջներին և ունի պատասխանների առավել պարզ եռաբաղադրիչ կառուցվածք՝ սկզբնական ինը բալանոցի փոխարեն [1]:

Անորոշության պայմանների ընդունումը՝ անորոշության տուլերանտությունը, ոչ միայն որոշման ընդունման սուբյեկտի խնդիրն է, այլև որոշման գործընթացը ուսումնասիրող հոգեբանի նպատակը: Որոշման ընդունման հոգեբանական համակարգերի անորոշության և բաց լինելու սկզբունքի ընդունումը ուղղորդում է այլ հետազոտական մոտեցումների: Տ. Կորնիլովան գտնում է, որ որոշման ընդունման հոգեբանական միջնորդավորման ձևերի բաց լինելն ու բազմակիությունը և նրանց ինքնակարգավորման դինամիկ բնույթը ընտրության մեխանիզմների ֆունկցիոնալ հիերարխիայի հոգեդիագնոստիկայի խնդիրն են առաջադրում: Կորնիլովան նշում է, որ տարբեր հեղինակներ սովորաբար ֆիքսում են լուծումների նախօրոք առանձնցված դաս, մինչդեռ հոգեբանական վերլուծության խնդիրն է հավաստել կարգավորման ներկա ձևավորված տեսակը նրանում ընդգրկված գործընթացներով, որոնք էլ այդ դինամիկ հիերարխիայի առանձնահատկություններն են պայմանավորում:

Գրականություն

1. **Корнилова Т. В.** Диагностика “личностных факторов” принятия решений// Вопросы психологии, 1994. № 6, с. 99-109
2. **Корнилова Т.В.** Диагностика мотивации и готовности к риску (монография). М.: Институт психологии РАН, 1997.

3. **Корнилова Т.В.** Интуиция и рациональность в уровневой регуляции принятия решений//Вопросы психологии, 2006. №2 (совместно с О.В. Степаносовой и Е.Л. Григоренко).
4. **Корнилова Т.В.** Методологические проблемы психологии принятия решений//Психологический журнал, 2005, том 26, №1 с. 7-17
5. **Корнилова Т.В.** Многомерность фактора субъективного риска (в вербальных ситуациях принятия решений)//Психологический журнал, 1998. №6.
6. **Корнилова Т.В.** Многоуровневая личностная регуляция принятия решений //Вестник РГНФ. 1996. №2.
7. **Корнилова Т.В.** Мотивационная регуляция принятия решений: современные представления. Современная психология мотивации//Под ред. Д.А. Леонтьева. М.: Смысл, 2002.
8. **Корнилова Т.В.** О функциональной регуляции принятия решений//Психологический журнал, 1997. №5.
9. **Корнилова Т.В.** Понятие “риска”, “неопределенности” и принятия решений в психологических и непсихологических моделях выбора//Управление риском//1997 N3.
10. **Корнилова Т.В.** Принятие интеллектуальных решений и креативность: принцип открытости динамических регулятивных систем//Современная психология мышления: смысл в познании. Москва: Смысл, 2008. стр. 28-30
11. **Корнилова Т.В.** Психология риска и принятия решений. Москва, Аспект Пресс, 2003. 286 с.